

THE LIBRARY

Լ Է Օ

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

№ 1

9(47.925)

4

Հ ա յ

Հ ա յ ը ե ն ի ք


A 579

•••••

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Յպարան Ն. Ազանեանի, Պօլից. 7

1915





ԲԺԻՇԿ ԱՐՏԱՇԷՍ ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ



Իմ ողբացեալ <sup>1)</sup> սիրելի բարեկամ բժիշկ Արսաշես Բուդուղեանը վաղուց, դեռ 1900-ական բուսականների կեսից, գիտէր որ ես աշխատում եմ մի շատ բնդարձակ Հայոց Պատմութեան վրայ եւ շարունակ յորդորում էր որ նախ քան այդ աշխատութիւնը վերջացնելը ես գրեմ մի աւելի համառօտ Հայոց Պատմութիւն ժողովրդական լայն թաւերի նախար:

Երկար ժամանակ ես դժուարանում էի կատարել այդ առաջարկութիւնը:

Վերջին տարիներս, երբ խեղճ բարեկամիս ցաւերը գնալով անհանելի դարձան եւ հիւանդութիւնն արդէն ցոյց էր տալիս ինքու վախճանի մօտիկութիւնը, նա դարձեալ սկսեց արժարձել վառ ցանկութիւն հրատարակելու իր հաշուով այնպիսի գրքոյկներ, որոնք ծանօթացնէին մեր ժողովուրդը նրա անցեալին, Իմ ժողովրդասէր բարեկամը լաւ գիտէր, ի-

<sup>1)</sup> Վախճանուհի 1915 թ. ապրիլի 10-ին.

հարկէ, որ միայն իր անցեալը ճանաչող ժողովուրդն է կարող գիտակից եւ ինքնուրոյն լինել իր պատմական կեանքի մէջ:

Բուզուղեանը մեծավառ մի ոգեւորութիւն էր, որին տրուած էր ուրիշներին եւս վարակելու կարողութիւնը: Եւ յանձն առայ զրել ոչ թէ մի սխտեմասիկ պատմութիւն, այլ ամբողջացրած տեսութիւններ հայոց պատմութիւնից:

Այս զբոյլը առաջինն է այդ շարքի մէջ, որ եւ սպւում է բժ. Բուզուղեանի ծախսով:

Ամբողջ շարքը, որ եւ անուանում եմ «Գրադարան Հայ Պատմութեան», բաղկացած կը լինի հետեւեալ զբերից.

1. Հայ Հայրենիք
2. Հայ Ժողովուրդը
3. Հայ Իշխանութիւնը
4. Հայ Պատգամներ
5. Հայ Միտք
6. Հայ Գագրը
- 7—8. Հայ Գրականութիւնը
9. Հայ Արուեստ
10. Հայ Գաղութներ
11. Հայ Հերոսներ
12. Հայ Մամուլը
13. Հայ Տառապանք
14. Հայ Ազատամներ:

## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Դուք ծնուել էք մի գիւղում կամ մի քաղաքում: Այդտեղ են օրօրել ձեր օրօրոցը, այդտեղ էք դուք առաջին անգամ սաքի կանգնել: Եղել էք մանուկ, եղել էք պատանի, երիտասարդ:

Այդ փոքրիկ տեղը, աշխարհի այդ աննշան անկիւնը ձեր հայրենիքն է:

Դուք սիրում էք նրան: Սիրում էք՝ որքան էլ աղքատ ու խեղճ լինի նա: Ով մինչև կեանքի վերջն ապրում է իր հայրենիքում, նա մինչև վերջն էլ չէ կշտանում նրա քաղցրութիւնից:

Իսկ ով թողնում է հայրենիքը, հեռա-  
նում է երկար ժամանակով կամ ընդ  
միշտ, նա տանում է իր հետ հայրե-  
նիքի կարօտը...

Այդ նոյն այն սէրն է, հզօր ու ան-  
մոռանալի: Կարօտը այնքան ուժեղ է,  
որ կարող է նոյն իսկ հիւանդացնել,  
սպանել մարդուն: Իսկ որոնք դիմա-  
նում են կարօտին մոռանում են եր-  
կար ժամանակ, դարձեալ էլի հայրե-  
նիքը նրանց մտքի մէջ մնում է ինչպէս  
մի սուրբ զգացմունք, մի անմահական  
հմայք: Տասնեակ տարիներ հեռու մնա-  
լուց յետոյ էլ այդպիսին ուզում է գոնէ  
մի անգամ տեսնել հայրենիքը, վայելի  
նրա քաղցրութիւնը:

Եւ, իհարկէ, սիրելով ձեր հայրե-  
նիքը, դուք ցանկանում էք նրան ամեն  
բարիք. դուք ուզում էք որ նա երջա-  
նիկ լինի և դրա համար շէք խնայում  
ձեր աջակցութիւնը, ձեր օգնութիւնը:

Ամեն մարդ հայրենասէր է:

Բայց դուք մի անհատ էք: Ձեր  
հայրենի զիւղում կամ քաղաքում ձեզ  
պէս են բոլոր անհատները: Եւ անհա

դուրս եկաւ որ ամբողջ համայնքը մի  
կնոյն զգացմունքն ունի զէպի նոյն  
այդ ձեր զիւզը կամ քաղաքը:

Համայնքները կազմոււմ են ազգ: Եւ  
հայրենասիրութեան միկնոյն զգաց-  
մունքը յատուկ է արդէն այն ամբողջ  
զանգուածին, որ կոչոււմ է ազգ: Յի-  
րոյ առարկայ է դառնոււմ ամբողջ այն  
երկիրը, ուր ապրոււմ է այդ ազգը:  
Ինչպէս որ ձեր ընտանիքի իւրաքան-  
չիւր անդամը սիրոււմ է այն զիւզը կամ  
քաղաքը, ուր նա ապրոււմ է կամ ապ-  
րել է, այնպէս էլ ազգի իւրաքանչիւր  
անդամը սէր ունի զէպի ընդհանուր  
հայրենիքը:

Այսպէս է եղել մարդը միշտ, սկըզ-  
բից մինչև հիմա:



Քայց հայրենիքը ճանաչել — հայրե-  
նասիրութեան պարտք չէ միայն:

Ամեն մարդ պարտաւոր է ճանաչել  
ինքն իրան, իմանալ թէ ինչու ինքն  
այսպէս է և ոչ թէ մի ուրիշ կերպ:

Զուր չէ ասած թէ հողն է մարդու  
ծնող մայրը: Գիտութիւնն էլ այդ է  
հաստատում. մարդը, ասում է նա, իր  
երկրի, իր աշխարհագրական միջավայ-  
րի արդիւնքն է:


Երկիրն է, որ ազդում է հարիւրա-  
ւոր ու հազարաւոր տարիների ընթաց-  
քում, կազմակերպում է ոչ միայն  
անհատների, այլ և մեծամեծ խմբում-  
ների, այսինքն ժողովրդների բնա-  
ւորութիւնը, ամբողջ հոգեբանութիւ-  
նը:

Երկիրն է որ իր կլիմայական պայ-  
մաններով, իր աշխարհագրական դիր-  
քով ճակատագիր է ստեղծում ազգերի  
համար: Ազգ ճանաչել առանց նրա եր-  
կիրը ճանաչելու անհնարին է:

Ինչու է մարդը այս տնտեսական  
ձևին հետևում և ոչ թէ մի ուրիշ ձևի,  
ինչու է նա այս վիճակի մէջ և ոչ թէ  
մի այլ, ինչու է նրա պատմութիւնն  
այսպէս ընթացել և ոչ թէ մի ուրիշ  
կերպ — այս բոլորին պատասխանում է  
հայրենիքը:

«Ծանիր գրեզ»։ Ճանաչիր քեզ։ Այս  
հին, շատ հին խօսք է։

Եթէ իմաստութիւններ շատ կան  
աշխարհի վրայ, սա իմաստութիւն-  
ներ ի իմաստութիւնն է։



Ա.

ԻՆՉ Է ՊԱՏՄՈՒՄ ՄԵՐ ՀՈՂԸ .

Երկիրն էլ, երկիրնքն էլ լեզու ունին, իրանց առանձին լեզուն, և պատմում են այդ լեզուով թէ ինչ են իրանք:

Թողնենք երկիրնքը: Մեր երկրագունդը, եթէ խօսացնենք, կասէ մեզ թէ ռատեգից է գալիս, ի՞նչ հասակ ունի և իր կեանքում ինչ բաներ է տեսել:

Այն լեզուն, որով խօսում է մեր հողագունդը, գիտնական մարդիկն են միայն հասկանում և նրանք էլ արդէն մեր լեզուով պատմում են մեզ: Եւ

այս պատմութիւնը այս գիտնական  
մարդիկ անուանում են երկրաբանու-  
թիւն (գէօլօգիա)։

Եւ լսում ենք մենք այդ մեծ գնդի  
պատմածները ու իմանում ենք հազար  
հազար հրաշք ու զարմանք բաներ։

Եւ առաջին հրաշք բանն այս է, որ  
մեր երկիրը շատ փոփոխական բախտ  
է ունեցել։ Հէնց որ խօսացնել սկսենք,  
կասէ իսկոյն թէ միշտ չէ եղել ինքն  
այնպէս, ինչպէս տեսնում ենք նրան  
հիմա։ Այս լեռը, այս դաշտը, այն գե-  
տը երկրի գոյութեան առաջին օրից  
չէ այնպէս ձևաւորուած ու տեղաւո-  
րուած։ Այս վիթխարի սարերն ու  
ժայռերը, այս անյատակ ձորերը հա-  
մեմատաբար ջահիլ բաներ են։

Եւ մենք այս բանի վրայ չենք էլ  
գարմանայ, եթէ հարցնենք մեր այս  
հողագնդի հասակը։ Այնքան մեծ է  
այդ հասակը, որ իսկի հաշուել էլ չեն  
կարողանում գիտնականները։ Բայց  
ենթադրում են որ եթէ մի օր կարո-  
ղանան հաշիւը վերջացնել, մի քանի

միլիոն տարուց պակաս չը պիտի լինի  
այդ հասակը:

Այս միլիոնաւոր տարիները, ի հար-  
կէ, միանման չեն եկել անցել երկրի  
վրայով: Նրանք բերել են մեծամեծ  
փոփոխութիւններ, որոնք բոլորովին  
ուրիշ կերպարանք են տուել երկրա-  
գնդի մակերևոյթին և այդ կերպարան-  
քը պահել են բիւրաւոր, հարիւր հա-  
զարաւոր տարիներ, մինչև որ եկել է  
մի ուրիշ մեծ փոփոխութիւն և նոր  
կարգեր է բերել իր հետ:

Ուրեմն մի մարմին, որ բաղկացած  
է շերտերից, մի կեանք, որ հիւսուած  
է տեսակ տեսակ շրջաններից: Այսպէս  
է մեր գունդը եկել հասել մեր օրե-  
րին և այսպէս էլ կերթայ մինչև իր  
սահմանը: Հիմա եթէ հարց տանք թէ  
այդ փոփոխութիւնները ինչից են ա-  
ռաջանում, պիտի լսենք պատասխան  
թէ պատճառները երկրագնդի մէջ էլ  
են, նրանից դուրս էլ: Միջի պատճառը  
այն հրային զանգուածն է, որից բաղ-  
կացած է այդ միջուկը: Նա է որ շար-  
ժումներ է գործում, ճնշում է հողի

կեղևը, մի տեղ բարձրացնում, սարեր  
կազմում, մի տեղ փոսեր անում, ջրի  
ու ցամաքի մէջ հարիւր տեսակ կռիւ  
գցում և այդ կռուից էլ հարիւր ու մի  
փոփոխութիւններ առաջացնել տալիս:

Այս մեծամեծ շրջանները, որոնցից  
կազմուած է երկրագնդի կեանքը, կոչ-  
ւում են երկրաբանական շրջաններ:

Հիմա տեսնենք ի՞նչ կարող է պատ-  
մել հողի այն կտորը, որ հազարաւոր  
տարիներից ի վեր մեր հայրենիքն է  
և մեր անունով էլ կոչուել է Հայաս-  
տան:

Տարարախտարար, գիտնականները  
դեռ շատ չեն հարց ու փորձի ենթար-  
կել մեր հողը: Գիտենք մի երկու բան,  
որոնք էլի շատ հետաքրքրական են:

Մեր հայրենի հողը կազմում է մի  
մասնիկ այն ընդարձակ աշխարհից, որի  
անունն է Առաջաւոր Ասիա: Սա այն  
Ասիան է, որ գտնւում է Միջերկրական  
ծովի և Թուրքեստանի ու Հնդկաստա-  
նի մէջ:

Մի շատ հին շրջան կար, երբ այդ  
ամբողջ Առաջաւոր Ասիան և Աֆրիկա-

յի հիւսիսային մասը ծածկուած էին ծովով: Տեղ տեղ այդ մեծ ծովի մէջ դուրս էին ցցուած մի քանի կղզիներ — Կովկասը, Հայաստանը, հեռաւոր Մակեդոնիան: Հեռեկալ դարաշրջաններում այդ ծովի ծոցից բարձրանում են նոր ցամաք երկիրներ — Եգիպտոսն ու Արաբիան, որոնք կպած են իրար, որպէս և Իրանի և Փոքր Ասիայի մեծ մասերը: Բայց մեծ ծովի մի ճիւղը, խոր նեղուցի ձևով անցնում էր Իրանի միջով մինչև Աֆղանիստանի սահմանները: Իրանի լեռնադաշտը դեռ չէ բարձրացած: Նոյն այդ ժամանակ երևան են դալիս մեծամեծ աղի լճեր Տաւրոսի, Կովկասի և Իրանի հիւսիսային կողմերում:

Երկրագնդի կեղևի նոր շարժումներ են տեղի ունենում, որոնցից մի քանիսը հաղորդակցութիւն են բաց անում մեծ ծովի և այդ լճերի մէջ (Պարզանելի և Բոսֆորի նեղուցները), իսկ միւսները բարձրացնում են ամբողջ Արևմտեան Ասիայի մակերևոյթը: Բայց երկրի ընդհանուր կերպարանքը դեռ

այժմեանի նման չէր. դեռ չը կային  
Կարմիր ծովն ու Պարսից ծոցը:

Փալիս են ուրիշ շրջաններ: Նոր  
փոփոխութիւններ աշխարհի այս կող-  
մերում: Մի մեծ ցնցում բարձրացնում  
է Իրանի լեռնադաշտը և իբրև հակա-  
դրութիւն դրան՝ միաժամանակ իջե-  
ցնում է այն երկու փոսերը, որոնք  
գանւում են այդ սարահարթի երկու  
կողմերում, այն է՝ Արալ-Կասպիական  
տափարակը հիւսիսում և Պարսից ծոցը  
հարաւում, իսկ Արաբիայի և Եգիպ-  
տոսի մէջ բացւում է Կարմիր ծովը:  
Միջերկրական ծովը այժմեան կերպա-  
րանքն է ընդունել, ունի բազմաթիւ  
կղզիներ որոնք անյայտացած ցամաքի  
մնացորդներն են: Հարաւում Պարսից  
ծոցը առաջ մխուեց և նրա ջրերը ո-  
ղողում էին Քրդիստանի, նոյն իսկ և  
Հայաստանի լեռների (Տաւրոս, Վանից  
հարաւ) ստորոտները: Տաւրոսի և Կով-  
կասի մեծամեծ շղթաները Հայկական  
լեռների միջոցով միանում են իրար:

Մի նոր շրջան ևս: Մարդը աւելի  
առաջ է գնացել իր զարգացման մէջ,

երկիրը ծածկուած է լճերով, անտառներով և մարգերով: Երջանիկ է աշխարհը: Մարդկութիւնը, դեռ, իհարկէ, բոլորովին վայրենի, բազմանալով տարածում է և նրա հետ միասին նաև հաստամորթ կենդանիները:

Բայց ահա այդ բարեբեր շրջանին հետևում է բոլորովին ներհակ մի շրջան, որ կոչւում է սառցային: Տարոսը, Հայաստանը, Կովկասը, ամբողջ Իրանը և Ասիայի կենտրոնը ծածկուած են սառցակոյտերով, ձիւնեղէն դաշտերով: Եւ այսպէս շարունակ մի շարք դարեր, դուցէ և հազարամեակներ: Կեանք չը կայ այդ կողմերում, ամայի ու անբնակ են նրանք: Միայն մի քանի տարածութիւններ կան, ուր չեն հասել սառցակոյտերը և այդ տեղերում էլ պահպանւում է բնակութիւնը:

Բնութեան այս ահեղ աւերածութիւններին հետևում է մի ոչ պակաս ահեղ շրջան ևս — գետնաշարժերի շրջանը: Իսկ սրանից յետոյ սառցային աշխարհը ենթարկւում է համատարած

ողողումները: Ուրիշ խօսքով՝ գալիս է ջրհեղեղը, որ ոչնչացնում է ամեն ինչ. կորչում են և այն անտառները, անասունները, այն մարդիկ, որոնք սառցային սարսափներից ազատուած էին այնպիսի տեղերում, ուր չէին հասել դարերով տևած ահուկի ցրտերը: Մարդկային մի քանի ընտանիքներ միայն, որոնք բնակուած էին բարձրութիւնների վրայ, հազիւ կարողացան ազատուել: Այս ահեղ երևոյթի յիշողութիւնն է, որ մնացել է հրէաների և այլ հին ազգերի աւանդութիւնների մէջ:

Ինչպէս և բոլոր ուրիշ երկիրները, մեր Հայաստանն էլ ջրհեղեղից յետոյ մի քարուքանդ երկիր էր: Մեծ հովիտները խորացած էին, երկիրը ծածկուած էր հեղեղատների բերած քարերով: Զրից յետոյ՝ անապատ: Բարձր սարերը դեռ ծածկուած էին սառոյցով ու ձիւնով, լեռնադաշտերը՝ անհուն աղի լճերով: Ծովը թափանցում էր ցամաքի խորքերը. քարքարոտ անապատները բոյս չէին աճեցնում: Աւերածութեան

պատկերը լրացնում էին հրաբուդիսները: Հայաստանի լեռների մէջ բազմաթիւ կատարներ, հսկայական ծխնելոյզների նման, ժայթքում էին կրակ, մոխիր և լաւա:

Սակայն բնութիւնն սկսում է հետզհետէ վերաշինել այդ մեծամեծ աւերակները և կեանքի համար նպաստաւոր պայմաններ վերահաստատել: Եւ նրա շինարար ձեռքում հզօր գործիքներ են դառնում գետերը:

Հայաստանը մեծ ու փոքր գետերի երջանիկ հայրենիք է: Սաստիկ արագավազ են նրանք և իրանց հոսանքով քերում տանում են լեռնային հողերը. այս հողերը ջրի մէջ տիղմ են դառնում և նստում են գետեզերքներին և պարարտ ու պտղատու շերտեր են կազմում:

Բայց Հայաստանի հողերը միայն Հայաստանի մէջ չէին մնում: Մեծ գետերը նրանց տանում էին և հեռաւոր տեղեր ու ափստեղ էին մեծամեծ գործեր կատարում: Այսպէս են, օրինակ, Հայաստանի երկու խոշորագոյն գե-

տերը — Եփրատ և Տիգրիս: Ահա թէ  
ինչ մեծ գործ կատարեցին այդ երկու  
քոյրերը դարերի ընթացքում:

Ասացինք որ Պարսից ծոցը հասնում  
էր Հայաստանի լեռներին: Եփրատն ու  
Տիգրիսն էլ հէնց այդտեղ թափւում  
էին նրա մէջ: Բայց իրանց հետ թա-  
փում էին այդտեղ և Հայաստանի լեռ-  
ներից բերած անհուն տիղմ: Ծովի  
մէջ կազմւում էին հողակոյտեր, ո-  
րոնք բարձրանալով յետ էին մզում  
ջրերը և կազմում էին ցամաքի կտոր-  
ներ: Հաշուել են որ մի դարի ընթաց-  
քում այդ ջրաբեր հողակոյտերը կազ-  
մել են մօտ 1700 մետր ցամաք: Այս-  
պիսով Միջագետքի ստորին մասը ամ-  
բողջապէս Եփրատի և Տիգրիսի գործն  
է: Նրանց աշխատակից եղան և ստո-  
րերկրեայ շարժումները, որոնք բարձ-  
րացրին Պարսից ծոցի յատակը և ջրե-  
րը յետ քաշուեցին:

Իրանց համար տափարակ գաշտեր  
էին շինում երկու մեծ գետերը, կար-  
ծես չը կամենալով շուտ կորչել ծովի  
մէջ: Երկար դարեր նրանք գոյգ ըն-

Թացքով էլ հասնում էին ծովին ու առանձին առանձին ընկնում նրա գիրկը: Բայց յետոյ երկու քոյրերը աւելի մօտեցան իրար, այնքան որ գրկախառնուեցին իրար հետ և մի մեծ գեադառած՝ այսօր էլ գնում են կորչելու ծովի անդունդների մէջ:

Ահա այս տեսակ և ուրիշ շատ տեսակ բաներ է պատմում մեր հողը: Այս անթիւ շրջանները անցած են և նրանց յիշատակները մնացել են իբրև հետքեր հողի վրայ և հողի մէջ: Վերջին շրջանն այն է, որի մէջ մենք ենք ապրում: Ինչ որ է այժմ մեր հողը, այդ մենք էլ ենք տեսնում և կարող ենք նկարագրել ամենայն ճշտութեամբ, այլևս առանց ենթադրութիւնների ու հաւանականութիւնների:

Բ.

### ՀԱՅ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԵՐՊԱՐԱՆՔԸ

Երկրագնդի երեք՝ իրար կպած մասերից, որոնք միասին կոչուում են Հին Աշխարհ, ամենամեծն է Ասիան։ Սա մի վիթխարի ցամաք է, միապաղաղ իր միջին մասերում։ Եւ այս միջին տարածութիւնն էլ, մի ծայրից մինչև միւսը, արևելքից արևմուտք, այսինքն խաղաղ ովկիանոսից մինչև Միջերկրական ծովը, բարձրացած մի տարածութիւն է, ընդարձակ սարահարթերի մի անընդհատ շարք։ Այս սարահարթերի վրայ բարձրացած են լեռնաշղղ-

Թաներ ու լեոնախմբեր, բայց և այդպէս, նկատուում է այսպիսի մի հետաքրքրական տեսարան: Սարահարթի հիւսիսային և հարաւային կողմերով ընկած լեոնաշղթաները կազմում են երկու գծեր, որոնք համարեա միշտ զուգահեռաբար գնում են դարձեալ մի ծայրից մինչև միւս ծայրը, Խաղաղ ովկիանոսից մինչև Միջերկրական ծովը:

Հայաստանը մէկն է այդ Միջասիական սարահարթերից և հիւսիսի ու հարաւի կողմից դրուած է այն զոյգ լեոնաշղթաների մէջ, որոնք գալիս են Հեռաւոր Արեւելքից և համնում են Սև ծովի և Միջերկրականի ջրերին:

Նայելով բարտէզին, մենք տեսնում ենք որ ասիական այդ երկու մեծ շղթաները Հնդկաստանի հիւսիսային մասերում գալիս իրար մօտեննում են այնքան, որ հազիւ մի նեղ անցք են թողնում: Բայց այստեղից նորից հեռանում են իրարից: Մէկը, հիւսիսայինը, Խորասանի վրայով գալիս շրջան է տալիս Կասպից ծովի հարաւային եզերքով, մանում է Արաքսի հովիտը,

խառնուում է Ղարադաղի լեռներին, ուր նրան ճեղքում է Արաքսը: Այս գետի ձախ ափից լեռնաշղթան գնում է դէպի հիւսիս, եզերելով Զանգեզուրի և Ղարաբաղի լեռնաշխարհները արևելքից, Մուղանի մեծ դաշտի կողմից: Այսպէս գնալով մինչև Կուր գետի հովիտը, լեռնաշղթան շուռ է գալիս դէպի հիւսիս-արևմուտք, գնում է Կովկասի գլխաւոր շղթայի հետ զուգահեռաբար մինչև Սև ծովի սահմանները և այդտեղից ծովի հարաւային ափերով գնում է արևմուտք:

Իսկ ասիական միւս մեծ շղթան, հարաւայինը, Աֆղանստանից շրջան տալով դէպի հարաւ, Հնդկական ուկիանոսի ափերով գնում է, Պարսից ծոցի հետ զուգընթացաբար դէպի հիւսիս և այդ ուղղութեամբ շարունակուելով Զագրոս անունով, ծուռում է դէպի արևմուտք. Վանի լճի հարաւային կողմերից նա ստանում է Հայկական Տաւրոս անունը, շարունակում է իր ուղղութիւնը, Տաւրոս անունով, մինչև Միջերկրական ծովը:

Այս երկու հսկայական պատերի

մէջ գրուած Հայաստանը արևելքից ու արևմուտքից էլ պատուած է լեռնաշղթաներով. արևելքում Զագրօսի շարունակութիւնն է, որ Ուրմիայի լճի արևմտեան կողմով գնում է մինչև Մասիսի մօտերքը, իսկ արևմուտքում՝ Անտիտաւրոս շղթան, որ Կիլիկիայի սահմաններում բաժանւում է Տաւրոսի շղթայից և ձգւում է հիւսիս արևելեան ուղղութեամբ դէպի Սև ծովի շղթան:

Այսպիսով հայ հայրենիքը ստացել է մի անզուգական դիրք, որ երևելի մի գիտնական անուանել է «լեռնային զով կղզի» ջրով ու օդով հարուստ:

Այս բնական սահմանների մէջ էլ գետեղուած է հայոց երկիրը: Հին ժամանակներում նա բաժանուած էր երկու մասի. Ղորարազի արևելեան ծայրաշղթայից մինչև Եփրատ գետը Մեծ Հայաստանն էր կամ Մեծ Հայքը, իսկ այդ գետից արևմուտք մինչև Անտիտաւրոս, Փոքր Հայաստանն էր կամ Փոքր Հայքը:

Բայց այս բնական սահմաններից դուրս էլ գտնւում էին երկիրներ, որոնք իրանց աշխարհագրական դիրքով

դարձեալ պատկանում էին Հայկական  
լեռնակղզուն. այսպէս էին Սև ծովի  
հարաւային ափերը, Մերձ-Կասպիական  
տափարակները, Ուրմիայի լիճը: Եւ  
հին ժամանակները, ճիշտ որ, այս տե-  
ղերը հայոց թագաւորութեան էին պատ-  
կանում և այնտեղ հայ ժողովուրդ էլ  
էր ապրում:

Ընդհանրապէս Հայաստանը գտնւում  
է արևելեան երկարութեան (Ֆէրրօից)  
55—67 և հիւսիսային լայնութեան  $37\frac{1}{2}$   
—  $41\frac{3}{4}$  աստիճանների մէջ: Նրա ամ-  
բողջ մակերեսը 357900 քառակուսի  
քիլոմետր է, որից Մեծ Հայաստանին  
ընկնում է 220,000 քառակուսի քիլո-  
մետր: Հայաստանի ամենամեծ երկա-  
րութիւնը արևելքից հարաւ-արևմուտք  
975—1050 քիլոմետր է, իսկ ամենա-  
մեծ լայնութիւնը հիւսիսից հարաւ 525  
քիլոմետր:

Գ.

## Լ Ե Ռ Ն Ե Ր

Ամբողջ Հայաստանը ներկայացնում է բարձրացած երկրի տեսարան. դա մի մեծ բարձրաւանդակ է, սարահարթերի մի ամբողջ ցանց: Եւ այս բարձր երկրի վրայ բարձրացած են, զանազան ուղղութիւններով, լեռնային գօտիներ և խմբեր: Հայկական բարձրաւանդակի միջին բարձրութիւնն է 1500—2000 մետր ծովի մակերևոյթից, իսկ լեռների ամենամեծ բարձրութիւնն այն է, որին հասնում է Մեծ Մասիսը, այն է՝ 5156 մետր:

Լեռնաշղթաների մէջ ձգւում են  
 խոր ձորեր ու հովիտներ: Աշխարհա-  
 գրական շատ հայերէն անունների մէջ  
 մենք տեսնում ենք ձոր, փոր, հո-  
 վիտ անունները, օրինակ Գոմաձոր,  
 Կամրջաձոր, Ծաղկաձոր, Ծորոփոր,  
 Չորափոր, Բալահովիտ, Աղիովիտ և  
 այլն: Այս ձորերը, փորերը, հովիտնե-  
 րը դարձել են գաւառական բաժա-  
 նումների հիմքեր: Օրինակ, Չորապե-  
 տը մի ամբողջ գաւառ էր, որ այժ-  
 մեան Լօռու ձորն էր պարունակում  
 իր մէջ: Չորափորը — Աղստափա գետի  
 հովիտն էր, Գիլիջանից սկսած:

Հայկական հովիտներից առանձնա-  
 պէս խոր է Արաքս գետի հովիտը, որ  
 իր արեւմտեան մասում, Կողբի մօտ,  
 ունի 900 մետր բարձրութիւն, բայց  
 ստորիճանաբար ցածրանալով դէպի ար-  
 ևելք, Օրդուբաթի մօտ ունի միայն  
 600 մետր: Արաքսի այս մեծ հովաից  
 յետոյ նշանաւոր են Նփրատ գետի հո-  
 վիտները — Ալաշկերտի, Մուշի և Պար-  
 բերդի:

Հայկական լեռնաշխարհը մեծագոյն

մասամբ հրաբղխային ծագում ունի։  
Դա հրաբղխային մեծ կենտրոնների մի  
աշխարհ է։ Եւ բազմաթիւ հանգած  
հրաբուլխները այժմ էլ ցոյց են տա-  
լիս թէ հին երկրաբանական շրջաննե-  
րում որքան ահաւոր եռանդով են այս-  
տեղ գործել ստորերկրեայ ոյժերը և  
ինչ ահեղ տակնուվրայութիւններ և  
աւերանքներ են գործել, որոնք և հա-  
ղորդել են մեր երկրի մակերեսոյթին  
նրա այժմեան ձևաւորումը։

Այդ հրաբղխային կենտրոնների մէջ  
առաջին տեղը պատկանում է Մա-  
սիս կամ Արարատ սարին, որ իր  
բարձրութեամբ թագաւորում է Հա-  
յաստանի բոլոր լեռնագագաթների վը-  
րայ։ Մասիսը երկու գագաթ ունի.  
Մեծը, կանոնաւոր կոնական ձևով մի  
հսկայ (5156 մետր), որի վերին մա-  
սը, սկսած 4370 մետրից, ծածկուած  
է յաւիտենական ձիւնով։

Այդ մեծ գագաթին, արևելեան  
կողմից, կպած է Փոքր Մասիսը (3596  
մետր)։ Ամբողջ լեռան լանջերը ծած-  
կուած են լաւայի շերտերով և առ-

հասարակ աղքատ են բուսականութեան կողմից: Բայց նրա տեսարանը փառահեղ է: «Այս սարը – ասում է Ֆրանսիացի նշանաւոր աշխարհագիր Ռէկլիւն – Հին Աշխարհի միջով Բարեյուսոյ հրուանդանից <sup>1)</sup> մինչև Բերինգեան նեղուցը <sup>2)</sup> ձգուած բարձր երկրների և բարձրաւանդակների կենտրոնական գագաթն է»:

Սարը բարձրացած է Արարատեան գաշտի (Արաքսի հովիտ) վրայ, որ մի ժամանակ գոյութիւն ունեցած մեծ լճի յատակն է ներկայացնում: Սոր տպաւորութիւն նա թողնում է ոչ թէ իր լանջերի թեքութեամբ, այլ նրանով, որ այդ լանջերը բարձրանում են աստիճանաբար և բաց են նայողի առջև ստորոտից մինչև գագաթը: Նրա առջև չը կան առաջաւոր լեռնակներ և բարձր բլուրներ, որոնք կարողանային ծածկել նրա հսկայական հասակի մի մասը: Եւ այդ կողմից Մասիսը միակն է ամբողջ աշխարհում:

<sup>1)</sup> Աֆրիկայի հարաւային ծայրը.—<sup>2)</sup> Ասիայի հիւսիս-արևելեան ծայրը:

Մեծ Մասիսի գազաթը շունի հրա-  
 բլիսային սկաւառակ կամ խառնարան:  
 Բայց դրա փոխարէն նրա հիւսիսային  
 լանջի վրայ գոյացած է հակաշական մի  
 պատուածք («Վիհք Մասեաց»), որ  
 սկսում է ձիւների տակից և բաղկա-  
 ցած է հրաբլիսային զանգուածներից:  
 Հայկական այս մեծ հրաբուլխը ուժեղ  
 գործունէութիւն ցոյց է տուել և պատ-  
 մական ժամանակներում: Այսպէս 341  
 թուին (Ք. յ.) տեղի ունեցաւ ահաւոր  
 երկրաշարժ: Եղեսիայի եպիսկոպոս ս.  
 Եփրեմը պատմում է թէ այդ միջո-  
 ցում հայկական լեռները նախ հեռա-  
 ցան իրարից, ապա մօտեցան իրար  
 սարսափելի ճայթիւններով. լեռների  
 միջից դուրս ժայթքեցին կրակ և ծուխ:  
 1319 թուականին մի ուրիշ ահեղ երկ-  
 րաշարժ քարուքանդ արաւ բազմաթիւ  
 քաղաքներ, որոնց մէջ էր, ինչպէս են-  
 թաղրում են, և Անի մայրաքաղաքը:  
 Վերջին ժայթքումը տեղի ունեցաւ  
 1840 թուի յունիսին, երբ կործանուեց  
 Ակուռի գիւղը:

Մասիսին միացած է այն լեռնա-

շղթան, որ կովկասեան գլխաւոր շրջ-  
թային զուգահեռաբար ձգւում է գէպի  
արեւմուտք և կոչւում է Աղբի-դաղ  
(Ս ու կ աւ լ ե ո ն ե ր) կամ Հայկական  
Պար: Այդ շղթան միացնում է Մեծ  
Մասիսը Էրզրումի մօտ գտնուող Փա-  
լանթէօքան լեռներին, որոնք իրանց  
կողմից միանում են գէպի հարաւ և  
հիւսիս տանող լեռների հետ:

Երկրորդ նշանաւոր հրաբղխային  
կենտրոնը Մասիսից գէպի հիւսիս է  
գտնւում և բաժանուած է նրանից Ա-  
րաքսի հովիտով: Դա Արագածն է,  
նոյնպէս հանգած մի հրաբուղխ, 4095  
մետր բարձրութեամբ: Ունի մի քանի  
զագաթներ, որոնց մէջ ամենաբարձ-  
րերը շորս հատ են, տարուայ մեծ մա-  
ւր ձիւնով ծածկուած: Մինչդեռ Մա-  
սիսը իր վիթխարի գանգուածից շատ  
քիչ ջուր է բաց թողնում, Արագա-  
ծից բղխում են բազմաթիւ ջրեր: Ա-  
րագածը տարբերւում է և նրանով, որ  
հարուստ բուսականութիւն ունի:

Այս հրաբղխային հսկան էլ գեղե-  
ցիկ է և վեհատեսիլ: Նրա շրջակայքը

կրում են մի հրաբլխային երկրի բո-  
լոր հետքերը: Լաւան տարածուած է  
նրա լանջերի վրայ և ստորոտներում  
մինչև Արաքսի ափերը: Իսկ Շիրակի  
և Վանանդի (Կարսի) սարահարթի վրայ  
բարձրացած են կոնաձև մեծ բլուրներ:  
Ամբողջ այդ սարահարթի մակերևոյթը  
ծածկուած է սև լաւայով և մոխրա-  
գոյն տուֆով (հրաբլխային քար):  
Հրաբլխային երկիրը այդտեղից տա-  
րածւում է դէպի հիւսիս, մինչև Ախալ-  
ցխայի շրջակայքը: Չըլդրբ խոշոր լիճը  
հրաբլխային խառնարան է այդ լեռ-  
նաստանում:

Կովկասեան գլխաւոր շղթային գու-  
զընթացաբար, արեւմուտքից դէպի ա-  
րևելք, տարածուած է մի ընդարձակ  
լեռնաշխարհ, որ ընդհանուր առմամբ  
ծանօթ է Փոքր կամ Ստորին Կով-  
կաս անունով: Նա բաղկացած է բազ-  
մաթիւ ճիւղաւորութիւններ ունեցող  
մի քանի լեռնաշղթաներից, որոնցից  
հիւսիսայինները կազմում են Հայկա-  
կան բարձրաւանդակի սահմանագիծը:  
Հիւսիսային կողմից Փոքր Կովկասը

իջնում է, Կուր գետի հովտի վրայ, հա-  
րաւային կողմից Արաքսի հովտի վրայ,  
իսկ արևելեան կողմից՝ այս երկու գե-  
տերի սարրին ընթացքի գաշտավայրի  
վրայ: Սոմխէթի, Գուգարքի, Գեղար-  
քունու, Գանձակի, Արցախի և Սիւնիքի  
լեռները լցնում են այդ ամբողջ տա-  
րածութիւնը: Համարեա կենտրոնում,  
Գեղարքունիք գաւառում, լեռնաշղթա-  
ները խաշաձև խառնւում են իրար հետ  
և կազմում են լեռնաշղթաների այն  
վիթխարի բաւիղը, որ Գանձակի գա-  
ւառի, Արցախի և Սիւնիքի արևմտեան  
մասերն է բռնում: Հրաբոխային յե-  
ղաշրջումների հետքերը այստեղ էլ  
նկատւում են ամեն բայլում: Սիւնի-  
քի լեռնադաշտը (Սիսիան, Ջանգեղուր)  
մի ժամանակ ծածկուած է եղել Սե-  
ւանի լճի պէս մի մեծ ջրաւազանի տակ:  
Չէշաքարի ժայռերը, որոնք այնքան  
բազմաթիւ են այդ սարահարթի վրայ,  
այս ենթադրութիւնն են հաստատում:  
Իսկ լեռնադաշտը շրջապատող լեռնա-  
յին պատերը հարաւային և արևելեան  
կողմից լիջնում են Արաքսի վրայ:

Փոքր կովկասը արևմուտքում գանազան լեռնային ճիւղաւորումներով միացած է այն լեռնային սիստեմների հետ, որոնք տարածուած են էրզրումի սարահարթի վրայ: Մի սարահարթ է սա, որ ամենաբարձրն է ամբողջ Հայաստանում և հէնց այդ պատճառով էլ հնում կոչուել է Բարձր Հայք: Նա իր լեռնային բարձրութիւններով միացած է Փոքր Ասիայի, կովկասի և Պարսկաստանի լեռների հետ: Սարահարթը համարեա ամբողջովին ծածկուած է գանազան ուղղութեան և գանազան աստիճանի բարձրութիւններով: Դրանց մէջ հովիտները, տափարակ տեղերը շատ քիչ են: Այդ լեռնային ցանցի մէջ գլխաւոր հանգոյցը կազմում են հրաբոխային Բիւրակնեան (Բինգեօլ, հնում Սրմանց կամ Սերմանց) լեռները (3300 մետր), որոնք գրտնւում են էրզրումի հարաւային կողմում: Նրանք միանում են Մասիսի լեռնապարի հետ, որ Սուկաւ կամ Սուկաւէտ անունով ձգւում է դէպի արևմուտք, կազմելով ջրբաժան բարձ-

բութիւն Արաքսի և Եփրատի աւազան-  
ների մէջ: Մասիսից յետոյ այս շղթա-  
յի ամենաբարձր գագաթն է Քէօսա-  
դաղը:

Բիւրակնեան հանգոյցից դէպի հա-  
րաւ՝ Հայաստանի ամբողջ տարածու-  
թիւնը գրաւում են այն լեռնախմբերը,  
շղթաները, որոնք զանազան ուղղու-  
թիւններ են գծում և ընդհանուր առ-  
մամբ Ալա-դաղ և Տաւրոս լեռնային  
սիստեմների մասերն են կազմում:

Այդ լեռնաշխարհն էլ ունի մի քանի  
հրաբլիսային կենտրոններ, որոնցից ա-  
մենատեժեղը Թոնդրակ կամ Թոն-  
դուրակ գագաթն է Ծաղկանց լեռնե-  
րում (այժմ Ալադաղ), Մասիսից դէպի  
հարաւ-արեւմուտք և բաժանուած նրա  
լեռնապարից մի նեղ հովիտով: Ամբողջ  
Փոքր Ասիայում սա միակ հրաբուլիսն է  
(3330 մետր), որ դեռ այժմ էլ բոլո-  
ւովին հանգած չէ: Նրա մէջ յաճախ  
լուում են որոտոցներ, իսկ նրա սկա-  
ւառակից 2-3 հարիւր ոտնաչափ ցած՝  
գանւում է մի շերտ, ուր ժայռերի  
միջից դուրս են ժայթքում ջրային գո-

լորշիներ, հանելով մի աղմուկ, որ  
նման է շոգեմեքենաների աղմուկին.  
Թոնդրակի այդ գլխաւոր խառնարա-  
նից երեք վերստ դէսլի արեւելք կան  
ուրիշ փոքրիկ սկաւառակներ ևս, ո-  
րոնք ժայթքում են եռման աստի-  
ճանը ներկայացնող ջրի գոլորշիներ  
Գլխաւոր սկաւառակը դրսից և ներսից  
արտադրում է մեծ քանակութեամբ  
ծծումք:

Հրաբդխային երկու խառնարաններ  
էլ գտնւում են Վանի լճի արևմտեան  
կողմում, երկուսն էլ բարձր և վեհա-  
տեսիլ. մէկը բարձրացած է լճի հա-  
րաւ-արևմտեան անկիւնի մօտ և կոչ-  
ւում է Նիմրուդ, միւսը հիւսիս-արև-  
մտեան անկիւնում և կոչւում է Սի-  
փան: Հսկայական է Նիմրուդի սկա-  
ւառակը: Դա համարեա բոլորովին կո-  
լոր մի փոս է, որի խորութիւնը հա-  
մարում են 300 մետր: Այդ փոսը շր-  
ջապատող պատերը շատ լաւ են պա-  
հուել և ունին մօտ 22 վերստ շրջա-  
գիծ: Փոսի մի մասը լցուած է ջրով:  
Այդ լեռնային լճի մէջ ձկներ չըկան:

Ջուրը անուշ է: Վիթխարի հրաբուլ-  
խը գեղեցկաբար բարձրացած է Մու-  
շի դաշտի վրայ: Նրա բարձրութիւնն  
է 3860 մետր:

Սիփանի գագաթն աւելի բարձր է  
(3910 մետր): Այդտեղ գագաթի փոսը  
լցուած է ձիւնով. կան և երկու լճակներ:  
Այդ բարձրութիւնից սքանչելի տեսա-  
րան է բացւում Վանի լճի վրայ. Մասիսը  
կանգնած է նրա առջև իր ամբողջ վե-  
հութեամբ:

Յիշատակենք, ի վերջոյ, Հայաս-  
տանի հարաւային վիթխարի սլաւը—  
Տաւրոսը: Միապաղաղ չէ այդ սլաւը:  
Նրան պատուում են հայկական երկու  
մեծ գետերը — Տիգրիս և Եփրատ: Մի-  
ջագետքի կողմից յարմար լեռնային  
անցքեր կան, որոնք մտցնում են Հա-  
յաստան:

Հայկական բարձրաւանդակի ընդ-  
հանուր տեսարանի բնորոշ յատկու-  
թիւնը անտառների պակասութիւնն է:  
Անտառները յատուկ են միայն միջանի  
լեռնախմբերի: Մեծագոյն մասը, դուրկ  
լինելով ծառաբոյսերից, ծածկւում է

հարուստ կանաչներով և ներկայաց-  
նում է գեղեցիկ ու պարարտ արօտա-  
տեղեր: Կան և ընդարձակ շրջաններ,  
ուր բարձրաւանդակները, լեռնային  
լանջերը աղքատ, անապատական տեսք  
ունին: Եւ խոր հովիտներն են այն  
տեղերը, որոնք բուսական ճոխութիւն  
են ներկայացնում և պտղաբերում են  
այնպիսի բերքեր, որոնք երկրի հարս-  
տութիւնն են կազմում:

7.

Չ Ր Ե Ր

Ա.—Լ, Ը Ե Ր

Բացի հրաբուլղիսներից, Հայաստանի բնութեան առանձնայատուկ տեսք են տալիս և բազմաթիւ լեռնային լճերը, որոնք մեծագոյն մասամբ նոյն այդ հրաբուլղիսների արտադրութիւններն են: Մեծագոյն մասամբ դրանք կամ հրաբուլղիսի սկաւառակներ են, լցուած ջրով կամ հրաբուլղիսների կազմած վիհեր, ուր հաւաքւում են ջրերը: Վիշ չեն Հայաստանում և անհետացած

լճեր: Այդպիսի երբեմնեան լճերի  
յատակներ են, ինչպէս յիշեցինք,  
Սիւնիքի լեռնադաշտը, Արաքսի հո-  
վիտը, Ալաշկերտի հովիտը, Մուշի  
դաշտը, Էրզրումի հովիտը և Երզնկայի  
դաշտը:

Հայաստանի լեռնային բնութեան  
յաւերժական գեղեցկութիւններն են  
կազմում բազմաթիւ մանր լճերը, ո-  
րոնք ծփծփում են յաճախ մեծամեծ  
բարձրութիւնների վրայ: Երկար է  
ձգւում, խոժոռ ու անհիւրասէր է Սու-  
կաւեան լեռնաշղթան (Աղբիղաղ). բայց  
բնութիւնը մի գեղեցիկ լիճ է շնորհել  
այդ բարձրութիւններին, որի պատմա-  
կան անունն է Գայլատուայ լիճ, բայց  
այժմ անուանւում է Բալրկ-գետ: Իսկ  
Զըլղըր լիճը, որ գտնւում է Կարսից  
դէպի հիւսիս և որ, ինչպէս ասացինք,  
հրաբոխային մի սկաւառակ է, ունի  
իր ահաւոր գեղեցկութիւնը: Զմեռուայ  
և ամառուայ փոթորիկներն այնտեղ  
ահեղ և ապշեցնող տեսարաններ են  
տալիս:

Թողնելով մանր լճերի բազմութիւ-

նը, դիմենք ամենախոշորներին, որոնք երեք հատ են — Սևանի, Վանի և Ուրմիայի: Վերջինս իր ընդհանուր բնաւորութեամբ աւելի Իրանական լրճերին է մօտենում, բայց իրապէս պատկանում է Հայկական բարձրաւանդակին:

Այդ երեք մեծ լճերից միայն Սեւանն է (հին անուն — Գեղամայ ծով), որ ունի անուշ ջուր և միայն նա է, որ իր ջրերը դուրս է թափում (Հրազդան կամ Զանգու գետի միջով), մինչդեռ միւսները գետեր չեն դուրս թողնում: Սևանը գետեղուած է 1934 մետր բարձրութեան վրայ և ունի 1370 քառակուսի քիլօմետր մակերևոյթ: Մութ-կապտագոյն է այդ մակերևոյթը, հանդարտ: Ընդհանուր տեսարանը փառահեղ է և հանդիսաւոր:

Այս մեծ ջրամբարն էլ հրաբուլղիների գործ է: Շրջապատող լեռները երկ են, լաւայով ծածկուած և տխուր ույներ են հաղորդում ընդհանուր պատկերին: Դրանք գորշ և կապուտակ, հրաբլխային սասանումներից ճաքճաքած

լեռնակոյտեր են: Լիճը հռչակուած է իր քաղցրահամ ձկների (կարմրախայտ, իշխան) անսպառ հարստութեամբ: Կարծում են թէ Չանգուն, որի միջոցով Սեանի ջրերը թափվում են Արաքսի մէջ, արհեստական գետ է և դրա ապացոյց համարում են այն, որ երբ լճի ջրերի մակերևոյթը իջնում է աշնան, գետը համարեա բոլորովին ցամաքում է:

Աւրմիայի լիճը (հին անունը՝ Կապուտան) Սեանի հակապատկերն է: Ունենալով 1300 մետր բարձրութիւն, նա, այնուամենայնիւ, դաշտային լճի բնաւորութիւն է կրում և իր գծադրութիւններով աւելի նման է Կասպից ծովին: Սակայն նա մեծ է հայկական բոլոր լճերից, թէև ունի շատ աննշան խորութիւն, այն է՝ 4-5 մետր: Լճի ջուրը անսովոր աղի է և այդ աղիութիւնը գնալով աւելի սաստկանում է: Ծովի ջուրն էլ չէ կարող համեմատուել այդ աղիութեան հետ. Աւրմիան վեց անգամ աւելի աղի է, քան ովկիանոսը: «Լուզորդները — ասում է

Ռէկլիլին— չեն կարող նրա մէջ սու-  
ղուիլ և նրանց մարմինը իսկոյն ծածկ-  
ւում է աղի շերտով, որ փայլում է  
արևի տակ ինչպէս ազամանդի փոշի»։  
Չկներ Ռւրմիայի լճի մէջ բոլորովին  
չը կան։

Վանի (կամ Աղթամարի) լիճը (հին՝  
Տոսպ, Բգնունեաց ծով) լեռնային է  
(1625 մետր)։ Ճանապարհորդների վկա-  
յութեամբ նա իր շրջականերով Ասիայի  
ամենագեղեցիկ տեղերից մէկն է։ Այս  
էլ աղի ծով է, բայց ոչ կապուտանի  
չափ աղի։ Չկներով այնքան հարուստ  
չէ։ Տալիս է մի տեսակ ձուկ, որ  
յայտնի է «տառեխ» անունով։

Վանի լիճը գոյացել է, երևի, այն  
ժամանակից, երբ հրաբղխային շար-  
ժումները վեր են բարձրացրել Նիմ-  
րուդ սարը և այդպիսով կտրել են նրա  
ջրերի ելքը դէպի Մուշի այժմեան  
դաշար, որ, ինչպէս ասացինք, նոյն-  
պէս մի լիճ է եղել։ Հին աշխարհագիր-  
ները հաղորդում են որ Տիգրիսի ա-  
կունքներից մէկը բղխելով Նախա լե-  
րան հարաւային ստորոտներից, անց-

նուժ էր Վանի լճի միջով. եթէ գետի  
անուշ ջրերը չէին խառնուում լճի աղի  
ջրերի հետ, պատճառն այն էր որ նը-  
րանք արագավազ էին: Այս գրոյ-  
ցը, հաւանաբար, առաջ է եկել այն  
հանգամանքից, որ Տիգրիսի աղունքը  
Վանի լճի հարաւային ափին շատ մօտ  
է: Լճի առանձնայատկութիւններից  
մէկն էլ այն է, որ նրա մակերևոյթը  
այժմ էլ նկատելի կերպով ընդար-  
ձակւում է. հետզհետէ ջուրը ցամա-  
քից նոր-նոր կտորներ է նուաճում: Այս  
կողմից Վանի լիճը եղակի մի երևոյթ  
է ամբողջ Ասիայում: Հին Արձէշ քա-  
ղաքը այժմ ջրի տակ է, Վան քաղա-  
քի և լճի մէջ եղած տարածութիւնը  
հետզհետէ նուազում է և բնակիչները  
ստիպուած են հեռանալ դէպի ցամա-  
քի ներսը, թողնելով իրանց այգիները  
ջրերին: Ենթադրում են որ այդ ե-  
րևոյթը առաջանում է այն հանգա-  
մանքից, որ լճի ներքին, ստորերկ-  
րեայ անցքերը խցուել են և աւազա-  
նը չէ բաւականանում տեղաւորել իր  
մէջ բոլոր ջրերը: Գուցէ կայ և մի այլ

պատճառ, այն՝ որ գոյացել են առան-  
ձին օդային հոսանքներ, որոնք աւելի  
մեծ քանակութեամբ ջրային գոլորչի-  
ներ են արտադրում և երկրի վրայ ա-  
ւելի մեծ քանակութեամբ անձրև և  
ձիւն են թափում:

ե.

Ջ Ր Ե Ր

Բ. — Գ Ե Տ Ե Ր

Լեոնային լճերի մեծ քանակութիւնը և ընդարձակութիւնը արդէն ըստ ինքեան վկայում են թէ որքան ջրառատ երկիր է Հայաստանը: Բայց այդ առատութեան նոյնչափ խոշոր նշանը մեծ և փոքր գետերի բազմութիւնն է: Միայն Բարձր Հայքը ներկայացնում է ստորերկրեայ մի հսկայական ջրամբար, որ բղխեցնում է մեծամեծ գետեր և ուղարկում է նրանց երեք ուղղութեամբ, դէպի երեք ծովեր—

Մե ծով, կասպից ծով և Հնդկական  
ովկիանոս: Այդ գետերից ամենանշա-  
ւորներն են. Եփրատ, Արաքս, Ճորոխ:  
Բարձր Հայքի լեռնաշխարհին են պատ-  
կանում և Կուր գետի ակունքները, ինչ-  
պէս և նրա լեռնաշխարհի արևմտեան  
սահմանակից լեռներից են սկիզբ առ-  
նում պատմական նշանաւոր Ալիւս գե-  
տը, որ ոռոգում է Փոքր Հայքը և Կել-  
կիա գետը, (հին ժամանակները Գայլ  
գետ): Երկու գետերն էլ թափվում են  
Մե ծովը:

**ԵՓՐԱՏ:** Կազմւում է երկու մեծ  
ճիւղերից. մէկը, որ կոչւում է արև-  
մտեան և կրում է Փրատ յատուկ ա-  
նունը, իսկ միւսը, արևելեանը, հայոց  
պատմութեան մէջ այնքան յաճախ  
յիշատակուող Արածանին է, այժմեան  
անունով՝ Մուրադ:

Արևմտեան ճիւղը երկու գետակնե-  
րից է կազմւում: Նրա իսկական ա-  
կունքները գտնւում են էրզրումից  
դէպի հիւսիս, Գումմի-դաղ լեռներում,  
որոնց հին անունն է Ծաղկանց լեռ-  
ներ: Գումմի-դաղի հարաւային ստո-

րոտների լանջերում, 8567 ոտնաչափ  
մի բարձրութեան վրայ, միմեանց ուսե-  
րը բարձրացած քարերը կազմում են  
մի աւազան, որի մէջ հաւաքւում է  
գետնից հեղիկ ու հանդարտ դուրս  
թափուող, վերին աստիճանի պաղ (3°),  
մաքուր, անուշահամ ջուրը: Այստեղ  
նա դեռ մի համեստ, բայց յորդ լեռ-  
նային աղբիւր է, կորած հրաշալի մար-  
գերի մէջ: Քարէ աւազանը շէ ցոյց  
տալիս իր մէջ հաւաքուող ջրերի և  
ոչ մի շարժում:

Այժմ էլ տեղական հայերի մէջ այդ  
աղբիւրը պաշտամունքի առարկայ է.  
մի պաշտամունք, որ անշուշտ շատ  
հին է, բայց քրիստոնէական դարե-  
րում ընդունել է քրիստոնէական գու-  
նաւորում: Պատմում են, որ երբ բիւ-  
զանդական շերակլ կայսրը (VII դար),  
թափելով Քրիստոսի խաչափայտը գե-  
րութիւնից, տանում էր Բիւզանդիա,  
ճանապարհին, հէնց այստեղ, մի ինչ  
որ վտանգի պատճառով, ստիպուած  
եղաւ թաղել խաչափայտը հողի մէջ:  
Եւ երբ նորից հանեցին խաչափայտը,

նրա հետ միասին սկսեց դուրս բղխել  
և այս աղբիւրը: Երևի այս աւանդու-  
թեան հետ կապուած է այն, որ լե-  
րան այդ կողմը կոչուում է Սաշափայտ,  
իսկ մօտիկում շինուած վանքի անունն  
է ս. Սաշ: Լողանալ հրաշալի աղբիւրի  
սառոյց ջրի մէջ կարող են միայն այն  
երջանիկները, որոնք ոչ մի մեղք չու-  
նին. իսկ լուացուել այդ անմահական  
ջրերով նշանակում է բժշկուել մարմ-  
նի և հոգու արատներից: Այսպիսի հա-  
ւատալիքներով է հայ ժողովուրդը մե-  
ծարում համաշխարհային հռչակ ստա-  
ցած իր գետի ակունքները:

Սրբազան աղբիւրը այնքան մեծ է,  
որ աւազանից դուրս գալուց յետոյ  
արդէն 5—6 ոտնաչափ լայնութիւն  
ունեցող մի գետակ է կազմում, որ  
հանդարտ խոխոջալով իջնում է ծա-  
ղիկների և խոտերի գորգերով ծած-  
կուած լանջերից, ընդունում է իր մէջ  
ուրիշ բազմաթիւ աղբիւրներ, հանդարտ  
ու դանդաղ իջնում է Էրզրումի դաշ-  
տը. այդտեղ նա ծոյլ ընթացք ունի,  
լճանում է, կազմում ճահիճներ, որոնք

մեր հին մատենագրութեան մէջ կոչ-  
ւում են «Շամբ Կարնոյ»։ Զուրը պըղ-  
տոր է և, երևի, այդ պատճառով էլ  
այնտեղ ստացել է Կարա-սու (Սև-Չուր)  
անունը։ Այնուհետև շուռ գալով դէպի  
արևմուտք, գետը խառնւում է արև-  
մտեան ճիւղի հետ, որ կոչւում է Սար-  
չամայ գետ։ Նա բղխում է Օվաջիկ գա-  
ւառամասում գտնուող լեռներից, ո-  
րոնց հիւսիսային լանջերից սկիզբ է  
առնում միւս մեծ գետը, Ճորոխը։  
Այնուհետև Եփրատը, մտնելով Շողա-  
նի ձորը, հոսում է դէպի արևմուտք,  
շուռ է գալիս դէպի հարաւ և մի լայն  
շրջան տալով, նորից փոխում է իր  
ընթացքը դէպի արևմուտք և մտնում  
Երզնկայի գաշտը։ Այս ճանապարհին  
լեռները նեղում են նրա տաշտը և նա  
արդէն մի լեռնային հուժկու, աղմկա-  
շատ գետ է։ Նրա ձորը ահաւոր խո-  
րութեան է հասնում Ակն քաղաքի  
մօտ։ Աղմկայոյզ գետը փրփրած վա-  
զում է նախ դէպի հարաւ, ապա շուռ  
է գալիս դէպի արևմուտք։ Ակնի այդ  
կիրճը Հայաստանի բնորոշ լեռնային

տեսարաններից մէկն է: Նրա կողերը կազմող բարձրութիւնները հասնում են ձիւների գծին, և մինչդեռ կիրճի յատակում ծաղկում է նշենին, վերելում, բարձրութիւնների վրայ, խոր ձմեռ է:

Շարունակելով իր ընթացքը միշտ դէպի հարաւ, Ֆրատը կապան-Մաղէն անունով տեղից քիչ վերև խառնում է արևելեան մեծ ձիւղի հետ:

Այս արևելեան Եփրատը, Արածանին, լոյս աշխարհ է գալիս աւելի ևս հիասքանչ մի միջավայրում: Նրա ալունքը գանւում է Մասիսի հարաւարեամտեան կողին յարակից այն հսկայական հրաբղխային լեռնակոյտի մէջ, որի դեռ այժմ էլ բոլորովին չը լուծ արտայայտիչն է Թոնդրակը: Այդ լեռնային սիստեմը ունի իր ընդհանուր պատմական անունը Մաղկանց լեռներ (այժմ Ալա-դաղ): Արածանիի ծննդավայրն էլ, ուրեմն, համանուն է նրա արեամտեան քրոջ, Ֆրատի, որրանին: Ծնունդ առնելով Մաղկանց լեռների հիւսիսային լանջերի ձիւներից, Արա-

ծանին, սկզբից արդէն մի յորդանոս  
ջուր, կարճ ճանապարհ անցնելուց յե-  
տոյ, մտնում է Թոնգրակի հրաբղխա-  
յին գործունէութեան շրջանում գտնու-  
ող ձորը, Դիազին ամրոցից 20—25  
վերսա գէպի հարաւ:

Այստեղ հանդէս է գալիս հանքա-  
յին ջրերի մի այնպիսի հարստութիւն,  
որ գուցէ իր նմանը չունի աշխարհի  
վրայ: Չազառաձև փոսերից դուրս են  
ցայտում տաք ծծմբային ջրեր, այն-  
քան տաք, որ տեղացիները այդ աղ-  
բիւրների մէջ եփում են ոչխարի միս:  
Ջերմուկները թափւում են Արածա-  
նիի մէջ: Դարերի ընթացքում նրանց  
հանքային բաղադրութիւնները պնդա-  
նալով կազմել են գետի վրայ երկու  
բնական կամուրջ: Արածանին ծակել  
է այդ պինդ կրային զանգուածները և  
ճանապարհ բացել նրանց տակով: Կա-  
մուրջներից մէկը այնքան լայն է, որ  
նրա վրայով կարող են անցնել և ձիա-  
ւորներ<sup>1)</sup>: Հանքային բաղադրութիւն-

<sup>1)</sup> Հայաստանը այնպիսի մի պատկեր ներկա-  
յացնում է և իր արևելեան ծայրագուտաւում, Սիւ-

ները ծածկում են կամուրջները և շրջակայքը գոյնզգոյն փայլուն շերտերով:

Այնուհետև Արածանին մտնում է սև բազալտեայ ժայռերի մի երկար ու նեղ ճեղքուածի մէջ, ուր մոլեգնաբար առաջ է վազեցնում իր ալիքները: Տեղի գեղեցկութիւնը անզուգական է: Սև ժայռերը սեպացած են պատերի նման, քմահաճօրէն ծումուում են, և գետը սեղմուած է նրանց մէջ արծաթէ ժապաւէնի նման: Նրա եղերքները կիրճի խորքում ծածկուած են կանաչների շքեղ գորգերով: Դուրս գալով այդ անձուկ ճեղքուածից, Արածանին փոխում է իր հիւսիսային ուղղութիւնը և գնում է դէպի հիւսիս արևմուտք: Ծնուելով Մեծ Հայքի համարեա արևելեան սահմանների վերայ, նա գնում է հայոց երկրի լայնքով մինչև արևմտեան սահմանը և այդ պատճառով սկզբից մինչև վերջ, մինչև Գրատի հետ խառնուելը, հայկա-

---

նեաց աշխարհի մէջ, ուր Որսանայ գետը անցնում է իր փորած կամուրջի տակով, Տաթև սարի ստորոտում:

կան գետ է: Գիադինի խորածորից  
գուրս գալուց յետոյ էլ հանքային աղ-  
բիւրները ուղեկցում են նրան երկար  
տեղ, նպատ լերան ստորոտներով:

Այս բոլոր տեղերում Արածանին էլ  
մի սրբազան պաշտամունքի առարկայ  
է: Հեթանոսութեան շրջանում հայերը  
իրանց ազգային կրօնական ամենանը-  
շանաւոր տօնախմբութիւնները (Նաւա-  
սարդ) կատարում էին Արածանիի ա-  
կունքների մօտ: Քրիստոնէութիւնը  
նուիրագործեց այս սրբազան պաշտա-  
մունքը, այստեղ, նպատ սարի ստո-  
րոտում էր, որ Արածանիի ջրերի մէջ  
մկրտուեցին Տրդատ թագաւորը, նրա  
ընտանիքը, զօրքը և բրիստոնէութիւ-  
նը պաշտօնական կրօն դարձաւ Հա-  
յաստանում: Այժմ էլ տեղացիները,  
հաւատարիմ աւանդապահներ հին մեկ-  
նութիւնների, գետեղում են Եղեմը,  
առաջին մարդկանց գրախար: Եւ այդ  
աւանդութիւնը զօրեղ տպաւորութիւն  
է թողնում նոյն իսկ օտար այցելու-  
ների վրայ: «Այդ գեղանկար վայրը—  
ասում է մի այցելու— ունէր բիրլիա-

կան բանաստեղծութեան ամբողջ շրթ-  
նադութիւնը, և, սքանչանալով նրա  
տեսքով, ցանկութիւն էր ծնւում բը-  
նակեցնելու այդտեղ ուրուականներ,  
որոնելու նրա մենաւոր, գաղտնի խոր-  
շերից մէկում թէ արդեօք այժմ էլ  
չէն շրջում մեր նախահայրն ու նա-  
խամայրը այնտեղ և արդեօք այժմ էլ  
չէն բանում այստեղ արգելուած պը-  
տուղներ»:

Ալաշկերտի հովտում Արածանին  
ընդունում է բաղմաթիւ գետակներ,  
Ղարաքիլիսա գիւղի մօտ, ընդունելով  
հանդիպակաց կողմից հոսող Շարիան  
գետը, ծնւում է դէպի հարաւ-արե-  
ւմուտք, իսկ Մանազկերտի մօտից ըն-  
դունում է արեւմտեան ուղղութիւն:  
Ամբողջ ժամանակնա հոսում է բարձր  
լեռների միջով, կամ տանելով իր բն-  
թացքը այդ լեռների ստորոտներով կամ  
թէ պատուելով նրանց շարքերը և նեղ  
կիրճեր փորելով: Աջից ու ձախից շարու-  
նակ ընդունելով գետեր և գետակներ  
(որոնց մէջ նշանաւոր են Բինգեօլ-սուն,  
և Գիւնէկսուն), Արածանին մտնում է

Մուշի ընդարձակ դաշտը, որ նրա հովիտն է կազմում և հայկական լեռնաշխարհի ամենաարգաւանդ դաշտերից մէկն է: Այդտեղ նա ընդունում է Մեղրագետը:

Մուշի դաշտից գետը դարձեալ մըտնում է նեղ և խոր կիրճերի մէջ: Նրա հունը սեղմում են ժայռերը, և նրա կանաչագոյն, մաքուր ջրերը ահագին շառաշիւնով, փրփրած, անցնում են կիրճերը լցնող ժայռերի բեկորների վրայով, կազմում են ջրվէժներ: Այդ նեղ կիրճերը վերջանում են Պալուի մօտ և Արածանին մտնում է երկրորդ, աւելի ընդարձակ դաշտը—Պարբերդի բարեբեր, գեղեցիկ մշակուած հովիտը: Բայց այդտեղից դարձեալ նեղ կիրճ: Դա մի հսկայական ճեղքուած է ժայռերի մէջ, որ անշուշտ հրաբլխային գործողութեան արդիւնք է:

Արածանին աւելի մեծ և ջրառատ է քան Ֆրատը: Կապան-Մաղէնի մօտ իրար խառնուելուց յետոյ, նրանք միացած ոյժերով պատուում են մի նոր, բայց աւելի անհրապոյր և վայրենի կիրճ. ժայռոտ լեռների մի խօլա-

կան զանգուածի միջով է անցնում  
այդ կիրճը, լերկ ժայռեր, որոնց վրայ  
չը կայ բուսականութեան հետք ան-  
գամ: Գետի հունը շարունակ թեք է,  
դառիվայր, և հոսանքը՝ սրընթաց: Այդ  
կիրճին դարձեալ հետևում է մի հո-  
վիտ, որին հետևում են դարձեալ կիր-  
ճեր: Ամենից նշանաւորը Կիմիրխանի  
կիրճն է: Այդտեղ եփրատի ընթացքը  
սեղմուած է ամեն կողմից: Կիրճի ժայ-  
ռոտ սլատերը այնքան մօտենում են  
իրար, որ ահագին գետն ունի միայն  
80 քայլ լայնութիւն: Ժայռերը կտրը-  
տում են և կիրճի յատակը: Ջրերը  
թափւում են ժայռից ժայռ, կազմե-  
լով քարավազներ (փոքրիկ ջրվէժներ),  
որոնց թիւը հասնում է 300-ի: Այս  
վիթխարի արգելքների վրայով եփ-  
րատը որոտալով է անցնում: Իսկ նրա  
հունը աւելի և աւելի թեք ուղղութիւն  
է ստանում և հոսանքի սրընթացու-  
թիւնը աւելի է սաստկանում:

Այսպէս սլատակով Տաւրոսի շրջ-  
թան, եփրատը հետզհետէ ազատւում  
է լեռների նեղ ճեղքերից և դուրս է

Թափուում Միջագետքի հարթ ու հա-  
 ւասար տափարակները, Այգտեղ նա իր  
 ջրերն ուղղում է դէպի արևմուտք,  
 կարծես ձգտելով դէպի Միջերկրական  
 ծովը, որ հեռու չէ նրանից. բայց յե-  
 տոյ ծուում է դէպի հարաւ և շրջ-  
 ջաններ տալով շարունակ դէպի արե-  
 ելք, մօտենում է Հայաստանի բարձ-  
 րաւանդակներից իջած իր մեծ քրոջը,  
 Տիգրիսին, երկար տեղ գնում է նրա  
 հետ զուգընթաց, որպէս զի վերջը  
 գրկախառնուի նրա հետ և ստանալով  
 Շատ-էլ-Արաբ անունը, թափուի Պար-  
 սից ծոցը

**ԱՐԱՔՍ:** Այս՝ արդէն գերազան-  
 ցօրէն հայկական գետի որրանը էրզ-  
 րումի հարաւային կողմում բարձրա-  
 ցած Սրմանց կամ Սերմանց (Բինգեօլ,  
 Բիւրակնեան) լեռներն են: Դրանց ա-  
 մենաբարձր գագաթը մի մեծ հրաբու-  
 խային հանգած խառնարան է, բազ-  
 կացած երեք՝ առանձին-առանձին ցր-  
 ցուած մեծ ժայռերից: Սառնարանի  
 շրջապատն էլ մեծամեծ վայրենի ժայ-  
 ուերից է կազմուած: Այգտեղ, այդ քարոտ

բարձրաւանդակների վրայ, ամառուայ  
ամենատաք ժամանակն անգամ ձիւնի  
հասա շերտեր են մնում: Նրանց հալոց-  
քից գոյանում են անթիւ մանր լճակներ  
(Բիւրակն — տասը հազար ակ, Բինգեօլ —  
հազար լիճ): Այդ լճերից բղխում են  
լեռնային մանր, շափազանց սառնո-  
րակ առուակներ, որոնք խոխոջալով  
ցած են վազում լեռան լանջերով: Բիւ-  
րակնեան այդ մեծ գազաթը այսպի-  
սով հանդիսանում է մի կենտրոն, որ  
ջուր է բաժանում զանազան ուղղու-  
թիւններով: Հիւսիսային լանջերից իջ-  
նում է Արաքսը, որ այստեղից պիտի  
վազէ մինչև Կասպից ծովը, մինչդեռ  
հարաւային և արեւմտեան լանջերի ջը-  
րերը արդէն Հնդկական օվկիանոսին  
են պատկանում, որովհետև թափւում  
են Արածանիի և Ֆրատի մէջ:

Բիւրաւոր ակների այս բարձրագիր  
հայրենիքը Հայաստանի բնութեան ա-  
մենագեղեցիկ անկիւններից մէկն է  
ներկայացնում: Աննման է լեռնային  
օդը, որ տոգորւած է բիւրաւոր ծա-  
ղիկների անուշահոտութեամբ: Չը նա-

յամ բարձրութեան, լեռներն ունին  
ցուրտ քամիներից լաւ պաշտպանուած  
լանջեր, ուր օդը բարեխառն է, ամա-  
ռը՝ նոյն իսկ տաք: Եւ այս կողմերի  
հայ ժողովուրդը այստեղ էլ, ինչպէս և  
Արածանիի վերին ակունքների վրայ,  
գետեղում է դրախտը: Անկախ Աս-  
տուածաշունչի աւանդութիւնից, որ  
եկել է նուիրագործելու հայկական  
մեծ գետի ծնունդը, բիւրաւոր աղ-  
բիւրների և լճակների այս բնագաւա-  
ռը պիտի զարգացնէր ջրերի սրբազան  
պաշտամունքը, որ առհասարակ յա-  
տուկ է հայ ժողովրդին: Հաւատում  
են այստեղի և ոչ քրիստոնեայ բնա-  
կիչները թէ այս լճակների մէջ կայ  
մէկը, որ իսկապէս անմահական ջուր  
ունի և անմահութիւն կը տայ այն  
մարդուն, որ երջանկութիւնը կունե-  
նայ նրա ջրից խմելու: Սակայն դրժ-  
բախտութիւնն այն է, որ ոչ ոք դեռ  
չէ գտել այդ լճակը, ուստի և ոչ ոք  
անմահական չէ: Ասենք առանց այդ  
հրաշագործ լճակի էլ մարդկային կեան-  
քը այս դրախտանման վայրերում ա-

ուողջ և երկարատև լինելու բոլոր հնարաւորութիւններն ունի:

Չորս առուակներ միանում են Բինգեօլի վրայ և կազմում են Արաքսը, որ լեռան լանջերից բոնում է ուղղութիւն դէպի արևելք և ընդունում է իր մէջ բազմաթիւ գետակներ, որոնք իջնում են նոյն Բինգեօլի ուրիշ լանջերից: Ապա նա շուռ է գալիս դէպի հիւսիս և ընթանում է մինչև Հասանկալէ, ուր նրա մէջ թափւում է էրզրումի արևելեան բարձրութիւններից բղխող Հասանկալէ գետը: Այդտեղից Արաքսը նորից դէպի արևելք է դառնում, ոտոգելով Վերին-Բասենի դաշտը, որի արևելեան ծայրում մտնում է լեռներով նեղուած խոր հովտի մէջ: Նեղ հովիտը շարունակւում է մինչև Կողբի սահմանները, ուր Արաքսի մէջ է թափւում Ախուրեան գետը: Հնում ամբողջ այդ հովիտը կոչւում էր Երասխաձոր:

Ախուրեանի խառնուրդից յետոյ Արաքսը թէ աւելի մեծանում է և թէ ընդունում է դաշտային գետի կեր-

պարանք: Այնուհետև նրա հովիտը ար-  
 դէն Արարատեան ընդարձակ դաշան է:  
 Գետը գնում է հարաւ-արեւելք ուղ-  
 դութեամբ և որովհետև դաշտը թեք  
 մակերևոյթ ունի, ուստի նա արագըն-  
 թաց է: Մի շարք լեռնային գետեր,  
 որոնք թափուում են ձախ կողմից Ա-  
 րաքսի մէջ Արարատեան դաշտում,  
 այն է՝ Քասախ, Մեծամօր, Հրազդան,  
 Ագատ, Արևելեան Արփաշայ, ահագին  
 գեր են կատարում երկրի տնտեսա-  
 կան կեանքի մէջ: Առանց Արաքսի ջր-  
 րային սխտեմի բազմահարուստ եր-  
 կիրը մեռած անապատ կը լինէր: Ու-  
 շաղրութեան արժանի հանդամանք է,  
 որ Արաքսի հունը Արարատեան դաշ-  
 տում անկայուն է և դարերի ընթաց-  
 քում փոփոխուել է մի քանի անգամ:  
 Պատճառը, բացի աւազուտ փխրուն հո-  
 ղից, եղել են գուցէ և ստորերկրեայ  
 սասանումները: Հունի անկայութիւնից  
 էր, երևի, որ երկար շէին դիմանում  
 Արաքսի վրայ հոռոմայեցիների շինած  
 կամուրջները և այդ պատճառով է որ  
 Արաքսը հոռոմէական բանաստեղծու-

թեան մէջ անուանուած է «կամուրջի շր  
համբերող»։ Արաքսի ափին էին գանուում  
Արարականն նշանաւոր մայրաքաղաք-  
ները Արմաւիր, Արտաշատ։ Վերջինս  
ունէր Տափերական անունով կամուրջ։

Հին Ջուղայի մօտ Արաքսը ուղ-  
ղւում է գէպի արեւելք։ Բայց այստեղ  
էլ նրան պէտք է լինում պատռել Սիւնի-  
քի և Ղարաղաղի լեռնաշղթան։ Կազմը-  
ւում է նեղ ու մռայլ մի կիրճ։ Արաք-  
սը, նեղուելով ժայռերի մէջ կազմում  
է քարաւազներ (Մեղրիի մօտ) և  
աճագին աղմուկ է հանում անձուկ  
ձեղքուածների մէջ։ Այս ահեղ և վայ-  
րենի տեսարանը մի ճանապարհորդ ա-  
նուանում է «դժոխսաձև» և աւելա-  
ցնում է թէ ուրիշ ոչ մի տեղ չէ կա-  
րելի տեսնել այնքան ուժգնութեամբ  
արգելքների գէժ կռուող մի գետ, որ  
փրփրած՝ այս ու այն կողմ է զարնը-  
ւում, լցնելով նեղ կիրճը ջրային փոշիով։

Ազատուելով այդ քարային թա-  
կարգներից, գետը ձախ կողմից ըն-  
դունում է Բարգուշատ գետը և դուրս  
է գալիս Մուղանի ընդարձակ դաշտը

և միշտ դէպի հիւսիս ուղղելով իր ընթացքը, Չաւադ քաղաքի մօտ խառնրւում է Կուր գետի հետ:

**ՃՈՐՈՒՅ ԵՒ ԿՈՒՐ:** Տեսանք արդէն, որ Ֆրատի արևմտեան ակունքը բրդխում է Օվաճըկի հիւսիսակողմում գանուկ լեռների հարաւային լանջերից, իսկ նոյն լեռների միւս, հիւսիսային լանջերը սկիզբ են տալիս Ճորոխ գետին: Այս աւազանը հին հայկական Սպեր գաւառին է պատկանում:

Սկզբից մինչև վերջ գերազանցօրէն լեռնային ջրառատ մի գետ, Ճորոխը սկսում է իր ընթացքը արևելքից արևմուտք ուղղութեամբ, ապա թեքւում է դէպի հիւսիս-արևմուտք և հասնելով Բաբերդ քաղաքին, բաժանում է նրան երկու մասի և առաջանում է ուղիղ դէպի հիւսիս, դէպի Սև ծովը, որ հեռու չէ այդտեղից: Սակայն Պոնտոսեան լեռնաշղթան ճանապարհ նրան չէ տալիս և նա շուտ է գալիս դէպի արևելք, գնում է գուգընթացաբար իր ակունքներին, մինչև որ

սկսում է թեքուել դէպի հիւսիս-արևելք:

Մինչդեռ նա այսպիսի երկար օձապտոյտ շրջան է գործում, էրզրումի հիւսիս-արևելեան կողմում, Ֆրատի արևելեան ակունքները ծնեցնող Գումմի-դաղի շրջանում, հին հայկական Տայք նահանգի Թորթում գաւառի լեռներից դուրս է գալիս նրա յորդանոս և խոշոր մի ճիւղը, որ այսօր էլ կոչւում է Թորթումի ջուր (Թորթում սու): Այս գաւառի լեռնային խոժոռու գեղեցիկ բնութիւնը մի հիասքանչ տեսարանի մէջ է գրել Թորթումի ընթացքը: Գետը հուն է փորում բարձր սարերի արանքով և այնքան սեղմւում է նրանց մէջ, որ կազմում է մի երկար ու նեղ լիճ: Լճից մի նեղ ելք նրան տանում ցած է թափում քառասուն մետր բարձրութեան վրայից: Լեռնային մեծ ջրվէժի տեսարանը շատ սիրուն է: Ապա հետզհետէ աւելի ևս մեծանալով, Թորթումը գնում է շարունակ դէպի հիւսիս և թափւում է Ճորոխի մէջ:

Թորթումի այս ընդհանուր լեռնային  
բնաւորութիւնը յատուկ է և մայր գե-  
տին: Ճորոխը ամբողջ ժամանակ հո-  
սում է ժայռոտ ու նեղ հովիտով, մեծ  
արագութեամբ, կազմելով բազմաթիւ  
քարավազներ, մանր ջրվէժներ: Հայ-  
կական միւս գետերից նա տարբեր-  
ւում է ոչ միայն այդ արագութեամբ,  
այլ և նրանով, որ նրա կիրճը մեծա-  
դոյն մասամբ անցնում է մեծ ան-  
տառների միջով: Միայն Սև ծովին  
մօտեցած՝ նա գտնում է ընդարձակ,  
դաշտային հուն և բաժանուելով մի  
քանի ճիւղերի, նետւում է ծովի գիրկը:

Չը նայելով գետի կատաղի բնաւո-  
րութեան, Արտուին քաղաքից մինչև  
Սև ծովը նրա վրայ հաստատուած է  
նաւազնացութիւն: Բայց դա մի վտան-  
գաւոր և ահարկու ճանապարհորդու-  
թիւն է անսովոր մարդու համար: Գե-  
տը խիստ սեղմուած է ահագին բարձ-  
րութիւն ունեցող ժայռի պատերի մէջ:  
Այնքան բարձր են այդ պատերը, որ  
վերևից նայողին գետը երևում է իբրև  
սառած, անշարժ կանգնած մի մոխրա-

գոյն զանգուած: Ճորոխը այդ ճեղ-  
քուածի մէջ յաճախակի պտոյաներ է  
գործում. շատ են այնպիսի տեղեր,  
ուր նրա յատակից դուրս են ցցւում  
ժայռեր, որոնց ընդհարուելով զետը,  
ձիւնի պէս սպիտակ փրփուր է դառ-  
նում: Շատ են և այնպիսի տեղեր, ո-  
րոնց վրայով է վազում նա: Բայց այս  
բոլոր վտանգները արհամարհում է  
մարդու հնարագիտութիւնը: Կատաղի  
են ալիքները, բայց համարձակ ու ճար-  
պիկ են նրանց վրայ սահող նաւակ-  
ները (կախիկ):

Այդ նաւակները տափակ յատակ  
ունին, երկար են ու նեղ, երկու կող-  
մից ունին սուր քթեր: Նրանք պատ-  
րասուում են տեղացիների ձեռքով և  
գարմանալի դիմացկանութիւն ունին:  
Նաւաւարները երկու-երեք հոգի են,  
որոնք գործում են թիակներով. Իսկ  
զեկավարը նաւակի տէրն է, ուէյսը, որ  
հպարտ ու անխռով կանգնում է առ-  
ջևում, ունի բաւական հուժկու բազուկ-  
ներ, բաւական մեծ ճարպիկութիւն և

շափազանց լաւ է ճանաչում իր հարազատ գետը:

Գետի լայնութիւնը մինչև Սև ծով 10—20 սաժէն է, իսկ երկարութիւթիւնը 60 վերստ: Լաւ ժամանակին, երբ ջրերը շատ են, այդ տարածութիւնը նուակով կարելի է անցնել 5 ժամում: Անձանօթ ուղևորը, առաջին անգամ նստելով նաւակի մէջ, պաշարւում է ահ ու դողով: Նա սլանում է վտանգից վտանգ և գժբախտութիւնը նրան անխուսափելի է թւում:

«Ահա—գրում է ականատեսը—ձեր առջև ցցուած է սեպացած ժայռը, որ երկնքին է հասնում. թւում է թէ նա կարել է հունը (ճորոխը սուր անկիւնով պառոյտ է գործում և նրա հոսանքը չէ երևում), իսկ նրա տակ եռում և փրփրում է ջրվէժը, համարեա մի արշին բարձրութեամբ, որ բարկացած ցատկում է քարաւազ կազմող քարերի վրայով, որոնք կարել են գետի հունը: Ուղղակի այդ քարաւազի վրայով էլ նետի պէս թռչում է նաւակը դէպի սեպացած ժայռը, աւելի և ա-

ւելի արագացնելով իր վազոցը: Մի  
րոպէ ևս, և դուք անխուսափելի կեր-  
պով պիտի փշուր փշուր դառնաք,  
դարնուելով այդ վայրենի, անհրապոյր  
ժայռերին, այդ սև քարերին, որոնք  
տեղ տեղ դուրս են ցցուած ձիւնի պէս  
սպիտակ փրփուրի միջից»: Սակայն,  
մինչդեռ սարսափահար ուղևորը նա-  
յում է անխուսով իր տեղը կանգնած  
սէյսին, որ իմանայ թէ ինչ պիտի լի-  
նի իր ճակատագիրը, նաւակը ճար-  
պիկ ու արագ ղեկավարութեամբ ար-  
ագ և աննկատելի անցնում է վտան-  
գաւոր տեղը և շարունակում է սլա-  
նալ արագավագ ջրերի վրայ: Սև ծո-  
վից նաւակները յետ են բերւում ե-  
րեք օրուայ ընթացքում. յետ բերող-  
ները ափով են գնում, թոկերով քա-  
շելով նաւակը:

Հայաստանի սահմաններում և մաս-  
նաւորապէս Բարձր Հայքի արևելեան  
ծայրերում են գտնւում և Անգրկով-  
կասի մեծ գետի, Կ ու ը ի ակունքները:  
Հին Տայք նահանգի Կող գաւառն է  
նրա ծննդավայրը, որ այժմ կոչւում

է Գեօլէ: Այդտեղ, Չըլղըր լճի հարա-  
 արևմտեան կողմում և Կարսի լեռնե-  
 րի թիկունքում գտնւում է Պօշեփան  
 անունով սարահարթը, որ ունի 6500  
 ոտնաչափ բարձրութիւն: Մի անհիւր-  
 ընկալ, դաժան կլիմայ ունեցող դաշտ,  
 որ ծածկուած է ճահիճներով, խակ  
 դարնանը, հալոցքի ժամանակ, համա-  
 րեա ամբողջովին դառնում է ճահ-  
 ճային մի լիճ: Այդ ջրերից կազմւում  
 է Մուղմիշ գետակը, որ կուրի ամե-  
 նաառատ աղունքն է: Նա գնում է դէ-  
 սի հիւսիս և խառնւում է ուրիշ երեք  
 գետակների հետ Գեօլէ դաշտում, որ  
 թէև նոյն բարձրութիւնն ունի, բայց  
 կլիմայական պայմաններով աւելի նը-  
 պաստաւոր է բնակութեան համար:  
 Չորս գետակների խառնուրդը դաշտի  
 հիւսիսային անկիւնում կազմում է  
 կուր գետը, որ և այդտեղ մտնում է  
 Սաիրմէ կոչուած կիրճը:

Շարունակելով իր ընթացքը հարա-  
 լից հիւսիս ուղղութեամբ, գետը մըտ-  
 նում է Արդահանի դաշտը, որ արդէն  
 մի բարեբեր, սեահող երկիր է: Այս-

տեղ նա արդէն այնքան մեծացած է,  
որ գարնանը միանգամայն անանցա-  
նելի է դառնում: Դաշտից նա մըտ-  
նում է 2300 սանաչափ խորութիւն  
ունեցող ժայռոտ մի ձեղքուածի մէջ,  
պահելով իր նախկին ուղղութիւնը:

Ախալցխայի սահմաններին մօտ նա  
դէպի հիւսիս-արեւմուտք է թեքւում,  
բայց այդ քաղաքի մօտից շուռ է գա-  
լիս դէպի հիւսիս արևելք. Բօրժօմի  
կիրճից դուրս գալուց յետոյ գետի ըն-  
թացքը ուղղւում է դէպի արևելք: Ո-  
ւոգելով Վրաստանը և իր ձախ կող-  
մից ընդունելով ջրառատ օժանդակ-  
ներ կովկասի գլխաւոր լեռնաշղթայից,  
կուրը հարաւ-արևելեան ուղղութեամբ  
գնում հասնում է Աղուանից դաշտը,  
իւր մէջ ընդունելով և Փոքր կովկասի  
ջրերը, որոնց մէջ յիշատակելի են  
Խրամ, որի մէջ է թափւում Չորագե-  
տը (Դեբեդ), Աղստև և Թարթար: Մու-  
ղանի դաշտով նոյն հարաւ-արևելեան  
ուղղութեամբ առաջանալով, կուրը  
խառնւում է Արաքսի հետ և թափ-  
ւում է Կասպից ծովը:

Այս գծագրած ուղղութեամբ ընթացող մեծ գետը մի ժամանակ Հայաստանի սահմանագիծն էր, որ բաժանում էր նրան Վրաստանից և Աղուանից երկրից:

**ՏԻԳՐԻՍ:** Միջերկրականի, Պարսից ծոցի և Սև ծովի մէջ եղած գետերից մեծագոյնն է Տիգրիսը, որի աղուները արդէն հարաւային Հայաստանին են վերաբերում: Եփրատի նման նա էլ ունի երկու, բայց աւելի փոքր ճիւղեր, արևմտեան և արևելեան:

Արևմտեան ճիւղը մեզ փոխադրում է Խարբերդի բարեքեր երկիրը: Այդ բաղաքից դէպի հարաւ-արևելք, ութ ժամ հեռաւորութեան վրայ, գտնւում է լեռնային մի գեղեցիկ լիճ, որ տեղական հայերի մէջ յայտնի է Ծովք անունով, իսկ թիւրքերէն կոչւում է Գէօլջուկ: Լճի լեռները ձգւում են նոյն այդ հարաւ-արևելեան ուղղութեամբ դէպի Մալաթիա և այդտեղով էլ անցնում է Դիարբեքիր (Տիգրանակերտ) տանող ճանապարհը:

Ահա այդ լճի մօտ, քարայրերից բլր-  
խում են աղբիւրներ, որոնցից կազմուում  
է Տիգրիսի արևմտեան ափունքը: Նա  
հաղորդակցութիւն չունի Մովք լճի  
հետ: Եփրատը երեք կողմից պատում  
է այն սարի շուրջը, որից բղխում է  
Տիգրիսը և սրա ափունք-աղբիւրները  
հազիւ երկու հազար քայլ հեռու են  
Եփրատի ափից: Բայց նրանք չեն թափ-  
ւում Եփրատի մէջ, այլ գնում են դէ-  
պի հարաւ և հաւաքում իրանց մէջ  
շատ գետակներ: Գետը իջնում է Գիար-  
բէքիւր արդէն բաւական մեծացած և  
պտոյտ անելով այդ քաղաքի երկու  
կողմով, գնում է արևելեան ուղղու-  
թեամբ, մինչև որ խառնւում է ար-  
ևելեան ճիւղի հետ:

Այս ճիւղը սկիզբ է առնում վանի  
լճի հարաւային ափերին, Նօրդուզ գա-  
ւառում, Հոգեաց վանքից վերև: Տեղի  
դիրքը լեռնային է, հարուստ բուսա-  
կանութեամբ և այլ գեղեցկութիւննե-  
րով: Օլաման անունով ասորի գիւղի  
մօտ լեռան մի ճակատ կայ, այդտեղ  
էլ Տիգրիսի սկիզբն է: Ահա ինչպէս է

այդ տեղը նկարագրուժ մեր հեղի-  
նակներինց մէկը (Սրուանձտեան)։

«Ի վեր, որ գագաթն է այդ գեղե-  
ցիկ ճակատին, և հոս ամենայն ինչ  
ոսկեղէն է։ Արևուն ճառագայթը ոս-  
կեփայլ։ Թեք թռչնոց ոսկեգոյն։ Չայն  
երգոց հաւուց ի ձայն ոսկելար քնարի։  
Յողունք խոտոց և բուսոց ոսկի։ Ծաղ-  
կունք ամենայն, և ամենուրեք ծաղ-  
կասփիւռ, շուշանն ու համասփիւռ,  
տերևն ոսկի, տեսիլն ոսկի, միայն քա-  
րեր կան բոսորային կարմիր, և այդ  
քարերու մեծամեծ բեկորներէն շէն-  
քեր կը տեսնուին ի տեղիս տեղիս,  
զորս կը բացատրեն մեզ կողգունցի  
հայն և Օլամանցի Ասորիք, թէ Ազնա-  
ւորաց բերդ են։ և Ազնաւորաց գերեզ-  
մանք։ Քանի մը առաջաւոր ակունք  
կը բղխին այս տեղէն, ամենն ևս ան-  
մահութեան ջրեր, բայց բուն ակն՝  
մէկն է»։

Հետաքրքրական է, որ Խարբերդի  
(արևմտեան) ճիւղի վրայ էլ, ինչպէս  
և Նփրատի նոյն ճիւղի վրայ, չը կայ  
գրախտի աւանդութիւնը, մինչդեռ

յայտնի է որ ըստ տարածուած բա-  
 ցատրութեան՝ Տիգրիսն էլ դրախտի  
 շորս գետերից մէկը պիտի եղած լի-  
 նի: Դրա փոխարէն՝ Նորդուզի (արե-  
 ւելեան ձիւղի) ժողովուրդը մեծարում  
 է Տիգրիսի աղուէնքը մի հաւատալիքով,  
 որ նոյն աւանդութեան հետքն ունի իր  
 մէջ: «Ամեն տարի, — պատմում են  
 մարդիկ, — Համբարձման տօնին, առա-  
 ւօտ, անմահութեան խնձոր մի հրեշ-  
 տակներէն կը դրուի այս (գլխաւոր)  
 ական ջրի մէջ, ուր ամենէն կանուխ  
 հասնողն միայն կը տեսնէ. բայց երբ  
 ձեռն կը կարկառէ առնելու, խնձորն  
 այլ ևս չերևիր: — Ափսո՛ս: Բայց տես-  
 նելն ալ հերիք է, ըսէք թէ ի՞նչ կերպ  
 ի՞նչ գոյն և ի՞նչ մեծութիւն ունի: —  
 Ո՞ր Ազամորդին կարող է պատմել,  
 կ'սյ անոր նման բան մը որ հասկը-  
 նենք. երբ դրախտն երթանք՝ պիտի  
 տեսնենք ու վայելենք»։

Նորդուզի ձիւղը արեւելքից արե-  
 մուտք ուղղութեամբ առաջ գնալով,  
 մեծանում է, ընդունելով բազմաթիւ  
 լեռնային գետեր, որոնցից մէկը սկիզբ

է առնում Վանի լճի հարաւային  
ափից մօտ: Ապա նա մտնում է  
Բօհտան գաւառի լեռների կիրճը և  
ստանում է Բօհտան-սու անունը: Սը-  
ղերդի մօտ նրան միանում է հիւսի-  
սից եկող մի մեծ ճիւղ ևս, որ սկիզբ  
է առնում Վանի լճի հարաւ-արեւմը-  
տեան անկիւնի բարձրութիւններից և  
անցնելով Բաղէշ (Բիթլիս) քաղաքի մի-  
ջով կոչւում է Բիթլիս-սու:

Տիգրիսի այս ճիւղի մասին հին  
աշխարհը զարմանալի հասկացողու-  
թիւն ունէր: Յոյն աշխարհագիր Ստրա-  
բօնը պատմում է թէ Տիգրիսը, իջնե-  
լով Նպատ լեռներից, անցնում է Վա-  
նի լճի միջով, առանց, սակայն, խառ-  
նելու իր ջրերը լճի բորակային ջրերի  
հետ: Այս հրաշալի երևոյթի պատճա-  
ռը, հռչակաւոր յոյն աշխարհագրի  
կարծիքով, Տիգրիսի հոսանքի ծայրա-  
գոյն արագութիւնն էր: Նա ասում է  
թէ «Տիգրիս» բառը մեղական (մա-  
րական) լեզուի մէջ նշանակում է նեա  
արձակել: Հետաքրքրական է որ  
Ստրաբօնի վկայութեամբ Տիգրիսի մէջ

կայ ձկների մի մեծ բազմազանութիւն, մինչդեռ Վանի լճում միմիայն մի տեսակ ձուկ է գտնւում: Ուրեմն գետի ձկներն էլ հոսանքի հետ արագ անցնում էին լճի միջով, առանց մընալու բորակային ջրերի մէջ: Հասնելով լճի միւս ափը, շարունակում է յոյն աշխարհագիրը, Տիգրիսը կորչում է անդունդների մէջ և երկար ժամանակ գնալով գետնի տակով, նորից դուրս է գալիս հողի երեսը:

Նոյն այդ զրոյցը աւելի ծաղկեցրած պատմում է և մի ուրիշ հին աշխարհագիր, Պլինիոսը: Նա ասում է թէ Վանի լճի ջրերը այնպիսի յատկութիւն ունին, որ ինչ էլ գցէք նրանց մէջ, չի սուզուի: Եւ Տիգրիսն էլ վազում է լճի մակերևոյթի վրայ: Նոյն հեղինակի վկայութեամբ, Տիգրիսն ու Արածանին այնքան իրար մօտ են հասում, որ երբ ջրերը շատանում են և դուրս են գալիս ափերից, երկու գետերը միանում են, բայց չեն խառնուում իրար հետ, որովհետև Արածանին աւելի թեթև ջուր ունի և այդ

սլատճառով էլ հոսում է Տիգրիսի վը-  
րայով: Պէտք է ասել որ այս հին գը-  
րոյցների արձագանգները մնացել են  
և տեղական ժողովրդի աւանդութիւն-  
ների մէջ: Մուշի դաշտի վերին մա-  
սում գետնից դուրս է թափւում մի  
մեծ և անուշահամ աղբիւր նորշէն ա-  
նունով: Ժողովուրդը հաւատում է թէ  
այդ աղբիւրը նիմրուզ-դաղի միջոցով  
կապ ունի Վանի լճի հետ և սլատում  
է որ մի հովիւ իր ցուպը, որի ծայ-  
րին կապած էր փողով լիքը մի շոր,  
անդգուշութեամբ զցել է լիճը, մի քա-  
նի ժամանակից յետոյ գտել է այն  
նորաշէնի աղբիւրի մէջ:

Վանի լճի նկարագրութեան մէջ  
մենք տեսանք արդէն, որ այդ գրոյց-  
ները ծնուել են այն հանգաման-  
քից, որ Տիգրիսի ափունքները շատ  
մօտ են լճի եզերքին: Սակայն մինչև  
այժմ կատարուած քննութիւնները չեն  
ցոյց տուել որ այդ ափունքների ջու-  
րը իր յատկութիւններով և բաղադրու-  
թեամբ նման լինի լճի ջրերին: Հին  
գրոյցին ամենց շատ ոյժ է տուել, ինչ-

պէս երևում է, մանաւանդ Տիգրիսի  
այն աղբիւրակներ, որ գտնւում է լճի  
հարաւային ափերում, Գիւղէլ գերէ ա-  
նունով իսկ որ գեղեցիկ ձորի մէջ,  
Սուշ գիւղի մօտ:

Աղբերգից քիչ հեռու Բոհտան-սուն  
խառնւում է Դիարբեքիից եկող Խար-  
բերդի (արևելեան) ճիւղի հետ: Այնու-  
հետև մեծ գետը ուղղում է իր ըն-  
թացքը գէպի հարաւ: Այսպէս պատ-  
ուելով Տաւրոսի և Քրդիստանի լեռնե-  
րը, նա իջնում է Միջագետք, ընդու-  
նելով ուրիշ մեծ օժանդակ գետեր,  
որոնցից նշանաւոր են Մեծ և Փոքր  
Զար գետերը: Եւ գնում է կենդանաց-  
նելու Միջագետքի անհուն գաշտերը,  
մինչև Եփրատի հետ խառնուելը:

Այսքան ջրառատութիւնը արդէն ապացոյց է որ հայկական սարահարթը, մանաւանդ եթէ նրան համեմատենք հարեան Իրանի հետ, ունի ընդհանրապէս խոնաւ կլիմայ: Բայց դա միևնոյն ժամանակ և ցամաքային կլիմայ է իր սուր և խիստ փոփոխականութեամբ: Միայն Սև ծովի ափերն են որ ենթարկուած են ծովի մեղմացուցիչ ազդեցութեան: Մնացած տեղերում Հայաստանը, իբրև մի մասնիկ Ասիական մեծ սարահարթի, կլիմայական հակադրութիւնների երկիր է: Ընդհանրապէս ամառը շատ տաք է և ձմեռը շատ ցուրտ. Երևանում, Արար-

սի հովտի այդ հիւսիսային սահմանում, որ ունի հազար մետր բարձրութիւն, ձմեռը ցրտերը հասնում են—30 և մինչև իսկ—38 աստիճանի (յունւար ամսում միջին թուով—15<sup>0</sup>), իսկ ամառը տաքը հասնում է 40, մինչև անգամ 44 և 45 աստիճանի: Այս ժամանակ—ասում է Ռէկլիւն—այլ ևս որ և է եւրոպացի չէ կարող դիմանալ և ստիպուած է լինում ապաստանել լեռների, ձորերի հովանիներում: Այս պատճառով էլ դժնդակ տենդերը և ուրիշ հիւանդութիւնները շատ յաճախ են երևանում: «Թիֆլիսում, ասում է հայր, մատաղահասը ծերից չէ տարբերում, երևանում՝ կենդանին մեռածներից»:

Իսկ էրզրումում գարուն համարեա չէ լինում: Չմեռուայ խոր ձիւները սկսում են հալուել յանկարծ, փոքրիկ գետակներն ուռչում են մեծանում և արեն սկսում է այրել: Ամառը տօթադին է, խոտաբոյսերը շտապում են հասակ քաշել, հասունանալ, բայց և այդպէս, շատ անգամ ցրտահար են լինում, մանաւանդ որ առաւօտները

անհասարակ օդի բարեխառնութիւնը  
շատ ցած է լինում: Ամառուայ միջին  
բարեխառնութիւնն է 24°, բայց յա-  
ճախ է պատահում, որ յունիսի վեր-  
ջերին և յուլիսի սկզբին լեռնային  
բարձրութիւնների վրայ բուքեր են լի-  
նում և տեղում է առատ ձիւն:

Դաշտերի ոռոգումը ամառուայ շո-  
գերին՝ երկրագործութեան անհրաժեշտ  
պայմանն է շատ տեղերում: Սաղոդե-  
նիները աշնանը պիտի թաղուին հողի  
տակ, որպէս զի ձմեռուայ ցրտերից  
չը փասուեն: Հայաստանի նոյն իսկ  
հարաւային կողմերը կլիմայական տար-  
բեր հանգամանքներ ունեն, քան մի  
և նոյն աշխարհագրական լայնութեան  
վրայ գանուող ուրիշ երկիրները: Այս-  
պէս, Վանի շրջականերում բանում են  
նարինջ և կիտրոն, բայց ձիթենին այդ-  
տեղ չէ կարող ապրել, մինչդեռ, օրի-  
նակ, Ֆրանսիայում ձիթենիների աճ-  
ման շրջանը աւելի դէպի հիւսիս է  
տարածւում:

Այս հակադրութիւններն ու առանձ-  
նայատկութիւնները կախուած են մի

շարք ընդհանուր և տեղական պայմաններից: Առաջնակարգ դեր կատարում են այն քամիները, որոնք տիրապետում են հայկական լեռնաստանում: Եւ այդ՝ շնորհիւ այն հանգամանքի, որ Հայաստանի լեռնաշղթաները միապագայ շարքեր չեն կազմում, ինչպէս, օրինակ, Կովկասեան գլխաւոր շղթան, այլ կատարուած են մեծամեծ միջանցքներով, որոնք և թոյլ են տալիս քամիներին տարածուել ամեն տեղ:

Բարձր Հայքի կլիման Սև Ծովի խիստ ազդեցութեան է ենթարկուած: Չմեռը այդ ծովից փչում են քամիներ, որոնք առատ ձիւն են բերում: Հայկական դաժան, ձիւնառատ ձմեռը նկարագրուած է դեռ ևս հին օտարազգի հեղինակների ձեռքով իբրև այս երկրին միայն յատուկ մի երևոյթ: Հռոմայեցի պատմագիր Տակիտոսը հայկական ձմեռն անուանում է «դրժնդակ»: Ստրաբոնը պատմում է որ ձմեռը հիւսիսային Հայաստանի (Վրաստանի սահմանակից) լեռներում

ձիւնը անքան առատ է լինում և բու-  
քերը անքան սաստիկ, որ յաճախ ճա-  
նապարհորդները թաղում են հիւսերի  
տակ. միակ նախազգուշական միջոցն  
այն է, որ նրանք իրանց հետ տանում  
են երկար ձողեր, և երբ ձիւնակոյ-  
տերի տակ են մնում, այդ ձողերը թէ  
թոյլ են տալիս որ օդ ներս մտնի  
թաղուածների շնչառութեան համար և  
թէ նշան են լինում որ ձիւնի տակ  
մարդիկ կան. այդ նշանով էլ գալիս են  
մարդիկ օգնութեան, հանում են թա-  
ղուածներին ձիւնի տակից:

Հայաստանի ձմեռը մանրամասն  
նկարագրել է Կսենոփոնը, որ 400  
թուականի (Ք. ա.) ձմեռը 10 հազար  
յոյն զօրքի հետ Բաբելոնից Հայաստա-  
նի վրայով նահանջում էր դէպի Սև  
Ծովը: Ձիւնը հասնում էր ձիերի փո-  
րին: Անսովոր զինուորները շատ տա-  
ռապանքներ կրեցին, շատ մարդիկ և  
անասուններ ցրտամահ եղան: Ձիւնե-  
րի անհուն տարածութիւնները վատ  
էին ազդում մանաւանդ տեսողութեան  
վրայ, և զինուորները ստիպուած էին

իրանց աչքերի առջև մի սև առարկայ  
բռնել: Մի հայ գիւղի տանուտէր սո-  
վորեցրեց նրանց թէ ինչպէս պէտք է  
պաշտպանուել ցրտից:

Բայց ձմեռուայ խստութիւնը միայն  
բարձրութիւններին չէ յատուկ: Հայոց  
Տիգրան Մեծ թագաւորի անթիւ անհա-  
մար զօրքերը չը կարողացան դիմադրել  
Հռովմայեցի զօրավար Լուկուլլոսի գոռ  
արշաւանքներին. միայն հայոց ձմեռն  
էր, որ ազատեց Տիգրանի հիւսիսային  
մայրաքաղաք Արտաշատը հռոմէացի-  
ների ձեռքից: Արարատեան նահանգի  
սահմաններում, Արածանի գետի վրայ,  
աշնան մէջ, յանկարծ ձիւն եկաւ, սաս-  
տիկ ցրտեր և սառնամանիք սկսուե-  
ցին: Հռոմէական լէգէոնները չը կա-  
րողացան դիմանալ այդ դաժան եղա-  
նակին և հրաժարուեցին առաջ գնալ:  
Ոչինչ չը կարողացաւ անել յաղթական  
Լուկուլլոսը այդ բացարձակ անհնա-  
զանդութեան դէմ և ստիպուած էր  
դուրս հանել իր զօրքը Հայաստանի սահ-  
մաններից, տանելով նրան Միջագետք  
«ամենաբեր և արևահայեաց գաւառը»:

Պակաս խստաշունչ չէ ձմեռը և  
 Հայաստանի հարաւային կողմերում,  
 օրինակ Տաւրոս լեռներում: Սասուն-  
 ցիւները ձիւների ահագին կոյտերի վրայ  
 ման գալու համար հնարել էին մի տե-  
 սակ փայտէ ոտնամաններ: Բաղէշի  
 կողմերում լեռներից մեծ հիւսեր թա-  
 փուելու յիշատակութիւններ կան մեր  
 հին գրականութեան մէջ: Մոկաց աշ-  
 խարհի ձմեռուայ մասին խօսելով, մեր  
 պատմիչ Թովմա Արծրունին գրում է.  
 «Չիւնապատ սառնասոյր առհասարակ  
 պաղեալ էր երկիրն»: Վասպուրական  
 նահանգում կար Օձ անունով մի ձոր.  
 որ այդպիսի անուն ստացել էր, ինչ-  
 պէս վկայում է պատմիչը, մահաբեր և  
 սաստկաշունչ քամու պատճառով: Մով-  
 սէս Սորենացին էլ տալիս է Կորգուաց  
 լեռների մի ձմեռնային պատկեր: Ար-  
 գար թագաւորի քոյր Օտէն ճանա-  
 պարհորդութեան ժամանակ բուքի է  
 բռնւում: Ամբողջ կարաւանը ցաք ու  
 ցրիւ է ընկնում: Իսկ Օտէի որդի Սա-  
 նատրուկին նրա դայեակը գնում է իր  
 երկու ծծերի մէջտեղը և մնում է ձիւ-

նի տակ երեք օր և երեք գիշեր, մինչև որ գալիս են որոնողները և գրանում են դայեակին և մանուկին:

Երկարատև ձմեռուայ ձիւների այս անսահման քանակութիւնն է, որ այնքան ջրառատ է դարձնում Հայաստանի բարձրաւանդակը: Ռէկլիւն ասում է որ Սև Ծովը իր քամիներն ուղարկելով Բարձր Հայքի սարահարթը, այդպիսով իր ջրերը շարունակաբար թափում է Հնդկական Ովկիանոսը Եփրատի միջոցով:

Ամառը Հայաստանում հիւսիսային և արևելեան քամիներն են տիրապետում, որոնք գլխաւոր բեռային հասանքի մի ճիւղաւորումն են կազմում և բերում են շոր օդ, որ ցրւում է ամպերը: Իսկ խոնաւութիւն բերում են արևմտեան քամիները, գլխաւորապէս Միջերկրական ծովից փշող քամին: Այդ քամին է, որ ամառը աւելում է Արարատեան արևակէզ դաշտը և որ յայտնի է հայերի մէջ «Լուսաւորչի քամի» անունով: Նա փչում է անփոփոխ ամեն օր, սկսուելով ճաշից

յետոյ հինգ ժամին և տեսում է գիշե-  
րուայ ամենամեծ մասը: Քանի որ  
փշում է այս քամին, բնակիչները փակ-  
ւում են իրանց տներում՝ ազատ  
մնալու համար փոշու և մինչև իսկ խո-  
շոր աւազի յորձանքից, որ մրրկում է  
օդի մէջ:

է.

## ԲՈՒՍԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Հայաստանի հողը առհասարակ պլու-  
ղաբեր է համարուում: Մի երկիր է  
դա, որ առանձնապէս նպաստաւոր է  
տնտեսութեան երկու կարևորագոյն  
ճիւղերի — երկրագործութեան և անաս-  
նապահութեան համար:

Մենք տեսանք որ հայկական լեռ-  
նաստանի մեծագոյն մասը, մանաւանդ  
այն, որ նրա կենտրոնական մասերն  
է կազմում, համարեա բոլորովին զըր-  
կուած է անտառներից կամ, խօսելով  
այս երկրի բնակիչների լեզուով, ան-  
փայտ է: Լեռների հսկայական լան-  
ջերը ծածկւում են միայն պարարտ  
խոտերով և արօտատեղիներ են, սա-

կաւ պիտանի կամ բոլորովին անպէտք  
հացարոյսերի մշակութեան համար։  
Տորենի արտերը պատահում են և 1800  
մետր բարձրութեան վրայ, իսկ գարին  
աւելի ևս բարձր է գնում, մինչև 2000  
մետր, բայց այս տեղերում նրանք  
արդէն ենթակայ են գարնանային ան-  
ժամանակ ցրտերից փշանալու վտան-  
գին։ Ուստի Հայաստանի բարձր լեռ-  
նամասերը աւելի անասնապահութեան  
և հետևաբար թափառական կեանքին  
են նպաստում, քան երկրագործու-  
թեան։ Եւ սկսած ամենահին ժամա-  
նակներից մինչև այսօր դրութիւնը  
միևնոյնն է մնացել—միլիոնաւոր ոչ-  
խարների և այլ շորքոտանիների հօ-  
տեր, որոնք թափառում են այդ դա-  
լար արօաներում։ Մի ճանապարհորդ  
հաշուել է որ Մասիսի և Պարսից ծոցի  
մէջ տարածուած արօաներում արա-  
ծող ոչխարների թիւը 400 միլիոնից  
պակաս չի լինի։ Իսկ մի ուրիշ ճանա-  
պարհորդ կարծում է որ միայն Կ. Պօլ-  
սի շուկան Հայաստանի լեռներից ստա-  
նում է տարեկան  $1\frac{1}{2}$  միլիոն ոչխար։

Հօտերի բազմութիւնն է կազմում այս կողմերի բնակիչների հարստութեան ամենագլխաւոր աղբիւրը:

Իսկ լեռնաշխարհի ցած տեղերում, մանաւանդ մի քանի արգաւանդ հովիտներում, տիրում է աւելի բարձր մշակում: Այստեղ հողագործութիւնը արտայայտում է ոչ միայն հացաբոյսերի, այլև ուրիշ օգտաւէտ բոյսերի (բամբակ) մշակութեան մէջ: Տնտեսութեան կարևորագոյն ճիւղերից մէկը այդ տեղերում այգեգործութիւնն է, հետևաբար և գինեգործութիւնը: Հայաստանի գինիները իրանց լաւ յատկութեամբ շատ յայտնի էին դեռ հին աշխարհում: Ընտիր տեսակի են և Հայաստանի ծառապտուղները, որոնք և մեծ համբաւ են վայելում: Բուսաբանները Հայաստանն են համարում մի քանի մրգերի, մասնաւորապէս խաղողի հայրենիքը:

Իր բուսական հարստութիւններով առաջին տեղը հայոց աշխարհում բռնում է Արարսի հովիտը (Արարատեան գաշար) և դեռ Ստրաբոնը անուանում

է այդ հարստութիւնը «անգուգական»։  
Հռչակուած են այդ կողմից և Պար-  
բերդի ու Վանի դաշտերը։ Իսկ Մուշի,  
Ալաշկերտի, Շիրակի և այլ հովիտները  
ստացել են հացի շտեմարանների համ-  
բաւ։

Թէև ընդհանրապէս անփայտ են  
հայկական լեռները, բայց մասնաւո-  
րապէս կան նահանգներ, որոնք հա-  
մարեա ամբողջովին անտառներին են  
պատկանում։ Կուսական թանձրախիտ  
անտառների ընդարձակ տարածութիւն-  
ներ յատուկ են մանաւանդ հիւսիսա-  
յին ծայրագաւառներին։ Այդ կողմից  
յայտնի են մանաւանդ Արցախ և Տայք  
նահանգները, ինչպէս նաև Գուգարքը,  
մասամբ Սիւնիքը։

## Ը.

## ԿԵՆՊԸՆԻՆԵՐ, ՀԱՆՔԵՐ

Հայաստանի բնութիւնը, ինչպէս տեսանք, առանձնապէս նպաստում է անասնապահութեան: Տնային կենդանիներն են ոչխար, այծ, կով, գումէշ, ջորի, էշ: Բայց անասնապահութեան ամենակարևոր ճիւղը, որով հայկական լեռնաշխարհը հռչակուած էր շատ հրնուց, ձիաբուծութիւնն էր: Չիաներն էին երկրի վաճառականութեան գլխաւոր առարկան փիւնիկեցիների ժամանակ: Պարսից թագաւորները Հայաստանից հարկ էին ստանում տարեկան 20 հազար մատակ ձի. Հայաստա-

նի գինուորական ոյժը գլխաւորապէս  
 ձիաւոր էր և հայկական հեծելազօրքը  
 անուն ունէր Պարսկաստանում և ու-  
 րիշ տեղերում: Հռչակուած էր մանա-  
 ւանդ ձիու մի տեսակը, որ կոչւում  
 էր ն ժ ո յ գ: Նա ունէր խոշոր հասակ,  
 «անգուգական գեղեցկութիւն», ինչ-  
 պէս վկայում է Ստրաբոնը, իսկ նրա  
 յատկութիւնները բնորոշելու համար  
 մեր հին գրողները գործ են ածում  
 «սրավար», «սրաթռիչ», «օգապարիկ»  
 բառերը: Հին դարերի հոյակապ երի-  
 վարներն էին այդ նժոյգները և Ասո-  
 րեստանի ու Պարսկաստանի թագա-  
 ւորները նրանցով էին լցնում իրանց  
 ախոռները: Ստրաբոնը, երկարօրէն  
 նկարագրելով Հայաստանի ձիաները,  
 հաւատացնում է որ այդ երկրի ա-  
 րօտներն են պատճառ, որ այդ տեսակ  
 գեղեցիկ ձիեր են լինում: Նա, յիշա-  
 տակում է Հայաստանի այն գաւառ-  
 ները, ուր ամենից շատ զարգացած էր  
 ձիաբուծութիւնը — Փանինի, Գոմիսինի  
 և Օրփիոզոնի, որոնց տեղերը մեզ ան-  
 ծանօթ են: Յայանի է միայն որ ձիու

ազնիւ տեսակով հռչակուած տեղերից մէկը մինչև վերջին ժամանակներս Արցախ նահանգն էր: Զիարուծութեան այստեղ նպաստող հանգամանքն այն էր, որ այդ նահանգին սահմանակից է Մուղանի ընդարձակ դաշտը, որ հին ժամանակներից ձիարօտ էր, այսինքն այնպիսի տեղ, ուր յատկապէս ձիերի ահագին երամակներ էին պահում պարսից թագաւորները:

Հայկական լեռները, դաշտերը, գետահովիտները հարուստ են որսի կենդանիներով և թռչուններով—եղնիկ, այծեամ, վարազ, քարայծ, փասիան, կաքաւ, բաղ և այլն: Հայաստանին հռչակ էր տալիս և կենդանական աշխարհի մի փոքրիկ ներկայացուցիչը— «որդան կարմիր»: Դա մի տեսակ միջատ է, որ ապրում է եղեգնաբոյսերի վրայ, Արարատեան դաշտում և որից ստացւում էր այն գեղեցիկ կարմիր գոյնը, որ այժմ, էլ յայտնի է «կօշընիլ» անունով: Որդան կարմիրն էլ Հայաստանի վաճառականութեան մի նշանաւոր առարկան էր:

Իբրև գերազանցօրէն լեոնային երկիր, Հայաստանը, բնականաբար, ունի և լեոնային շատ հարստութիւններ: Հանքերի մէջ աչքի է ընկնում, ամենից առաջ, աղը: Թէ որքան առատ է այդ հանքը լեոնային Հայաստանում, այդ ըստ հին, բայց ոչ ճշգրիտ ստուգարանութեան, ապացուցում են աշխարհագրական մի շարք անուններ, որոնց մէջ «աղ» բառը բաղկացուցիչ մասնիկ է կազմում: Այսպէս են, օրինակ, Դարանաղի, Մանանաղի, Աղիովիտ, անուններ, որոնք ամբողջ գաւառների էին պատկանում: Հռչակուած է, այժմ էլ, Կողբի աղահանքը, որից յետոյ Արաքսի հովտում գալիս է Նախիջևանի հանքը: Աղահանքերի շահագործումը Հայաստանի բնակիչներին յայտնի է եղել նախապատմական ժամանակներից: Այդ են ցոյց տալիս այն քարէ գործիքները, որոնք վերջերս գտնուեցին Կողբի աղահանքում և որոնք մեզ տանում են քարէ դարաշրջանի ժամանակները:

Աղից յետոյ մարդկութեան յայտնի է դարձել պղինձը, որի հարուստ հանքերը այժմ էլ շահագործուում են Հայաստանի գանազան կողմերում: Գրքանից աւելին շահաւոր է երկաթը, մի մետաղ, որի գործածութիւնը, ինչպէս ենթադրում են գիտնականները, առաջին անգամ գտնուել է Հայաստանի լեռներում: Այնուհետև Հայաստանի հանքերի թւում յիշատակուում են ոսկի, արծաթ, կապար, ծրծումբ, գառնիկ, նաւթ և այլն: Ոսկու հանքեր մի ժամանակ կային Հայաստանի երեք կողմերում. Սպեր գաւառում (Բարձր Հայք), Ճորոխ գետի վրայ, Արարատեան գաշտում և Չորրորդ Հայք նահանգի Պաղնատուն գաւառում (այժմեան Արզն): Սպերի ոսկեհանքը այնքան յայտնի էր, որ Ալէքսանդր Մակեդոնացին, ինչպէս վրկայում է Սարաբոնը, նրան տիրելու համար մի գումարտակ զօրք ուղարկեց՝ Մենոնի հրամանատարութեամբ, բայց տեղացիները խեղդամահ արին Մենոնին:

Վերջապէս, Հայաստանի բնութեան պարզեւած հարստութիւնների մէջ չը պէտք է մոռանալ և հանքային ջրերը, որոնք զանազան բաղադրութիւններ ունին: Դրանք առատութեամբ բլխում են համարեա ամեն տեղ:

Ընդհանուր եզրակացութիւնը, որ ինքն ըստ ինքեան հետևում է Հայաստանի բնագրութիւնից, այն է, որ այդ երկիրը բաւականաչափ հարուստ և կարող է իր բնակիչների երջանկութիւնն ապահովելու համար: Անգլիացի ճանապարհորդ Լինչը գրում է. «Եթէ միայն մարդ կոչուած կենդանին փոքր ինչ նուազ շափով այլանդակուած լինէր, Հայաստանը կը դառնար մի համարեա իդէալական շտեմարան իր ժողովրդի համար: Ամրացնող լեռնային օդը, խստաշունչ, բայց առողջ ձմեռը և միշտ զով ամառնային գիշերները, հարաւային արևը, մեծ գետերը, հացաբեր հողի ահագին տարածութիւն-

ները, հանքերի առատութիւնը — երկրի այսպիսի բարեբար արժանաւորութիւնները պէտք է որ զարգացնէին ոյժը մարդու մէջ, նիւթական բարեկեցութեամբ սնուցանէին նրա թեւաւորուած ոգու աճումը և հարկադրէին նրան բացուիլ առատ լոյսի մէջ, ինչպէս ծաղիկ»:

## ՀԱՂՈՐԳԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հայկական «լեռնային կղզին» ներքին և արտաքին հաղորդակցութիւնների կողմից էլ կղզիացած դիրք ունի: Որքան էլ Սև և Կասպից ծովերը աշխարհագրորէն այդ լեռնաստանի սահմանների մէջ են մտնում, բայց սրանք ամենաշատը հայկական ծայրագաւառներն են ունեցել իրանց ազգեցութեան տակ, այն էլ ոչ միշտ.— ծայրագաւառներ, որոնք պետական և առևտրական կեանքի տեսակէտից եղել են աննշան, թոյլ զարգացած, այնպէս որ փոքր իշատէ աչքի ընկնող ազգեցութիւն չեն արել ընդհանուր

դրութեան վրայ: Ուստի Հայաստանը հաղորդակցութեան միջոցների վերաբերմամբ էլ գերազանցօրէն ցամաքային երկիր է: Հայ ժողովուրդը, ընդհանուր առմամբ, ծովագնաց չէր:

Գալով ներքին հաղորդակցութիւններին, այստեղ էլ պակասում է ջրային ճանապարհների յարմարութիւնը: Թէև ջրերով այնքան առատ է երկիրը, բայց լեռնատան է: Հայկական լճերի և գետերի տեղագրութիւնն արդէն մեզ ցոյց տուեց, որ նրանք չեն կարող լինել առաջնակարգ նշանակութիւն ունեցող ճանապարհներ: Այդ ջրերի վրայ եթէ հնարաւոր էլ է եղել նաւարկութիւնը, բայց դա շատ սահմանափակ նշանակութիւն է ունեցել— տեղական հաղորդակցութիւն, մօտիկ տիկերի մէջ: Եփրատի պէս խոշոր գետը թոյլատրում է նաւարկութիւն միայն մի քանի տեղերում, ուր նրա հոսանքը հովիտների միջով է առաջանում: Բայց այդ նաւարկութիւնն էլ մի խեղճ բան է: Երկաթէ նաւակներ հագիւ թէ կարելի լինի գործ ածել: Տե-

դային ազգաբնակութիւնը հնագոյն ժամանակներից միայն մի տեսակ լաստ է կարողացել հնարել՝ գետի ալիքները մի կերպ հուածելու համար: Այդ լաստերը շինուում են ուղղրած տկերի վըրայ և կարող են գնալ միայն վերևից դէպի ցած, գետի հոսանքով:

Մնում են ցամաքային ճանապարհները: Սրանց յարմարութիւնը կախուած է արդէն իւրաքանչիւր շրջանի տեղագրական հանգամանքներից:

Ընդհանրապէս լեռնային են Հայաստանի ճանապարհները: Այն տեղերում, ուր տիրապետում են լեռնակոյտերը, ճանապարհները շատ դժուարամատչելի են և փոխադրական միակ միջոց ամենալաւ դէպքում հանդիսանում են բեռնակիր անասունները: Սարահարթերի վրայ և գետերի խոր ու լայն հովիտներում ճանապարհներն արդէն այնքան յարմարութիւններ են ներկայացնում, որ անիւներն են դառնում փոխադրութեան գլխաւոր միջոցը: Սակայն այս յարմարութիւնը հոյնպէս տեղական հանգամանք ունի, ո-

բովհետև Հայաստանի թէ ցած և թէ բարձր տափարակները ընդարձակ չեն, սահմանափակ տարածութիւններ ունին և, գլխաւորը, կտրատուած են լեռնային բարձրութիւններով: Չուս դաշտային ճանապարհ, որ ունենար ընդհանուր հաղորդակցութեան հանգամանք երկրի գոնէ մեծագոյն մասի համար, չը կայ: Մի սարահարթից միւսը, մի հովիտից միւսը գնալու համար պէտք է անցնել լեռնային շրջթաներով: Իսկ Հայաստանի լեռնանցքները բարձր են (1200—2000 մետր), այդ պատճառով էլ ձմեռը ծածկուում են խոր ձիւնով և համարեա անանցանելի են դառնում սաստիկ բուքերի ժամանակ: Եւ չը կայ ճանապարհ, որի վրայ այդպիսի դժուարութիւններ չը լինեն:

Կարաւանների այն մեծ ճանապարհը, որ Պարսկաստանից տանում է Տրապիզոն, Էրզրումի սարահարթի վրայով, Տրապիզոնի և Բաբերդի մէջ անցնում է մի լեռնանցքով, որի բարձրութիւնն է 1850 մետր: Էրզրումից

Մալաթիա տանող մեծ ճանապարհը, հասնելով Եփրատի ափը Ակն քաղաքի մօտ, կոմաններով բարձրանում է 1000 ոտնաչափ ունեցող լեռնանցքի վրայ, որ սեպացած է գետի նեղ ձորի մէջ, ապա իջնում է և նորից սկսում է բարձրանալ, այս անգամ արդէն 1500 ոտնաչափ: Կլիմայական փոփոխութիւններն այս ճանապարհին շափազանց խիստ են: Փարնան սկզբում, կիրճի մէջ, ծառերը ծաղկած են, իսկ վերևում՝ միապաղաղ ձիւնապատ լեռնազառ է, շատ ընդարձակ:

Տափարակի և լերան, հովիտի և բարձրութեան հակադրութիւնները ներկայացնող տեղադրական միանման հանգամանքներ ունին նաև Արաքսի հովիտից Բայազէտի վրայով Վան, Վանից Բաղէշ, Մուշից Խարբերդ և Էրզրում, Էրզրումից Կարս տանող զըլխաւոր ճանապարհները — տեղ տեղ դաշտային, յարմար նոյն իսկ անիւների համար, տեղ-տեղ լեռնոտ՝ բարձր ու դժուար անցքերով: Աւելորդ է ասել որ լեռնաշխարհում, ինչպէս են,

օրինակ, Արցախ, Սիւնիք, Գուգարք,  
Սասուն և այլն, հաղորդակցութեան  
ուղիներն են լեռնային նեղ ու փոք-  
րիկ կաճանները:

Ժ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ձը նայած, սակայն, հաղորդակցական այս խոշոր դժուարութիւններին, հայկական լեռնակղզին իր ընդհանուր աշխարհագրական դիրքով միջազգային մի շատ կարևոր ճանապարհ է Առաջաւոր Ասիայի արևելեան և արևմտեան մասերի մէջ: Այդ լեռնաստանի վրայով է միայն որ Իրանի սարահարթը հաղորդակցում է Սև և Միջերկրական ծովերի, իսկ Միջագետքը՝ Սև և Կասպից ծովերի աւազանների հետ:

Հայաստանի այդ դիրքի ահագին նշանակութիւնը պարզ ըմբռնելու համար պէտք է ի նկատի առնել այն

սլատմական միջավայրը, որի մէջ գետեղուած է նա, պէտք է ծանօթանալ այն դերին, որ մարդկային ազգի սլատմութեան մէջ կատարել են Հաստանի հարեանները — Միջերկրական ծովը, Պարսկաստանը, Միջագետքը:

Անհունապէս մեծ, հզօր է, այն նըշանակութիւնը, որ ունեցել է Միջերկրական ծովը համաշխարհային քաղաքակրթութեան մէջ: Եւրոպան, Ասիան, Աֆրիկան իրարից անջատող այս մեծ ներքին ծովը իր երկարաձիգ, ընդհանրապէս գեղեցիկ ափերով, որոնք օժտուած են բարեխառն կլիմայի բոլոր բարեմասնութիւններով, կատարել է մարդկութեան անջատ մասերը իրար հետ կապողի, միացնողի դեր: Դա ջրային մի մեծ աւազան է, բայց նոյնչափ մեծ աւազան է եղել և մարդկային ցեղերի հոսանքների համար, որոնք անդիմադրելի շարժումով դէպի նրա ափերն են ձգտել, այդ ափերում են հաստատուել և այդտեղ, այդ միջնաշխարհում, ընդհանուր ուժերով, հաւաքական աշխատակցութեամբ ըս-

տեղծել են Միջերկրական համաշխարհային կուլտուրան:

Նախապատմական մարդկութիւնը վիթխարի շարժումներ էր կատարում. ամբողջ ազգեր ու ցեղեր անդադար տեղափոխւում էին: Եթէ աչքի առաջ առնենք որ այդ տեղափոխութիւնները կատարւում էին արևելքից արևմուտք ուղղութեամբ և հակառակը, ինքն ըստ ինքեան կը պարզուի Հայաստանի դերը, որպէս ճանապարհի, որով պիտի անցնէին արևելքից դէպի Միջերկրականի արևելեան ափերը: Այդ շարժումները ամենահին, անյիշատակ դարերից շարունակւում են մինչև մարդկային պատմութեան այն շրջանը, որ յայտնի է նոր Պատմութիւն անունով, այսինքն մինչև ժՁ. դարը Քրիստոսից յետոյ:

Երկրորդ հարևանի, այն է՝ Իրանի սարահարթի համաշխարհային պատմական դերը պակաս կարևոր չէ: Այդ երկիրը բնական ճանապարհ է Հին Աշխարհի երեք մասերի համար էլ: Ազգերի տեղափոխութիւնների ճանապարհ, համաշխարհային առևտրի ճա-

նապարհ: Իս մի մեծ քաղաքակրթա-  
 կան կայան էր, ուր ազգերը, իրանց  
 տեղափոխութեան միջոցին, կանգ էին  
 առնում, որպէս զի դուրս զան նախ-  
 նական վայրենի դրութիւնից, հաղոր-  
 դակից լինեն քաղաքակրթութեան և  
 ապա շարունակեն իրանց առաջխաղա-  
 ցութիւնը: «Առանց հիմքի չէ,—ասում  
 է Ռէկլիւն որ մենք ամենքս, արև-  
 մտեան և արևելեան ժողովուրդներս  
 —եւրոպացիներ, ամերիկացիներ, հըն-  
 դիկներ, շինացիներ—նայում ենք Ի-  
 րանին, ինչպէս մեր նախնիքների եր-  
 կրին:»

Իսկ Միջագետքը, Հայաստանի եր-  
 կու մեծ գետերով ոռոգուող ընդար-  
 ձակ դաշտավայրը, որ հասնում է  
 Պարսից ծոցին, այն տիեզերահուշակ  
 վայրն է, ուր դարերի անհուն խորու-  
 թեան մէջ (50 և էլ աւել դար Քրիս-  
 տոսից առաջ) վառուեց մարդկային  
 քաղաքակրթութեան առաջին օջախը:  
 Այդտեղ էր Քաղդէան, որին յետոյ յա-  
 ջորդեց Ասորեստանը: Բարձր աստիճանի  
 հասած կուլտուրան, լուսաւորութիւնը

դարձնում էին Եփրատ-Տիգրիսի բարելից հովիտը մի այնպիսի նախանձելի, գրաւիչ կենտրոն, որ դէպի իրան էր քաշում ամբողջ Առաջաւոր Ասիան, դեռ վայրենութեան խաւարի մէջ խարխափող այդ Ասիան: Հայկական լեռնաշխարհը այն բնական միջնաբերդն էր, որ պաշտպանում էր Եփրատ-Տիգրիսեան բարձր քաղաքակրթութիւնը հիւսիսի վայրենի ցեղերից, որոնց անդիմադրելի ձգողութիւնը դէպի այդ հարուստ և բարեբախտ տափարակները փշրւում էր, ընդհարուելով հայկական լեռներին:

Այս բարձր և ամուր միջնաբերդը ռազմագիտական մի հանգոյց է ամբողջ Արևմտեան Ասիայի համար: Ով տէր է Հայկական Բարձրաւանդակին, նա, եթէ ուժեղ է, տիրում է և Պարսից ծոցի ու Միջերկրականի աւազաններին: Հայկական Տաւրոսի ոտների տակ է փռուած Միջագետքը: Էրզրումի միջնաբերդը տիրում է և Ալէքսանդրէտի ծոցին Միջերկրականի վրայ, և

բանալի է ամբողջ Փոքր Ասիային աի-  
րելու համար, իսկ Արածանիի հովիտը  
մի բնական ճանապարհ է դէպի Մի-  
ջերկրական:

Ռազմական այս կարևորութեան  
չափ նշանաւոր էր Հայաստանի դիրքը  
և միջազգային առևտրի մէջ: Այն մեծ  
ճանապարհները, որոնցով անցնում էին  
տեղափոխուող ազգերը և նուաճողների  
բանակները, հաղորդակցութեան մի-  
ջոցներ էին նաև կուլտուրայի և վա-  
ճառականութեան համար:

Ամենակարևոր հաղորդակցութիւնը,  
այն, որ Հայաստանի համար պատմա-  
կան ճակատագիր ստեղծողներից գըլ-  
խաւորն էր, Միջին Ասիայի հետ էր  
կապուած: Երկու ուղղութեամբ էր  
կատարւում այդ հաղորդակցութիւնը:  
Մէկը՝ Սորասանից գալիս էր կասպից  
ծովի հարաւային և արևմտեան ափե-  
րով, Գիլան և Մազանդարան նահանգ-  
ներով, դէպի Արաքսի հովիտը: Բայց  
այս ճանապարհը դժուարութիւններ  
ունի լեռների և ճահիճների պատճա-  
ռով: Միւս ճանապարհը գալիս է նոյն

Խորասանի Հերաթ հռչակաւոր քաղաքից, անցնում է Մէշէդով, այգտեղից Թեհրան, Ղազվին, Մահանա, իսկ այտտեղից Թաւրիզ, որ արդէն շատ մօտ է Արաքսի հովտին: Այս ճանապարհը թէև աւելի երկար է քան առաջինը, բայց յարմար է, հանգիստ, առանց բնական մեծ արգելքների: Այդ պատճառով էլ նա աւելի բանուկ էր, սկըսած նախասպասմական ժամանակներից:

Այս ճանապարհի տիեզերական նշանակութիւնը միայն այն հանգամանքից չէ բղխում, որ դա ամենաբանուկ հաղորդակցութիւնն էր Ծայրագոյն Արեւելքի և Արևմուտքի մէջ ազգերի շրջման, տեղափոխումների համար: Նոյն այդ ճանապարհով էր շրջանառութիւն կատարում միջազգային առևտուրը: Հերաթից միջազգային ճանապարհը ճիւղաւորւում էր և մի ճիւղը Ղանդահարի և Կելատի վրայով մըտնում էր Հնդկաստան: Այս հռչակաւոր ճանապարհը այժմ էլ դեռ չէ կորցրել իր նշանակութիւնը: Գլխաւորապէս այս

ճանապարհի սլատճառով է որ Իրանը եղել է և է այժմ էլ մարդկութեան տենչանքի առարկայ:

Եւ ահա Հերաթի այդ տիեզերական ճանապարհը արեւմտեան ուղղութեամբ գնում կանգ էր առնում Մասիսի ստորոտների մօտ: Այստեղ էլ, այս ստորոտներում, արևելեան այդ մեծ ուղին հանդիպում էր Սև ծովի ճանապարհներին: Իսկ Սև ծովը մի ջրային աւազան է, որ հաւարում է Եւրոպայի այն բոլոր ճանապարհները, որոնք կազմւում են Դանուբ, Դնեստր, Դնեպր և Դօն գետերից:

Մի ուրիշ մեծ, միջազգային ճանապարհ գալիս էր գէպի նոյն Մասիսի ստորոտները Միջերկրական ծովի փերից: Դա փիւնիկեցիների առևտրական կարաւանների ճանապարհն էր, որ ձգւում էր Փիւնիկէի Տիւրոս մայրաքաղաքից Սիրիայի անապատով, իջնում էր Եփրատի վրայ, ուր ճիւղաւորւում էր. մի ճիւղը գնում էր գէպի հարաւ, գէպի Բաբելոն, միւսը՝ գէպի հիւսիս, Արաքսի հովիտով գէպի Կաս-

պից ծովի աւազանը: Այդ գծով էր Բաբելոնը իր ապրանքները ուղարկում հիւսիս, իսկ հիւսիսի ազգերը իջնում էին Միջագետք: Այդ գծի հետ էր միանում այն մեծ ռազմական ճանապարհը, որով Եգիպտոսի բանակները, քաղաքակրթութիւնը, բարքերը գալիս հասնում էին Եփրատի հովտին:

Փիւնիկեցիների անմիջական յաջորդները համաշխարհային առևտրի ասպարէզում յոյներն էին, որոնք ճանապարհ բացին մինչև Հնդկաստան: Հնդկաստանից դուրս բերուած ապրանքները նաևերով փոխադրւում էին Իքարոս գետով, որ թափւում էր Օբսուս (այժմ Ամու-Դարիա) գետի մէջ, իսկ այս վերջինը այն ժամանակները թափւում էր Կասպից ծովը: Այս ծովից ապրանքները դուրս էին բերւում Կուր գետի վրայով, որ Հայաստանի հիւսիսային սահմանագիծն էր կազմում: Կուր գետից հինգ օր ցամաքային ճանապարհ կտրելով, առևտրական կարաւանները հասնում էին Ճորոխ գետին, ուր բեռները բարձւում էին

նաւակների վրայ, որոնք իջնում էին Սև ծով: Այդ ճանապարհը պահպանում էին յունական փոքրիկ գաղութները, որոնք տարածուած էին ճանապարհի ամբողջ երկարութեամբ: Մի ճիւղ այդ ճանապարհից գատուում էր և Դիլիջանի կիրճով գնում իջնում էր Արարատեան դաշտը, ուր այնքան ճանապարհներ էին իրար հանդիպում:

Երբ Օքսուս գետը փոխեց իր ընթացքը, ուղղուելով դէպի Արալեան լիճը, այդ ջրային ճանապարհը բնականաբար փակուեց: Եւ այնուհետև Հնդկաստանի և Պարսկաստանի ապրանքները Եւրոպան ստանում էր այն ճանապարհով, որ Հայաստանի վրայով գնում էր մինչև Սև ծով (Տրապիզոն): Դեռ Միջին Դարերում այդ հաղորդակցութիւնը յայտնի էր Եւրոպային «մետաքսի ճանապարհ» անունով:

Միջագոգային նշանակութիւն ունեցող ճանապարհները զարգանում և բազմանում էին, որքան զարգանում էր Առաջաւոր Ասիայի քաղաքական և տնտեսական կեանքը: Այսպէս, երբ

Պարսկաստանը Աքեմէնեան հարստութեան ժամանակ դարձաւ համաշխարհային մեծ պետութիւն, բացուեցին և մեծ ճանապարհներ զանազան ուղղութիւններով՝ ահագին պետութիւնը կառավարելու և նրա հեռաւոր ծայրերը կենտրոնի հետ կապելու համար: Այս ճանապարհներից մէկը, որ գլխաւորն էր և կոչուում էր «արքունի», անցնում էր Հայաստանի վրայով հարաւից հիւսիս, կտրելով Տիգրիս և Եփրատ գետերը, դէպի Փոքր Ասիայի ծովեզերքը: Նրա ճիւղաւորութիւնները հայկական լեռնաստանով ձգուում էին դէպի հիւսիս, մինչև կովկասեան լեռնաշղթան, մինչև Կասպից ծովի ափերը, սրոնք հպատակուում էին Իրանի Շահերին: Կարևոր պետական նշանակութիւն ունէին մանաւանդ կովկասեան լեռնաշղթայի երկու անցքերը — Դարեալի կիրճը և Դերբենդի նեղ ծովեզրը: Այդ ճանապարհներով էին հիւսիսային վայրենի ազգերը խուժում Անդրկովկաս: Աւելի դիւրամատչելի էր Դերբենդի նեղ անցքը կամ դուռը: Դա ամենա-

յարմար ճանապարհն էր հիւսիսից մինչև Ադուանից դաշտը և Հայաստանի սահմանները, որոնք այդ կողմից լաւ պաշտպանուած չէին: Ուստի Գերբենդի դուռը պահպանուում էր պարսից զինուորական ոյժով:

Այս արտաքին ճանապարհներին պէտք է աւելացնել և բուն Հայաստանի ճանապարհները: Դրանց կենտրոնը, սիրտը նոյն Արարատեան դաշտն էր: Այդտեղ դեռ հայերից առաջ և մանաւանդ հայերի օրով զարգացաւ պետական կեանքը: Արմաւիրը, Արտաշատն ու Դուինը մայրաքաղաքներ էին և առևտրական մեծ կենտրոններ: Դուինը (Զ. դար Ք. յ.) ունէր հինգ գլխաւոր ճանապարհ. 1) արևմտեան, որ կարին քաղաքի վրայով տանում էր կողոնիա (այժմ Շաբին-Պարահիսար), Ամասիա, Կ. Պօլիս. 2) հարաւարևմտեան, որ գնում էր Խլաթ քաղաքը (Վանի լճի ափին), այստեղից Քղիմար, Ուռհա (Նդեսիա), Դամասկոս, որտեղից հարորդակցում էր Երուսաղէմի և Ալեքսանդրիայի հետ, 3) արևելեան,

Արցախի վրայով տանում էր Պարտաւրազաբը (Աղուանք), այդտեղից Կասպից ծովի ափերը, 4) հարաւ-արեւելեան—Նախճաւան, Թաւրիզ, այստեղից միաւորւում էր այն գծի հետ, որ տանում էր Նինուէ, Մծբին, Ուռհա: Նախիջևանից մի ուրիշ գիծ տանում էր Արղաւիլ և Պարսկաստանի հիւսիսային կողմերը, 5) հիւսիսային, որ Գուգարքի վրայով տանում էր Թիֆլիս, հաղորդակցում էր հիւսիսային Անդրկովկասի հետ, բայց մանաւանդ Պարտաւի հետ:

Այս բոլոր մանրամասնութիւնները ցոյց են տալիս որ Հայաստանը զանազան ուղղութիւններով կտրատուած էր հաղորդակցութեան կարևոր գծերով և հանդիսանում էր մի միջավայր, ուր մշտնջենապէս տեղի ունէին միջագային շարժումներ: Նրա ճանապարհներով էին անցնում թէ նուաճող բանակները, թէ մի տեղից միւս տեղ փոխադրուող ամբողջ ցեղեր և թէ առևտրական մեծ կարաւաններ: Խորին, նախապատմական հնութեան մէջ այս

երեք շարժումները միատեսակ նշանակութիւն ունէին երկրի համար, երեքն էլ արշաւանքներ էին՝ ոյժի և զէնքի վրայ յենուած: Թէ նուաճող բանակներն էին հարստահարում երկիրը, թէ տեղափոխուող ազգերը իրանց թափառական կենցաղի բերմունքով պիտի յարձակուէին նստակեաց և աւելի քաղաքակիրթ բնիկների վրայ, զէնքով տեղ խլէին իրանց բնակութեան համար: Իսկ վաճառականութիւնը իր ամենանահին ձևի մէջ նոյն այդ թափառական ցեղերի գրադմունքն էր, կամ նրանց աջակցութեամբ առաջ էր տարւում, և զէնքի ուժով էին յաճախ խրլւում մի երկրի բերքերը՝ մի ուրիշ տեղ, ուրիշ բերքերի հետ փոխանակելու համար:

Հայաստանը, այսպիսով, մարդկային ազգի առաջին շարժումների ժամանակից մի ոտնակոխ երկիր էր: Այս մշտնջենական երևոյթը, այս, եթէ կարելի է ասել՝ ճակատագիրը այսպէս է բնորոշուած արաբացի աշխարհագիր Իբն-ալ-Ֆակիր համազանիի (ժ. դար

Ք. 1.) «Քիթար-ալ-Բուլղան» (Երկիր-  
ների Գիրք) աշխատութեան մէջ.

«Ես գտայ գրքերի մէջ — ասում  
է Քարը — որ Մէքքան աւերում են  
հարէշները, Մեդինան՝ սովը, Բաս-  
րան՝ ջրհեղեղները, Քուֆը՝ գաղթա-  
կանութիւնները. Ջարաշը քանդում է  
կայծակների հարուածներից և երկ-  
րաշարժից, Սորասանը՝ այլ և այլ պատ-  
ճառներից, Իսկ Ռէյը հարստահարում են  
դելամացիները և թաթարստանցիները:  
Ինչ վերաբերում է Հայաստանին և Ա-  
տրպատականին, այս երկու երկիրնե-  
րը կործանւում են հեծելազօրքի սըմ-  
բակներից, մէկ էլ կայծակի հարուած-  
ներից ու երկրաշարժից»:

Նոյն Իբն-ալ-Ֆակիրը բերում է և  
հետևալ խօսակցութիւնը.

«Սիրիացի Մէքհուլն ասաց. «Այն  
երկիրը, որ ամենից առաջ կաւերուի,  
Հայաստանն է: Հարցրին նրանից.  
«Իսկ ինչը կաւերէ նրան»: Պատաս-  
խանեց. «Չիաների սմբակները»:

Արևելեան այս պատկերաւոր խօս-  
քը, ինչպէս երևում է, շատ տարա-

ծուած էր միջին դարերում, որովհե-  
տե մեր Մատթէոս Ուսնայեցի պատ-  
մագիրն էլ, նկարագրելով մի սելջու-  
կեան արշաւանք, անշուշտ նոյն այդ  
ասացուածքն է կրկնում, բացական-  
չելով. «Նրանց ձիերի սմբակները մա-  
շկեցին լեռներն ու բլուրները»:

Այդ սմբակներն էլ կազմում են  
այն առանցքը, որի շուրջը պտտում է  
Հայաստանի ամբողջ ճակատագիրը:

Ի.

## Ե Ր Կ Ի Ր Ը Ե Ի Մ Ա Ր Դ Ի Կ

Համեմատական աշխարհագրութիւնը ուսումնասիրում է այն ազդեցութիւնները, որոնց տակ մի երկիր, մի ազգաբնակչութիւն կազմակերպւում է իբրև հասարակական-պատմական երեւոյթ: Այդ բնական ազդեցութիւնները երեք տեսակ են. ստորաբաշխական (կլիմայ և այլն), ֆիզիքական (երկրի կազմակերպութիւն և այլն) և բուսական ու կենդանական աշխարհի ազդեցութիւն: Մենք, որ մանրամասն ծանօթացանք այս բոլոր ազդեցութիւնների հետ, այժմ կարող ենք եզրակացութիւններ հանել, թէ

ինչ տեսակ քաղաքական և կուլտու-  
րական կեանք կարող էր զարգանալ  
Հայաստանի լեռնակղզում:

Մեզ արդէն ծանօթ պայմաններով  
օժտուած մի երկիր նախ և առաջ պի-  
տի ներկայացնէ տեղական, առանձնա-  
կի շահերի հարստութիւն և ընդհանուր,  
համայնական շահերի աղքատութիւն:  
Երկիրը կուլտուրական շերտաւորում-  
ների բազմազանութիւն է արտադրում:  
Սոր հովիտների և կիրճերի մէջ բնու-  
թիւնը հարուստ է, թոյլ է տալիս բարձր  
աստիճանի կուլտուրա: Այդտեղ ազ-  
գաբնակութիւնը նստակեաց է, ունի  
համախմբուելու, ուժեղ կազմակերպու-  
թիւն ստեղծելու հրամայողական կա-  
րիք: Բայց այդպիսի տեղեր շատ չեն,  
ոչ էլ միապաղաղ երկար տարածու-  
թիւններ են կազմում, այլ կղզիացած  
ցրուած են, միմեանցից հեռու, ան-  
ջատուած լեռներով:

Տիրապետողը, ընդարձակը, երկ-  
րին ընդհանուր գոյն տուողը լեռնա-  
յին արօտների իրականութիւնն է, ուր  
կարող է զարգանալ հովուական թա-

փառիկ, աստանդական կենցաղը: Իսկ հովուական կացութիւնը բոլորովին հակասում է հովիտների նստակեցութեան իդէալներին: Նա ճանաչում և պաշտում է միայն անձնական ազատութիւն, անջատ անհատական շահեր, նա արհամարհում է քաղաքական և վարչական սահմանները, որովհետև նրա հօտերին հարկաւոր են ընդարձակ տարածութիւններ և նա իր շահերով կապուած չէ մի որ և է յայտնի տեղի, յայտնի շրջանակի հետ:

Այս է պատճառը որ Հայաստանը չը կարողացաւ ընդ միշտ տեղական անջատ շահերի իրականութիւնից բարձրանալ մինչև ընդհանուր, համայնական, հաւաքական-պետական շահերի մշտական հասկացողութիւնը: Այսպիսի մի երկիր չէ կարող ուժեղ, կենտրոնացած պետութիւն, կամ աւելի ճիշտ ասած՝ բռնապետութիւն ստեղծել:

Անհամաշափութիւնը երկրի զանազան մասերի ազգաբնակչութեան հոգեկան կարողութիւնների մէջ չափազանց մեծ էր որպէսզի կարելի լինէր սպա-

սել ընդհանուր, համայնական գործակցութիւն մի համազգային հարցի շուրջը: Հայ պատմագիրների տեղեկութիւններից երևում է, որ ամբողջ հասանգներ, մանաւանդ ծայրերում, երկրի կենտրոնի (Արարատ) հետ համեմատած, «վայրենի» էին, «գազանամիտ», «ճիւղաղային»: Այսպէս էին, օրինակ, Սիւնիքը, Արցախը, Ուտիքը, Սասունը: Մինչդեռ Արարատեան դաշտում կազմակերպւում էր քաղաքակիրթ, բարեկարգ մի պետութիւն, որ գիտութեան և արուեստների յարգն էլ էր ճանաչել, երկրի ազգաբնակչութեան մի մասը դեռ միսը հում էր ուտում, ինչպէս վկայում է Սորենացին:

Եւ շատ հասկանալի է որ աշխարհագրական պայմաններով նպաստաւորուող այսպիսի այլազանութիւնը, կուլտուրական աստիճանների հակադրութիւնները ստեղծէին ամբողջ երկրի համար քաղաքականապէս թոյլ կազմակերպուած մի պետութիւն, որ ենթարկւում էր ուրիշների տիրա-

սետութեան և մանաւանդ կուլտու-  
րական ազդեցութեան: Պատմութեան  
սկզբից Հայաստանի բնակչութիւնը  
հանդէս է գալիս խիստ զաւառական  
բաժանումներով և խիստ էլ ենթար-  
կուած հարկան ազգերի ազդեցու-  
թեան: Ստրաբոնը վկայում է որ  
մեզացիների սովորութեան մեծ մա-  
սը վերցրել էին հայերը: Այսպի-  
սի վկայութիւններ մենք գտնում  
ենք և ուրիշ օտար մատենագրութիւն-  
ների մէջ: Նրանք ցոյց են տալիս որ  
հայերը լեզուի, սովորութիւնների, հա-  
ղուստի կողմից խիստ ենթարկում  
էին այն ազգութիւններին, որոնք նը-  
րանց հարկաններն էին:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

### Հ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Սահմաններ: Հայաստանը իր պատմական երկարատև կեանքի ընթացքում միշտ և միևնույն սահմանների մէջ չէր պարփակուած: Այդ սահմանները շարժական էին, կամ ընդարձակուում էին, կամ նեղանում, նայած թէ որքան ուժեղ էր հայ ազգային իշխանութիւնը:

Հայկական թագաւորութեան ուժեղ ժամանակներն էր ապրում յոյն հռչակաւոր աշխարհագիր Ստրաբօնը, (ծընուած Քրիստոսից առաջ առաջին դարում), որ նկարագրել է մեր հայրենիքի սահմաններն այսպէս. — Հարաւից՝

Տաւրոս լեռները, որոնք բաժանում են Հայաստանը Միջագետքից: Արևելքից՝ Միդիան (Մարաստանը) և Ատրպատականը (այժմ Ազրբեյջան): Հիւսիսից՝ Պարսխօաթրաս լեռների մի մասը, որ գտնւում է ուղիղ կասպից ծովի ափին, յետոյ Ադուանից երկիրը և Վրաստանը կովկաս մեծ լեռնաշղթայի հետ, որ պատում է այդ երկու երկիրները: Արևմուտքից՝ Տիրարանի երկիրը՝ յետոյ Պարիատրէս սարը, մինչև Փոքր Հայքը և Եփրատի հովիտը:

Նահանգներ. — Ամբողջ Հայաստանը բաժանւած էր երկու մեծ մասերի—Մեծ Հայք և Փոքր Հայք: Իւրարանշիր մասը բաժանւում էր նահանգների (կոչւում էին և աշխարհներ) և գաւառների:

Մեծ Հայքն ունէր 15 նահանգ, իսկ Փոքր Հայքը — 3:

## Մ Ե Ծ Լ Ա Յ Ք

Մեծ Հայքի 15 նահանգներն էին.

- 1) Բարձր Հայք, 2) Զորրորդ Հայք,
- 3) Աղձնիք, 4) Տուրուբերան կամ Տարուբերան, 5) Մոկք, 6) Կորճէք, 7) Պարսկահայք, 8) Վասպուրական, 9) Սիւնիք, 10) Արձախ կամ Արցախ, 11) Փայտակարան, 12) Ուտիք, 13) Գուգարք, 14) Տայք և 15) Այրարատ:

### 1. Բ Ա Ր Ձ Ր Լ Ա Յ Ք

Ատացել է իր անունը, ինչպէս գիտենք, իր սարահարթի բարձրութեան պատճառով: Ամբողջ Հայաստանում դրա պէս բարձր տարածութիւն չը կայ: Հայոց պատմութեան մէջ կատարել է նշանաւոր դեր, մանաւանդ կրօնական

տեսակէտից: Այստեղ էին հեթանոս հայերի մի քանի մեհեանները (տաճարները), այստեղ էլ քրիստոնէութեան մուտքի պատմութիւնը նուիրական է դարձրել մի քանի վայրեր:

Այս նահանգի գաւառներն էին.  
1) ԳԱՐԱՆԱՂԻ (այժմ Կամախ): Այստեղ էր գտնուում Անի ամուր բերդը, որ շինուած էր Եփրատի վրայ և քրիստոնէութիւնից առաջ մեր կռապաշտ պապերի համար մեծ նշանակութիւն ունէր: Այստեղ էր շինուած՝ գլխաւոր մեհեաններից մէկը: Արշակունի թագաւորները այստեղ էին թաղուում: Արքունի գանձն էլ պահուում էր այս ամուր տեղում: Եկաւ քրիստոնէութիւնը և ամենից առաջ հէնց այստեղ ընդհարուեց հայ կռապաշտութեան հետ: Գրիգոր Լուսաւորիչը, ինչպէս պատմում է աւանդութիւնը, Գարանաղի գաւառից և յատկապէս նրա Անի բերդից սկսեց իր քարոզութիւնը: Եւ Անին<sup>1)</sup> առաջինն էր, որ դարձաւ քրիստոնէական կալուած:

<sup>1)</sup> Այս Անին չը պէտք է խառնել Շիրակի Անիի հետ.

Այս Դարանադի գաւառում էր գտնւում և Սեպուէ լեռը, որ կոչւում էր նաև Մանեայ այրիք: Աւանդութիւնն ասում է որ այստեղ էր ձգնւում մեր Լուսաւորիչը: Իսկ թորդան գիւղը շինուած էր, ասում են Լուսաւորչի ձեռքով. այդտեղ էլ թաղուեցին նա ինքը և նրա ժառանգները:

2) ԱՌԻԻԾ, 3) ՄՆԶՈՒՐ գաւառներ (այժմ Կերճանախ և Գուրուչայ կամ Մզուր):

4) ԵԿԵՂԵԱՅ գաւառ (այժմ Երզրնկայ): Այս գաւառն էլ շատ նշանաւոր էր նախաքրիստոնէական շրջանում: Այստեղ Երիզա կամ Երէզ աւանում գտնւում էր հայոց մեծ աստուածներից մէկի, Անահիտ աստուածուհու տաճարը և այդ պատճառով էլ ամբողջ գաւառը կոչւում էր նաև Անատաական գաւառ: Անահիտը Հայաստանի ուրիշ կողմերում էլ ունէր տաճարներ, բայց այս մէկը ամենից շատ հռչակուածն էր:

Երիզան կամ Երզնկան յայտնի է և նրանով, որ այդտեղ շատ յաճախ երկ-

բաշարժներ են պատահում: Հեթանոսական մեհեանների կողմից նշանաւոր էր և թիւ աւանը, ուր գտնւում էր նանէ աստուածուհու արձանը: Քրիստոնէական կրօնը, այստեղ էլ կռուով յաղթանակելուց յետոյ, ամբողջ եկեղեաց զաւառը յատկացրեց Լուսաւորչի տսհմին իբրև կայուած:

5) ՄԱՆԱՆԱՂԻ (այժմ Շաւշար և թէքման): Ըստ նորագոյն բացատրութիւնների պիտի նշանակէ «Մանեան», գուցէ մանների երկիր:

6) ԴԵՐՋԱՆ (միևնոյն անուանով և այժմ): Հեթանոսական մեհեաններից մէկն էլ գտնւում էր Բ ա գ ա ո ի ն ջ կամ Բ ա գ ա յ ա ո ի ն ճ գիւղում և նուիրուած էր Միհր աստուծուն:

7) ՄՊԵՐ (այժմ Իսփիր): Հին հեղինակների վկայութեամբ այս զաւառը այնքան յայտնի էր իր ոսկու հանքերով, որ Ալէքսանդր Մակեդոնացու առանձին ուշադրութիւնը գրաւեց:

8) ՇԱՂԱԳԱԻՄՔ կամ ՇԱՂԳՈՄՔ (այժմ թորթում):

9) ԿԱՐԻՆ (այժմ Էրզրում, Օվա-

ջրք): Նահանգի մայրաքաղաքն է Կարին, որ Ե. դարում (Ք. յ.) վերանորոգեց բիզանդական Թէոդոս կայսրը և նրա անունով էլ կոչուեց Թէոդոսուպօլիս: Իբրև առևտրական կենտրոն և մանաւանդ իբրև առաջնակարգ բերդ՝ Կարինը միշտ կատարել է նշանաւոր դեր: Կարինի գաւառում յայտնի էր և Արծն քաղաքը, Եփրատի ափունքների մօտ, հռչակուած իր բազմամարդութեամբ և վաճառականութեամբ:

## 2. ՉՈՐՐՈՐԳ ԶԱՅՔ

Այս անունը գոյութիւն ստացել է 536 թուականից յետոյ (Ք. յ.): Նահանգի հին անունն էր Ծոփք, որ այդ թուականից յետոյ յատուկ մնաց միայն նրա գաւառներից մէկին: Մեր ազգի պատմութեան սկզբներում այս նահանգը չափազանց կարևոր դեր է կատարել իբրև մի տեղ, ուր կազմակերպուեց Հայաստանի քաղաքական անկախութիւնը:

## Գաւառներ

1. **ԽՈՐՉԵԱՆՔ** (այժմ Կեղք, Առինճ):  
Յայտնի էր իր ամուր զիրքով և ունէր  
շատ ամրացած բերդեր ու գիւղեր:

2. **ՀԱՇՏԵԱՆՔ** (ըստ հին յոյն մա-  
տենագիրների՝ Ա ս տ ի ա ն ի ն ի (այժմ  
Ճապաղջուր և Խուլփ): Հայ Արշակու-  
նի թագաւորների ժամանակ արքունի  
տան կալուած էր, և այստեղ պարտա-  
ւոր էին ապրել բոլոր այն թագաւո-  
րագունները, որոնք օրէնքով իրաւունք  
չունէին ժառանգելու թագաւորական  
զահր: Յայտնի էր այստեղ Կթ ո ի ճ  
քաղաքը, որ ամուր բերդ էլ էր: Այս  
գաւառում են գտնուում Տիգրիս գետի  
ակունքները:

3. **ՊԱՂՆԱՏՈՒՆ** (այժմ Արղանա):  
Ունէր Պ ա դ ի ն անունով բերդը:

4. **ԲԱԼԱՀՈՎԻՏ** (այժմ Բալու): Ու-  
նէր Բ ա լ ու բերդը:

ԾՈՓՔ (այժմ Չմշկածագ, Բերդիկ,  
Կապան): Այս անուան ամենահին յի-  
շասակութիւնը գտնուում է Ասորես-  
տանի բևեռագիր արձանագրութիւն-

ների մէջ Ս ու ս ւ ա ն ի ձևով: Յունաց  
մատենագրութեան մէջ նա յայտնի է  
Ս օ ֆ է ն ա ձևով: Բաժանուում էր եր-  
կու մասի. Մ ե ծ Ծ ո փ ք և Ծ ո փ ք  
Շ ա հ ե ա յ կամ Փ ո ք ր: Ծ ո փ ք ի ա յս  
մասում (Շ ա հ ե ա յ) յիշուում են Չ մ շ-  
կ ա ծ ա գ, Մ ե ծ կ ե ր ա բերդերը:  
Ծ ո փ ք ի մէջ էր և Բ ն ա բ ե ղ բերդը:

6. ՀԱՆՁԻԹՔ (այժմ Խարբերդ):  
Ասորեստանի արձանագրութիւնների  
մէջ կոչուում է Ի ն գ ի, Ի ն գ ի թ, յու-  
նական մատենագրութեան մէջ՝ Անգի-  
տինի. Այստեղ է գտնուում Եփրատի  
այն մեծ հովիտը, որ հռչակուած է իր  
բարեբերութեամբ և որ կոչուում էր  
Ա լ ե լ ու ա յ դաշտ (այժմ Խարբերդի  
դաշտ): Այդտեղ հին ժամանակներում  
յայտնի էին Ա ն ձ ի տ բերդը, Ա շ-  
մ ու շ ա տ կամ Շ ա մ ո շ ա տ Արա-  
ծանի գետի վրայ: Այժմ էլ գոյութիւն  
ունի Խ ա ր բ ե ր դ ր:

7. ԳՈՐԷՔ (այժմ Կորէք):

8. ԴԷԳԻՔ (այժմ Ակղ, Հենի): Են-  
թաղրուում է որ այս գաւառն էր, որ  
հնում կոչուում էր Ա ն գ ե ղ տուն:

### 3. Ա Ղ Ձ Ն Ի Ք

Հայաստանի հարաւ-արեւմտեան ծայրագաւառը: Օտար մատենագրութեան մէջ Արզանին Նահանգի քաղաքական կարեւորութեան աստիճանացոյցը այն է, որ այդտեղ էր հաստատուած Հայաստանի սահմանները պահպանող շորս քղեաշխն երից մէկը: Ազնեաց բղեաշխութիւնը իր սահմանների մէջ աճում էր նաև Միջագետքի մի մասը՝ Մծբին քաղաքով (Արուստան), ինչպէս նաև հայկական հարաւային նահանգները մինչև Ուրմիայի լճի սահմանները: Այդ բղեաշխութեան կոչումն էր պաշտպանել հայկական թագաւորութիւնը հարաւի (Միջագետք և Սիրիա) կողմերից: Բայց նահանգն ունէր խառն ազգաբնակչութիւն, որ սերտ կապերով շէր կապուած Հայաստանի հետ, ուստի յաճախ տպտամբւում էր կամ խլւում էր հարեան մեծ պետութիւնների ձեռքով: Նահանգի մի մասը դաշտային է, միւսը՝ լեռնային: Լեռներում հարուստ են երկաթէ

հանքերը, ինչպէս նաև կապարը: Կայ  
և նաւթ:

Պաւաններ.

1) ԱՐՁՆ կամ ԱՐՁՆ (այժմ Խար-  
զան): Ստացել է իր անունը Արձն  
քաղաքից:

2) ՆՓՐԿԵՐՏ (այժմ Մուֆարդին):  
Այստեղ յայտնի էր Մ ա ր տ ի ր ո-  
ւ ա ց ք ա ղ ա ք ը (Մարտիրոսաօլիս), որ  
յետոյ կոչուեց Մուֆարդին:

3) ՔԵՂ կամ ՔԱՂ (այժմ Խղու):

4) ԿԵԹԻԿ: Ենթադրուում է, որ այս  
գաւառին էր պատկանում Տիգրանա-  
կերտ նշանաւոր քաղաքը, որ շինեց  
Տիգրան թագաւորը:

5) ՏԱՏԻԿ (այժմ էլ նոյն անունով  
աւան և գետ):

6) ԱՁՆՈՒԱՅ ՁՈՐ (այժմ կամ  
Գիւղէլ-տէրէ կամ Սուսան):

7) ԽԵՐԶԵԹՔ կամ ԵՐԽԵԹՔ (այժմ  
Սղերդ):

8) ԳՁԵՂ (այժմ Խիզան):

9) ՍԱԼՆՈՅ ՁՈՐ կամ ՍԱԼԱՁՈՐ  
(այժմ Բաղէշ):

10) ՍԱՆԱՍՈՒՆ կամ ՍԱՍՈՒՆ, ՍԱ-

ՍՈՒՆՔ (այժմ Սասուն): Լեոնազաւառ  
Տաւրոս լեոների Սիմ կոչուած մա-  
սում: Աղձնիք նահանգին պատկանում  
էր այդ լեոների հարաւային մասը  
միայն, որ և կոչւում էր Սասուն.  
միւս, հիւսիսային մասը, որ կոչւում  
էր Խութ, Տուրուբերան նահանգին էր  
պատկանում:

Արշակունեաց թագաւորութեան ժա-  
մանակ Աղձնեաց բղեաշխութեան էին  
վերաբերւում և մի քանի գաւառներ  
և կամ երկիրներ, որոնք յետոյ խլուե-  
ցին հայերից: Դրանք էին. ա) Ն ո շ ի ր ա-  
կ ա ն կամ Ն ո Ր Շ ի ր ա կ ա ն, բ) Ն ի-  
խ ո Ր ա կ ա ն, գ) Մ ա հ կ ե Ր տ ա ն,  
դ) Դ ա ս ա ն, ե) Ծ ա լ դ է ք, զ) Ա գ-  
ն ա ր գ ի լ ն և է) Ռ է ի մ ե ն ա:  
Այս երկրների դիրքը տարածուած էր  
այժմեան Աղբակի, Ուրմիայի լճի և  
Մուսուլի մէջ տեղերը:

#### 4. ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ ԿԱՄ ՏԱՐՈՒԲԵՐԱՆ

Հին գրաւոր յիշատակարանների  
մէջ այս նահանգը անուանուած է

«կողմ Տարաւնոյ»: Տուրուբերանը Հայաստանի կենտրոնական նահանգների մէջ կարևորագոյն նշանակութիւն ունեցած և դեր կատարած երկիրներից մէկն է: Այս հանգամանքը հասկանալի կը լինի, եթէ չը մոռանաք, որ այստեղ է գտնուում Հայաստանի երրորդ մեծ և բարեբեր հովիտը — Մուշի դաշտը՝ Արածանիի վրայ:

Գաւառներ.

1) ԽՈՅԹ (այժմ Խուլթ), որ, ինչպէս տեսանք, Սիմ լեռան հիւսիսային կողմն էր, սահմանակից Աղձնիքին:

2) ԱՍՊԱԿՈՒՆԻՔ (այժմ Խուլփի մօտերը):

3) ՏԱՐՈՒՆ կամ ՏԱՐՕՆ (այժմ Մուշ): Հռչակուած իր կլիմայական գեղեցիկ յատկութիւններով և իր կրօնական ու քաղաքական դերով, որ կատարել է հայոց պատմութեան մէջ:

Մեր հին գրաւոր յիշատակարաններից մէկը (Զենոբ Գլակ) այսպէս է նկարագրում Տարօնի բարեբերութիւնը.

«Այս երկիրը, այս վայրերը լաւ են և ջրառատ, դաշտաձև, օդն անուշ

և լեռների շուրջը շատ ամրոցներ կան: Երկիրը խոտառատ է և մեղրաբուլիս, և ինչպէս մանանան երկնքից իջնում էր հրէաների մօտ, այնպէս էլ այստեղ, մեր երկրում, անտառների վրայ իջնում է մեղրից էլ աւելի քաղցր մի բան, որ կոչւում է գազապէն... Այս երկիրը լի է ամենայն բարութեամբ, աջողակ է և առողջ»:

Երկնքից իջնող մանանային մանութիւնն ունեցող այդ գազապէն այժմ էլ յայտնի է Հայաստանի այդ կողմերում գազալին անուկով: Դա մի տեսակ արծաթագոյն, շատ քաղցրահամ հիւթ է, որ նուան հատիկների ձևով նստում է մացառների, տերեւների, փրշերի, մատուտակների վրայ. գիւղական երեխաներն ու հարսները հաւաքում են, շինում են բլիթներ, որոնք տներում գործ են ածւում իբրև քաղցրաւէնիք:

Հին ժամանակներից այս գաւառում երկու տեսակ հողատիրութիւն կար: Նրա մի մասը պատկանում էր քրմական գասակարգին, միւսը՝ Սլկունի

նախարարական տոհմին: Այս տոհմին շորրորդ դարում իբրև սեփականատէր յաջորդեց Մամիկոնեան նախարարական ցեղը, իսկ քրմական կալուածատիրութիւնն անցաւ քրիստոնեայ եկեղեցականութեան:

Հեթանոսական ամենախոշոր կենտրոնն էր հռչակաւոր Ա շ ա ի շ ա տ կամ Յ ա շ ա ի շ ա տ գիւղը Ք ա ր ք է լերան ստորոտում, Արածանիի վրայ: Երեք մեծ և շատ հարուստ մեհեաններ կային այդ գիւղում. 1) Վ ա հ է վ ա հ ե ա ն, նուիրուած Վահագնի պաշտամունքին, 2) Ո ս կ ե մ ա յ ր, Ո ս կ ի ա ծ ի ն, Ո ս կ ի ա հ ա տ Անահիտի մեհեանը, ուր գտնուում էր այդ աստուածուհու սակէձոյլ արձանը, և 3) Ա ս աղիկ աստուածուհու մեհեանը, որ կոչուում էր նաև Ս ե ն ե ա կ Վ ա հ ա գ ն ի: Քրիստոնէութիւնը այստեղ մեծ ընդհարում ունեցաւ հեթանոսութեան հետ: Եւ յաղթելուց յետոյ, նա այս նուիրական վայրը դարձրեց քրիստոնէական սրբավայր: Կործանուած մեհեանների տեղը կառուցուած եկե-

ղեցին առաջինն էր Հայաստանում իբրև մայր եկեղեցի: Յիշատակում է Հ ա ց ե ա ց դ ր ա խ ա փոքրիկ անտառը, որ գտնւում էր Վահէվահեան մեհեանի գրաւած բարձրաւանդակի ստորոտում և բաղկացած էր հացի ծառերից:

Հեթանոսական նշանաւոր վայր էր և Ի ն ն ա կ ն ե ա ն կոչուած տեղը Քարքէ լեւան վրայ, ուր գտնւում էին Գիսանէ և Դեմետր աստուածների բազինները: Դրանց տեղ կառուցուեց ս. կ ա ր ա ս կ ե տ ի վանքը, որ հռչակուած բրիտանոնէական սրբավայր է մինչև այժմ: Կոչւում է նաև Ի ն ն ա կ ն ե ա ն վ ա ն ք, Գ լ ա կ ա յ վ ա ն ք: Նա գրաւում է Տարօնի ամենագեղեցիկ վայրերից մէկը:

Տարօնի հին ազգաբնակութեան խտութեան վկաներն են նրա բազմաթիւ քաղաքները, բերդերը, աւանները և գիւղերը: Քաղաքներից յայտնի են՝ Չ ի լ ն կ ե ր տ, Օ ձ կ ամ Ա. լ ձ, Վ ի շ ա ս կ ամ Տ ի ր ա կ ա տ ա ր, Մ ր ծ ու ր, Մ ու շ (սկզբում աւան): Բեր-

դերի մէջ հռչակուած էին Ողակա  
անառիկ բերդը Արածանիի վրայ, Ե-  
ղանց բերդ կամ Եղնուտ, Այ-  
ծեաց բերդ, Աստղաբերդ և  
ամրոցներ՝ Գարհար, Մեծամօր,  
Աստղօնք: Բազմաթիւ պատմական  
աւանների և գիւղերի մէջ յիշատակու-  
թեան արժանի են Հացեկաց գիւղ,  
ուր ծնուել է Մեսրոպ Մաշտոցը և Խոր-  
նի գիւղ, որ համարոււմ է Մովսէս  
Խորենացու ծննդավայր:

4) ԱՇՄՈՒՆԻՔ կամ ԱՐՇԱՄՈՒՆԻՔ  
(այժմ Խուլփ և Վարդոյ): Ստացել է  
իր անունը Աշմունի ցեղից: Այստեղ  
էլ կար Երիզայ անունով քաղաք:

5) ՄԱՐԴԱՂԻ: Գտնուում էր Բիւ-  
րակնեան (Բինգեօլ) լեռների հիւսիսա-  
յին կողմում և սահմանակից էր Կա-  
րինին: Ստացել էր իր անունը Մարդ  
ցեղից, որ Ատրպատականից գաղթել  
էր Հայաստան: Այդ ցեղի մի մասն էլ  
բնակուեց Վասպուրական նահանգում,  
ուր նրա երկիրը կոչուեց Մարդա-  
ստան:

6) ԴԱՄՆԱԻՈՐԹ (այժմ Գարա-  
Եազը):

7) ՏՈՒԱՐԱԾԱՏԱՓ (այժմ Գէօք-  
սու):

8) ԴԱԼԱԻ (այժմ Թորլու):

9) ՀԱՐԹ (այժմ Խամուր և Խնուս):  
Այս գաւառի անուան հետ հայերը կա-  
պել են իրանց առասպելները իրանց  
ազգի նախահայր Հայկի մասին: Իբր  
թէ Հայկը այդտեղ բնակուեց և գա-  
ւառը անուանեց Հարթ, այսինքն հայ-  
րենի ժառանգութիւն: Եւ իբր թէ այդ-  
տեղ գտնուող Հայկաշէն գիւղն էլ նոյն  
Հայկն էր շինել: Այստեղ էր Մ ա-  
ն ա գ կ եր տ կամ Մ ա ն ծ կ եր տ նը-  
շանաւոր քաղաքը (այժմ Մելազկերտ),  
որ կարևոր բերդ էլ էր:

10) ՎԱՐԱԺՆՈՒՆԻԹ (այժմ Բու-  
լանք): Ստացել է իր անունը Վա-  
րաժն տոհմից:

11) ԲԶՆՈՒՆԻԹ (այժմ Խլաթ, Արծ-  
կէ): Վանի ծովակի հիւսիս-արևմտեան  
կողմում: Այս գաւառի անունով էլ  
Վանի լիճը կոչուում էր Բզնունեաց  
ծով: Բզնունի—հին նախարարական

տոհմի անունն է: — Այստեղ նշանաւոր էին *Խ լ ա թ* և *Ա ը ծ կ է* քաղաքները:

12) *ՆՐԵԻԱՐՔ* (այժմ *Գիւղէլ-Դերէ*):

13) *ԱՂԻՈՎԻՏ* (այժմ *Արճէշ*) վանի լճի հիւսիսային կողմը: Այս գաւառն էլ յատկացրած էր *Արշակունի թագաւորների որդիներին իբրև բընակութեան տեղ*: *Ա ը ճ է շ* քաղաքը այժմ ծածկուած է վանի լճի ջրերի տակ: Յայտնի էր այստեղ և *Զ ա ր ի շ ա տ* քաղաքը: Միջնադարեան վանքերից յայտնի է *Մ ե ծ ո բ ա յ* վանքը:

14) *ԱՊԱՀՈՒՆԻՔ*: Տարածւում էր Սիփան սարից դէպի հիւսիս և ստացել էր իր անունը Ապահունի տոհմից: Այս գաւառում էր *Թ ո ն դ ր ա կ* գիւղը:

15) *ԿՈՐ կամ ԿՈՐԻ*: (այժմ *Բուլանք* քի մօտերը):

16) *ԽՈՌԻՍՈՐԻՆԻՔ*: Ենթադրւում է որ գտնւում էր Բզնունեաց երկրի և Կոր գաւառի մէջ, նազաւք լճի շրջականերում: Ստացել է իր անունը *Խոռխոռունի տոհմից*:

## 5. Մ Ո կ Ք

Հայաստանի ծայրագաւառը հարաւում, Աղձնիք նահանգի արեւելակողմը: Տաւրոս լեռները այստեղ էլ են տարածւում: Դա մի լեռնոտ և ամբողջ թիւններով հարուստ երկիր է: Սակայն մութ է ֆնում այս նահանգի անուան ծագումը և նրա մասին առհասարակ շատ քիչ տեղեկութիւններ են փնայել:

Գաւառներ

1) ԻՇԱՅՐ | Մօտաւորապէս

2) ԻՇԱՅՐ ՄԻԻՍ | այժման Ջըրըզան, Սպարկերտ, Կարկառ:

3) ԻՇՈՅ ԳԱԻԱՌ

4) ԱՌՈՒԵՆԻՅ ՉՈՐ

5) ՄԻՋԱ

6) ՄՈԿՔ ԱՌԱՆՉՆԱԿՔ (այժմ

Մոկս):

7) ԱՐՔԱՅԻՅ ԳԱԻԱՌ | Մոկաց և

8) ԱՐԳԱՍՏՈՎԻՏ | Շատախի մէջտեղերը:

9) ՋԵՐՄԱՉՈՐ (այժմ Շատախ):

Մոկաց նահանգի միջնագարեան

վանքերից հուշակուած է Ապարա-  
նից վանքը:

6. Կ Ո Ր Ն Է Ք

Այս աշխարհագրական անունը իբ-  
րև մի ամբողջ նահանգի յորջորջում  
շատ հին չէ: Այսպէս, Գ. դարում մենք  
չենք տեսնում այդպիսի մի նահանգ:  
Եւ յետոյ էլ շատ յաճախ էր որ Կոր-  
ճէք անունը հոմանիշ էր համարւում  
Կորդուք անուան, թէև սա այդ նա-  
հանգի մէջ գտնուող մի գաւառի ա-  
նունն էր: Լեոնոս երկիր է, այդտեղ  
տարածւում են Կորդուաց լեոները,  
որոնք հարուստ են բնական ամբու-  
թիւններով: Հին արևմտեան գրողնե-  
րին նա յայտնի էր Կ ո Ր ա ու է ն ա  
անունով: Այդ գրողներն էլ գովում  
են երկրի արգաւանդութիւնը:

Գաւառներ

1) ԿՈՐԳՈՒԹ, Կորդուաց բարձր  
լեոները դժուարամատչելի են դար-  
ձնում այդ երկիրը, որի ներքին հա-  
ղորդակցութիւններն էլ շատ դժուար

են: Աւանդութիւն կար որ Նոյի տա-  
 պանը Կորդուաց լեռներում է կանգ  
 առել: Կուրդուք — հայկական անուն չէ:  
 Այստեղ ապրող ժողովուրդը, ինչպէս  
 հաւանական են համարում, պէտք է  
 լինի այն, որ յայտնի էր արեւմտեան  
 հին հեղինակներին Կուրդուք անու-  
 նով: Դա մի քաջ, պատերազմասէր ժո-  
 ղովուրդ էր: Ունէր իր թագաւորու-  
 թիւնը, որ նուաձուեց Տիգրան Մեծի  
 ձեռքով: Այնուհետեւ Կորդուաց եր-  
 կիրը փոփոխակի անցնում էր հռոմա-  
 յեցիներին, հայերին, ապա և պար-  
 սիկներին: Հին մատենագիրների կոր-  
 դաւիւնները այժմեան քրդերն են: Եւ  
 որովհետեւ այդ մատենագիրները ասել  
 են և այն, որ կորդաւիւնները Մարաց  
 ազգից են, ուստի մեր հին և միջին  
 մատենագրութեան մէջ քրդերը յա-  
 ճախ հանդիպում են Մար անուան  
 տակ:

Քաջ և պատերազմասէր ժողովրդ-  
 դով բնակեցրած երկիրը, բնականա-  
 բար, առաջնակարգ նշանակութիւն պի-  
 տի ունենար Հայաստանի համար, որ-

քան որ նրա մի մասն էր կազմում։  
Եւ իրաւ, Կորդուաց նախարարը հա-  
յոց արքունիքում առաջին տեղերից  
մէկն էր գրաւում և նրա կառավարու-  
թեան յանձնւում էին նոյն իսկ հարե-  
ւան Մոկս և Աղձնիք նահանգները։

2) ԿՈՐԴԻՔ ՎԵՐԻՆ

3) ԿՈՐԴԻՔ ՄԻՋԻՆ } (Այժմ Բոհտան)

4) ԿՈՐԴԻՔ ՆԵՐՔԻՆ

Այս երեք դաւառները աւելի հին  
ժամանակներում կոչւում էին ՏՄՈ-  
ՐԻՔ, որ հռչակուած իր անառիկ գիր-  
քերով։

5) ԱՅՍՈՒԱՆՔ

6) ԱՅԳԱՌՔ։

7) ՄՈԹՈՂԱՆՔ։

8) ՈՐՍԻՐԱՆՔ։ Վերին Զաբ գետի  
վրայ։

9) ԿԱՐԱՊՈՒՆԻՔ։

10) ՃԱՀՈՒԿ։ Հարուստ բերդերով  
և ամրոցներով (Զլմար, Սրինդ, Ճա-  
հուկ)։

11) ՓՈՔՐ ԱՂԲԱԿ (այժմ Ադ-Բադ,  
Ճուլամերկ)։

## 7. Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Ք

Կորճէքի արևելակողմը: Գարձեալ ծայրագաւառ Հայաստանի հարաւ-արևելքում սահմանակից պարսկական Ատրպատականին: Կազմուել է այն երկրներից, որոնք զանազան ժամանակ խլուեցին Ատրպատականից: Նահանգի մեծ մասը գտնւում էր Ուրմիայի լճի հիւսիս-արևմտեան, հիւսիսային և հիւսիս-արևելեան կողմերում: Գաւառներ.

1) ԱՅԼԻ կամ ԿՈՒՌԻՃԱՆ:

2) ՄԱՐԻ:

3) ԹՐԱԲԻ:

4) ԱՐԻՍԻ կամ ԱՅԱԻԵՐՍ:

5) ԸՌՆԱ:

6) ՏԱՄԲԵՐ:

7) ԶԱՐԵՀԱԻԱՆ:

8) ԶԱՐԱԻԱՆԴ կամ ԶԱՐԵԻԱՆԴ:

(Սալմաստի մօտերը):

9) ՀԵՐ կամ ԽԷՐ (այժմ Խոյ):

Մեր հին մատենագրութեան մէջ յաճախակի յիշատակւում են այս վերջին երկու գաւառները, որոնք կարե-

ւոր դեր են կատարել Պարսկաստանի  
հետ ունեցած յարաբերութիւնների  
մէջ, իբրև սահմանագլուխը պաշտպա-  
նող գաւառներ: Ը. և Ժ. դարերում  
Զարևանդն ու Հերը արդէն կրում  
էին Ռստակ անունը: Հեր գաւառում  
պատմական անուն ունէր Նըւարսակ  
գիւղը:

#### 8. Վ Ա Ս Պ Ո Ւ Ի Բ Ա Կ Ա Ն

Հայաստանի կարևոր կենտրոնական  
նահանգներից ամենամեծը իր տարա-  
ծութեամբ: Նա ձգւում էր հարաւից  
դէպի հիւսիս, Վոնի լճի արևելեան  
կողմերով մինչև Արաքսի հովիտը:

Վասպուրական անունը մեր հին  
գրականութեան մէջ երևան է գալիս Զ.  
դարից յետոյ միայն: Առաջին յիշատա-  
կութիւնը նոյն իսկ «նահանգ» մտքով  
չէ, այլ գնդի անուն է — «Վասպու-  
րական գունդ»: Այս անունը հայկա-  
կան չէ և վերցրած է պահլաւերէնից:  
«Վասպուրական» էին կոչւում Սա-  
սանեան թագաւորների ժամանակ

Պարսկաստանի եօթը ամենաբարձր ազնուական տոհմերի անդամները: Յնուուելով այս հանգամանքի վրայ, կարծում են թէ «Վասպուրական» (պարսկերէն Վասպուրհական) պիտի նշանակէր «ազնուականների երկիր» կամ «ազնուականների գնդի երկիր»: Սկզբում «Վասպուրականը» զօրաբանակի անուն էր, որ յետոյ դարձաւ նահանգի անուն: Այս անունով ճանաչւում էր Հայաստանի այն մասը, որ մնաց Պարսկաստանին այն բաժանումից յետոյ, որ 591-ին տեղի ունեցաւ Պարսկաստանի և Բիւզանդիայի մէջ:

Վասպուրական նահանգը կոչւում էր և Երկիր Արծրունեաց, որովհետև այդտեղ տիրող գլխաւոր նախարարական տոհմը Արծրունիներն էին, որոնք յետոյ նոյն իսկ թագաւորութիւն էլ հաստատեցին: Նահանգի մի մասը, որ Արծրունիների հին, բուն կալուածն էր, կրում էր Սեպհական անունը, որ նոյն հին «վասպուրհական» բառի նոր ձևն է:

Պաւատները.

1) ՌՇՏՈՒՆԻՔ (այժմ Ոստան, Պաւատ): Վանի լճի հարաւ-արևելեան ափին: Յայտնի է իր հարուստ բնութեամբ: Անունը նախարարական տոհմի անուն էր (Ռշտունիք): Այս գաւառի մէջ է հին Ըն ձ ա ք ե ա ը ս սարը, որ այժմ կոչւում է Կապուտակոդ: Երկրի բերդն էր Ոստանը Վանի լճի վրայ: Նրան ամրացրեց և շինութիւններով զարդարեց Պապիկ Արծրունի թագաւորը ժ. դարում: Այս գաւառին էին վերաբերում և Ա. դ թ ա մ ա ը կամ Ա. խ թ ա մ ա ը և Ա. ը տ ի (այժմ Ա. ո տ է ը) կղզիները: Աղթամարը հին ժամանակներից բերդ էր, իսկ ժ. դարից հըռչակուեց նոյն Պապիկի շինած հոյակապ եկեղեցիով: Կար այստեղ և Մանսկերտ բերդը, որ կոչւում էր և Ք ա ը ն Մ ա ն ս կ ե ը տ:

Ռշտունիքում է գտնւում Նարեկ անունով հռչակաւոր վանքը, որ մեծ նշանակութիւն ունի մեր միջնադար-

րեան գրականութեան պատմութեան համար:

2) ՏՈՍԲ (այժմ Վան): Տոսբ անունը մէկն է այն աշխարհագրական բազմաթիւ անուններէց, որ հայերը ժառանգել են Հայաստանի նախկին տէրերէց, այն ազգից, որին այժմ ընդունուած է անուանել ուրարտացիներ, խալդեր կամ նախահայեր: Ուրարտական սեպածե արձանագրութիւններէ մէջ «Տոսբը» երևան է գալիս «Տուշպա» ձևով: Դա մեր Վան քաղաքն է, Ուրարտական թագաւորութեան հռչակաւոր մայրաքաղաքը, որի անունը հայերէ մէջ արդէն գաւառի անուն է դարձել: Այստեղ, Վանի լըճի արևելեան ափերում, տեղի են ունեցել պատմական մեծամեծ դէպքեր, ստեղծուել է մի մեծ և ուժեղ պետութիւն, որի հիւսիսային սահմանները հասնում էին Սևանի լճին: Վանը մեծ դեր է կատարել և հայոց պատմութեան մէջ: Դա խոշոր կենտրոններէց մէկն էր, ուր առանձին թագաւորութիւն էլ հիմնուեց:

Գաւառում պատմական տեղերից  
յիշատակելի է Արտամէտ գիւղը,  
հռչակուած իր կլիմայական բարեմաս-  
նութիւններով. այդ պատճառով էլ Ար-  
տաշէս թագաւորը այնտեղ կառուցեց  
ապարանքներ և այլ գեղեցիկ շինու-  
թիւններ:

Քրիստոնէութեան պատմութեան  
մէջ հռչակուած է Վարագ սարը իր  
վանքով:

3) ԲՈՒՌՆԻՆԻՔ (այժմ Համոկ):

4) ԱՐՃԻՇԱԿՈՎԻՏ: Վանից հիւսիս,  
Արճակ լճի և Մարմէտ գետի շրջանում:

5) ԱՂՈՎԻՏ (այժմ Բաղնոց):

6) ԿՈՒՂԱՆՈՎԻՏ:

7) ԱՌԲԵՐԱՆԻ (այժմ Բերկըրի):  
Բերկըրի բերդ և քաղաք: Այստեղ են  
լիմ և Կսուց կղզիները և Վանի ծո-  
վակի ձկնորսարանը, որ հռչակուած է  
իր «տառեխ» ձկնով:

8) ԳԱՌՆԻ կամ ԴԱՌՆԻ (այժմեան  
Բայազէտի հարաւակողմը):

9) ԲՈՒԺՈՒՆԻՔ (այժմ Նօրդուզի  
շրջան): Բոհոտանսու կամ արևելեան  
Տիգրիս գետի վերին մասերում:

10) ԱՌՆՈՅՈՏՆ: Սահմանակից նախընթաց դաւառին:

11) ԱՆՁԵԻԱՅԻՔ կամ ԱՆՁԱԻԱՅԻՔ (այժմ նօրդուզի շրջան, երբեմն կոչւում էր և Քարգան): Յեղի անունն է: Լեռնային ամուր տեղ: Ունէր կանգուար քաղաքը, որ և բերդ (այժմ կանգով): Այս քաղաքի մօտ գտնւում էր Դարբնաց քար կամ Ադուաւաքար տեղը, ուր Անահիտ աստուածուհու տաճարն էր, որի քուրմերը կոչւում էին դարբին, որովհետև նրանք կուսանարութեամբ ահագին աղմուկ էին հանում և առհասարակ լերան պաշտամունքն էին վառ պահում բնակիչներին մէջ գանազան արհաւրաւից տեսարաններով: Քրիստոնէութիւնը այդտեղ էլ մարտ մղեց և յաղթելուց յետոյ վանք կառուցեց, որ կոչուեց Հոգեաց վանք:

12) ՏՐՊԱՏՈՒՆԻՔ, ստացել է իր անունը Տրպատունի սոհմից (այժմեան Խօշապի մօտերքը):

13) ԵՐՈՒԱՆԹՈՒՆԻՔ կամ ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՔ: Խօշապ գետի վերին մասե-

րում: Խօշապի հովիտը կոչւում էր  
Հ ա յ ո ց Ջ ո ր:

14) ՄԱՐԳԱՍՏԱՆ: Մարդ ցեղի անունից է ստացել իր անունը: Մարդերը Հայաստանում ուժեղ նախարարութիւն կազմեցին: Գտնւում էր նախընթաց գաւառի հիւսիսակողմում, ըսկըսած Արճակ լճից:

15) ԱՐՏԱԶ: Մասիս լեռան հարաւարեւելեան կողմը (այժմ Մակու): Գաւառի աւելի հին անունն է Շ ա լ ա ր շ ա ն կամ Շ ա լ ա ր շ ա կ ա ն: Հըռչակուած է Ե. դարի կրօնական պատերազմների ժամանակ: Այստեղ են Ա լ ա ր ա յ ը դ ա շ տը, Տ դ մ ու տ գ ե տը (այժմ Ակշայ): Եղին դ գիւղը (այժմ Երիստ), ուր Վահան Մամիկոնեանը բանակցութիւն էր վարում պարսից Նիխօր սպարապետի հետ:

16) ԱԿԷ: Կար ակէացի տոհմ:

17) ԱՂԲԱԿ ՄԵԾ: Ակէ գաւառից դէպի հիւսիս (այժմ Բաշկալէ): Արծրունեաց նախարարական տոհմի բնագաւառը: Այստեղ էր Արծրունիների Ա դ ա մ ա կ ե ր տ կամ Հ ա դ ա մ ա

կ ե ր տ նշանաւոր բերդը (կարծում են  
այժմեան Բաշկալայ բերդը):

18) ԱՆՁԱԽԱՁՈՐ կամ ԱՆՁԱԽԻ-  
ՁՈՐ (այժմ Կոթուր): Սահմանակից  
Պարսկահայքի Հեթ գաւառին, կոչւում  
էր և Ձ ո ր Ը ն ձ ա հ ի ց, Ձ ո ր Ա ն-  
ձ ա խ ա յ: Այստեղ է Կ ո տ ո ր բերդը  
(այժմ Կոթուր):

19) ԹՈՌՆԱԻԱՆ: Անձախաձորից դէ-  
պի արևելք: Ն կ ա ն ամրոց (այժմ Նա-  
գան): Ս կ ա ն բերդ (այժմ Սէյվան-  
կալա):

20) ՃՈՒԱՇՈՒՏ: Կ ար մ ի ր գ ե-  
տ ի վրայ, որ թափւում է Արաքսի  
մէջ: Արժրուհի թագաւորների ձմերո-  
ցը և զբօսատեղին: Գ ե տ ս աւանը,  
Արաքսի վրայ, արքայական որսատեղի  
էր. այդտեղ, Արաքսի շամբերում,  
առատ էին երէները, վայրի խոզերը,  
կալին նոյն իսկ և առիւծներ: Մ ա ո ա-  
կ ա ն՝ Կարմիր գետի վրայ, Արժրու-  
հի թագաւորների մի ուրիշ ձմերոցը:  
Շ ա մ ի ր ա մ բերդ: Կարծում են որ  
Ճուաշուտ այժմեան Աք-չայ գետակի

վրայ էր, որ թափուում է Արաքսի մէջ  
Ջուղայի առջև:

21) ԿՐՃՈՒՆԻՔ:

22) ՄԵԾՆՈՒՆԻՔ:

23) ՊԱՂՈՒՆԻՔ: Այս անունով նա-  
խարարական տոհմ կար:

24) ԳՈՒԿԱՆ կամ ԳՈԿԱՆ:

25) ԱՂՈՒԱՆԴՈՒՍ կամ ԱՂԱՆԴՈՒՍ:

26) ՊԱՏՍՊԱՐՈՒՆԻՔ:

27) ԱՐՏԱՇԷՋԵԱՆ կամ ԱՐՏԱՇԻՍԱՆ

28) ԱՐՏԱՒԱՆԵԱՆ:

29) ԲԱՔԱՆ:

30) ԳԱԲԻԹԵԱՆ:

31) ԳԱԶՐԻԿԱՆ:

32) ՏԱՆԿՐԻԱՅՆ:

33) ՎԱՐԱԺՆՈՒՆԻՔ:

Այս 13 գաւառները (21 — 33), ըստ  
երևոյթին, փոքրիկ շրջաններ էին և  
նրանց տեղերն էլ անյայտ են:

34) ԳՈՂԹՆ կամ ԳՈՂԹԱՆ, գրւում  
էր և ԳՈՂԹՆԱՍՏԱՆ: Սրանիք նահան-  
գին սահմանակից (այժմ Ագուլիս  
և շրջակաները): Յայտնի էր իբ-  
րև գինեւէտ գաւառ, իսկ բնակիչնե-  
րը՝ իբր երգասէր: Քրիստոնէութիւնը

առաջին անգամ այստեղ նուաճումներ արաւ: Յիշուում է նրա մէջ Սալարին քաղաքը: Պատմական վայրեր են. Ագուլիսաւան, Որթվատ կամ Որդվատ գիւղ (այժմ Օրդուբատ), Վանանդ գիւղ և Ջուղայ գիւղաքաղաք, չոչալուած միջին դարերում իր վաճառականութեամբ:

37) ՆԱԽՃԱԻԱՆ: Այս անունով և քաղաք, այժմ Նախիջևան:—Ըստ հին ստուգարանութեան իբր թէ պիտի նըշանակէ «առաջին իջևան» և այս բացատրութիւնը այն պատճառով, որ հին առասպել կայ թէ նոյր տապանից դուրս գալուց յետոյ այստեղ ապրեց և նոյն իսկ մեռաւ: Այս դաւառը է թէ Ը դարում անցաւ Սիւնիք նահանգին և այդ պատճառով էլ ժ դարում դարձաւ ներքին արհաւիրալից խռովութիւնների առարկայ: Նախճաւան գաւառի մէջ յայտնի է Հացիւնեաց դաշտը:

38) ՄԱՐԱՆԴ (այժմ էլ նոյն անունը, Թաւրիզի հիւսիս-արեւմտեան կողմում): Հին ստուգարանութիւնը

ասում էր թէ Մարանդ նշանակում է «մայր անդ», որովհետև, իբր թէ, այդ տեղ է թաղուած նոյի կիներ՝ նոյեմ-գար:

## 9. Ս Ի Ի Ն Ի Ք

Վասպուրականի հիւսիսակողմում: Հայաստանի կարևոր նահանգներից մէկը: Նրա անունը նախահայկական ծագում ունի: Ուրարտական սեպածև արձանագրութիւններից մէկի մէջ, որ գտնուում է այդ նահանգի հին սահմանների մէջ, կարգացում է Ս ու ի ն ի ա, որ, գիտնականների կարծիքով, համապատասխանում է «Սիւնիք» անունին: — Հայկական գրաւոր յիշատակարաններից երևում է, որ Սիւնիքում տիրող նախարարական տոհմը կոչւում էր Սիսական: Այդ անունով էլ պարսիկները ամբողջ նահանգը կոչում էին Ս ի ս ա կ ա ն, իսկ արաբացիները՝ Ս ի ս ա ջ ա ն, Գլխաւորապէս լեռնային երկիր է, հարուստ բնական ամրութիւններով:

Գաւառներ.

1) ԵՐՆՋԱԿ (այժմ Ալբընջա): Ռուսէր Երնջակ անուանով բերդ, հըսչակուած իր անառիկ դիրքով:

2) ՃԱՀՈՒԿ (այժմ Ջահուկ): Այստեղ Շահապուլնից բերդ:

3) ՎԱՅՈՅ ՉՈՐ (այժմ Դարալագեազ): Պատմական անուն ունէին Հողոցիմ կամ Խողոցիմ գիւղը, Եղեգիս գիւղաքաղաքը, Հրաշկաբերդ և քրիստոնէական վանքեր՝ Նորավանս, Յախացքար, Թահահատք, Խոտակերից, Գլաձոր:

4) ԳԵՂԱՔՈՒՆԻ (այժմ գաւառ, Գէօղչա, Նոր Բայազէտ): Կարծուակեն, որ ուրարտեան սեպածե արձանագրութիւնների մէջ յիշուած Կիհեհուլնի տեղն է Սևանի լճի արփին: Միևնոյն անուանով բերդ:

5) ՍՈՏՔ կամ ՍՈԹՔ (այժմ Ջոթ): Ծարաւան, ուր կատարելագործութեան բարձր աստիճանի էր հասել փայտագործութիւնը:

6) ԱՂԱՀԷՃՔ: Հազարայ գետի վը-

բայ: Ք ա շ ա թ ա դ և Խ ո ժ ո ո ա -  
բ ե ը դ բ ե ը դ ե ը :

7) Ծ Ղ Ո Ւ Կ (այժմ Սիսիան): Վ ա -  
ս ա կ ա կ ե ը տ, Շ ա դ ա տ բ ե ը դ և  
գ իւ դ: Այստեղ է Տ ա թ և ի հոշակաւոր  
վանքը:

8) Հ Ա Բ Ա Ն Դ (այժմ Գորիսի շրջ-  
ջան): Պատմական վայրեր. Հ ա լ ի -  
ձ ո ը, Շ ն հ ե ը, Խ ո տ, Խ ն ձ ո ը ե ս ք,  
Տ ե դ:

9) Բ Ա Ղ Ք (այժմ Ղափանի մի մա-  
սը): Այստեղ են հարուստ պղնձահան-  
քեր: Գ իւ ղ ե ը. Տ ո ը թ ն, Խ ո տ ա ն ա ն,  
Կ աււաբտ, Վ ժ ա ն ի ս:

10) Չ Ո Ր Ք (այժմ Ղափանի մի մա-  
սը): Բ ա դ ա բ ե ը դ և Կ ա պ ա ն բ ե ը -  
դ ե ը ը, հոշակուած է մանաւանդ առա-  
ջինը իբ անմատաշելի դիրքով:

11) Ա Ր Ե Ի Ի Ք (այժմ Մեղրի) Մ ե դ -  
ր ի բ ե ը դ ը:

12) Կ Օ Ս Ա Կ Ա Ն կամ Կ Ո Վ Ս Ա Կ Ա Ն  
(այժմ Ղափանի շրջան): Բ ե խ, Շ ի -  
կ ա հ ո դ գ իւ ղ ե ը:

Սիւնիքի հիւսիսակողմը: Հայերը այս նահանգը խլել են աղուաններին: Դ. դարի վերջերում նորից անցաւ աղուաններին և նրա ձեռքն էլ մնաց: Դա, սակայն, հայացրած ծայրագաւառ էր: Մեծ մասամբ անտառապատ լեռնաստան: Կոչւում էր նաև Փոքր Սիւնիք: Իսկ միջին դարերում նաև Խաչէն: Այդ անունով գաւառ այժմ էլ գոյութիւն ունի Արցախում, որի այժմեան անունն է Ղարաբաղ: Նահանգի հիւսիսային սահմաններում էր Տըրտուլ գետը (այժմ Թարթաւ):

Փաւառներ.

1) ՄԻԻՍ ՀԱԲԱՆԴ: Այս գաւառի տեղը ցոյց է տալիս Ամարաս անունով տեղը, որպիսի անունով մի վանք այժմ էլ գոյութիւն ունի:

2) ՎԱՅԿՈՒՆԻՔ (այժմ Ջրաբերդ): Այստեղ Հանդաբերդ ամրոցը:

3) ԲԵՐՁՈՐ կամ ԲԵՐԴԱՁՈՐ (այժմ Այրում):

4) ՄԵԾԿՈՒԱՆՔ:

5) ՄԵԾԻՐԱՆՔ (այժմ Խաչէն):  
Այստեղ է Գ ա ն ձ ա ս ա ը ի հոչակա-  
ւոր վանքը:

6) ՀԱՐՃԼԱՆՔ:

7) ՄՈՒԽԱՆՔ (գուցէ Մուղանի  
դաշտի մօտերը):

8) ՕՊԻԱՆՔ:

9) ՊԱԾԿԱՆՔ (գուցէ այժմեան Վա-  
րանդա, Շուշի):

10) ՍԻՍԱԿԱՆ ՈՍՏԱՆ կամ ՍԻՍԱ-  
ԿԱՆ Ի ԿՈՏԱԿ (վերջինս պարսկերէն  
նշանակում է Փ ո ք ը Ս ի ս ա կ ա ն):

11) ՔՈՒՍՏԻ ՓԱՌՆԷՍ:

12) ԿՈՂԹ:

## 11. Փ Ա Յ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Հայաստանի հիւսիս-արևելեան ծայ-  
րագաւառը, որ առհասարակ քիչ ծա-  
նօթ է: Այդ երկիրը հայերը խլել էին  
Ատրպատականից և երկար ժամանակ  
չը մնաց հայերի տիրապետութեան  
տակ: Նահանգի տեղը որոշելու համար  
ցուցմունքներ շատ չը կան: Թուում է  
թէ դա այն երկիրն է, ուր ապրում էր

Կասաբաք կամ Կասապցեղը՝ համա-  
նուն ծովի մօտ, այնտեղ, ուր Կուրն  
ու Արաքսը խառնուելով թափւում են  
Կասպից ծովը: Նահանգը իր անունը  
ստացել է Փայտակարան քաղաքից, որ  
յիշատակւում է ին գրութիւնների  
մէջ շատ անգամ, բայց սրի տեղը ու-  
րոշել անկարելի է:

Այս նահանգն ունէր 12 գաւառ,  
որոնց տեղերը համարեա միանգամայն  
անյայտ են: Այդ գաւառները հետևե-  
լալներն էին.

- 1) ՀՐԱՔՈՏ—ՊԵՐՈԺ:
- 2) ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏ: Այս անունով  
մի բերդ ենթադրւում է Արաքսի վրայ,  
նախ քան նրա խառնուելը Կուրի հետ:
- 3) ԵՕԹՆՓՈՐԱԿԵԱՆ ԲԱԳԻՆՔ:
- 4) ՌՍՏԻ-ԲԱՂԱ:
- 5) ԲԱՂԱՌՈՏ (ենթադրւում է այժ-  
մեան Թալիշը):
- 6) ԱՌՈՍՊԻՃԱՆ:
- 7) ՀԱՆԻ:
- 8) ԱԹՇԻ:
- 9) ԲԱԳԱԻԱՆ:
- 10) ՍՊԱՆԴԱՐԱՆ-ՊԵՐՈԺ:

11) ՈՐՄԻՉԴ-ՊԵՐՈՒԺ:

12) ԱԼԵԻԱՆ:

Այս գաւառներից երեքը — Եօթնփո-  
րակեան Բաղինք, Աթշի և Բազաւան  
իրանց անուններով ցոյց են տալիս որ  
եղել են կրակապաշտութեան կենտրոն-  
ներ: Այս հանգամանքը առիթ է տուել  
ոմանց ենթադրելու թէ զրանք այժ-  
մեան Բագուի և սահմանակից գաւառ-  
ներն են:

## 12. Ո Ի Տ Ի

Արցախի և Կուր ղետի մէջ: Դա  
դուտ հայաբնակ նահանգ չէր. այդտեղ  
ապրում էին ուտիացիներ (որոնք մնում  
են և այսօր), դարդմանացիներ, դար-  
դարացիներ և այլ ցեղեր: Նահանգը,  
ինչպէս և հարևան Արցախը, խլուած է  
եղել Աղուանքից և դարձեալ անցել է  
նրան:

Գաւառները.

1) ԱՐԱՆՌՈՏ:

2) ՏՌԻ:

3) ՌՈՍՏՊԱՅԵԱՆ կամ ՌՈՍՏՊԱ-  
ՅԵԱԿ:

4) ԱՂՈՒԷ:

5) ՏՈՒԶՔԱՏԱԿ:

6) ԳԱՐԴՄԱՆ կամ ԳԱՐԴՄԱՆԱԶՈՐ  
(այժմեան Շամքոր գետի արևելեան  
վտակի վրայ): Այստեղ է Գեաաբակք  
սղնձահանքը:

7) ՇԱԿԱՇԷՆ (այժմեան Գանձակի  
գաւառ): Կուր գետի հովտին պատկա-  
նող ընդարձակ դաշտավայր: Սարաբոնը  
գովում է նրա զարմանալի պտղաբե-  
րութիւնը, այդ կողմից հաւասար հա-  
մարելով նրան Արարատեան դաշտին:  
Իր անունը այս գաւառն ստացել է  
սակ կամ շակ սկիւթական ցեղից,  
որ դեռ այն ժամանակ, երբ հայերը  
չէին էլ երևացել Հայաստանում, կաս-  
պից ծովի ափերով անցաւ դէպի արև-  
մուտք, սրով և հրով նուաճեց բոլոր  
տեղերը: Այս գաւառում է Գանձակ  
նշանաւոր քաղաքը:

8) ՈՒՏԻ ԱՌԱՆՁՆԱԿ, Տրտոռ (այժմ  
Թարթար) գետի ստորին հոսանքի  
վրայ: Այստեղ էր Աղուանից Պարտաւ  
հռչակաւոր մայրաքաղաքը (այժմ Բար-  
դա գիւղ՝ Շուշու խճուղու վրայ):

Հիւսիսային սահմանագլուխ նահանգ: Հայերը խլեցին այս նահանգը Վրաստանից, իսկ Տիգրան Մեծը, Հայաստանի և Վրաստանի մէջ սահման հաստատելով Կուր գետը, Գուգարքը դարձրեց բղեաշխութիւն, որին յանձնուած էր հիւսիսային սահմանների պաշտպանութիւնը: Չորրորդ դարում Գուգարքը, հայկական միւս ծայրագաւառների հետ միասին ապստամբուեց հայոց թագաւորի դէմ, բայց նորից նուաճուեց: Սակայն նոյն դարի վերջերում Գուգարքը նորից անցաւ Վրաստանին և այդպէս մնաց մինչև վեցերորդ դարի սկիզբը:

Բագրատունեաց թագաւորութեան ժամանակ և նրանից յետոյ այստեղ զարգացաւ հայկական ինքնուրոյն քաղաքական կեանք, այնպէս որ Գուգարքի դերը հայոց պատմութեան մէջ շատ նշանաւոր է: Նահանգը իր անունն ստացել է անշուշտ գուգարացիներից, որոնք առանձին ցեղ էին կազմում,

բայց վրաց լեզուին էին պատկանում։ Սակայն նահանգի հարաւային մասերը վաղուց հայացած էին։ Վրացիները այդ կողմերն անուանում են «Սօմխեթի» (Հայաստան)։

Պաւառները.

1) ՉՈՐԱՓՈՐ: Այստեղ է Աղստե (այժմ Աղստափա) գետը, որ և որոշում է գաւառի տեղը. — այժմեան Դիլիջանի կիրճը, ուր գտնւում էր և Կայեան բերդը։

2) ԾՈՒՅՈՓՈՐ: Նախընթացի հիւսիսակողմը։

3) ԿՈՂԲԱՓՈՐ: Ծորոփորի հիւսսակողմը։

Այս երեք գաւառներն էլ սահման ունէին Կուր գետը և կազմում էին այժմեան Բօրչալուն և Ղազախը։

4) ՏԱՇԻՐ կամ ՏԱՇՐԱՏԱՓ (այժմ Լոռու սարահարթ)։ Այստեղ անուանի էր Լօռի բերդը։ Այս գաւառին էին վերարեբւում Շամշուլտէ բերդը և Օձուն պատմական գիւղը (այժմ էլ գոյութիւն ունի)։

5) ԹՈՒՆՂԲ (վրաց Թրիալէթ, գըլ-

խաւորապէս այժմեան Ծալկան) Այս-  
տեղ են Մ ա ն գ լ ե ա ց փ ո Ր (այժմ  
Մանգլիս), Բ ո ղ ն ա փ ո Ր (այժմ Բոլ-  
նիս):

6) ԿԱՆԳԱՐՔ (այժմ Փամբակ): Այս-  
տեղ է Մ թ ի ն լ ե ո Ր:

7) ԱՐՏԱՀԱՆ (այժմ էլ նոյն անու-  
նով):

8) ԶԱԻԱԽՔ (այժմ Ախալքալաք):

9) ԿՂԱՐԶՔ կամ ԿԼԱՐԶՔ, Ճորոխ  
գետի վրայ. վրաց Կլարջէթի (Արտա-  
նուշի կողմերը):

#### 14. Տ Ա Յ Ք

Հին ժամանակներում պատկանում  
էր մի ցեղի, որի անունն էր տայք և  
որ հայկական ծագում չունէր: Այս  
նահանգն էլ հայերը խլեցին վրաստա-  
նից, Հայ ամենանշանաւոր նախարա-  
րութիւններից մէկի — Մամիկոնեաննե-  
րի բնագաւառն էր. գոնէ չորրորդ դա-  
րում պատկանում էր Մամիկոնեան-  
ներին: Տայք (վրաց Տաօ) նահանգը  
տարածւում էր Կուր գետի ակունք-

ների և Ճորոխի աւագաններում, սահմանակից էր Բարձր Հայքին, Եդերաց աշխարհին, Վրաստանին և Գուգարքին: Ազգաբնակութիւնը խառն էր— հայ և վրացի: Բայց ԺԱ դարում այդ հայկական երկիրը գլխովին վրացացուած էր: Լեռնոտ և ամուր աշխարհ է: Գաւառներ.

1) ԿՈՂ (այժմ Գեօլէ), Կուրի ափերին: Կար այստեղ Կրիափեր (Կուրի ափեր) գիւղը:

2) ԲԵՐԴԱՅ ՓՈՐ (այժմ Փէնիկ, Թաւուսկեար):

3) ՊԱՐՏԻՉԱՅ ՓՈՐ (այժմ Օլթի, Պարտուս): Այստեղ էր Ուխթիս, Ուխթեաց քաղաքը (այժմ Օլթի):

4) ԾԱԿՔ ԿԱՄ ԾԱԿԱՏՔ (այժմ Չուխուրէթ, Էրաշէթ, Ախալցիխէ):

5) ՔՈՒԽԱ (այժմ Շաւշէթ):

6) ՈՔՈՂԷ (այժմ Թորթում), Բարձր Հայքի Շողգոմք գաւառին սահմանակից:

7) ԱՉՈՐԴԱՅ ՓՈՐ (այժմ Նառիման և Թորթումի մի մասը):

8) ԱՍԵԱՅ ՓՈՐ (այժմ Պարհար):

Հայաստանի միջնաշխարհը, քաղաքական և կուլտուրական կեանքի սիրտը:

Անունը—Այրարատ—հայկական շէ և կարելի չէ բացատրել հայերէնով: Գիտութիւնն ընդունում է որ դա պիտի լինի նոյնը, ինչ է Ասորեստանի սեպածե արձանագրութիւնների մէջ յիշատակուող Ուրարտու կամ Ուրաշտու անունը, ինչպէս նաև հին յոյն մատենագրութեան մէջ արձանագրուած Ալարոզ անունը:

Հայոց հին մատենագրութեան մէջ Այրարատ անունով իսկապէս հասկացւում էր միայն Արաքսի միջին հովիտը, Մասիս և Արագած լեռների մէջ, ըսկսած մօտաւորապէս այն տեղից, ուր Արաքսի մէջ է թափւում Ախուրեան գետը մինչև Նախճաւան: Սակայն յետոյ, ինչպէս երևում է, այս մասնաւոր անունը դարձել է ամբողջ նահանգի անուն: Ենթադրում են որ Այրարատ նահանգը եօթներորդ դարից

առաջ անուանուելիս է եղել «Աշխարհ  
Տանուտէրական Գնդին»:

Այսօր էլ սակայն, Արարատեան  
երկիր ասելով հասկացուամ է Արարա-  
տեան դաշտը, այսինքն Արաքսի հո-  
վիտը:

Այս դաշտի պտղաբերութիւնը հըռ-  
շակուած է շատ հին ժամանակներից:  
Այսպէս, յոյն Ստրաբոնն ասում է  
թէ այս դաշտի արգաւանդութիւնը  
անգուդական է, շունի իր նմանը: Իսկ  
մեր Ղազար Փարպեցին, որ հինգե-  
րորդ դարի գրող է, նկարագրում է  
նոյն այդ դաշտի հարստութիւնը ամե-  
նամեծ ոգևորութեամբ: Նա անուա-  
նում է Արարատեան երկիրը «ամե-  
նալի, ամենաբոյս, ամենաբուղիս, ա-  
մենագիւտ», մի հոյակապ և սքանչելի  
աշխարհ, որ տուած է մարդուն վայե-  
լելու և երջանիկ ապրելու համար:  
Այդ աշխարհը լի է ամեն տեսակ հա-  
րստութիւններով, որոնցից յիշուած է  
նոյն իսկ ոսկին: Բոյսերը քաղցր ու  
համեղ են, որսի կենդանիները անթիւ:  
Բոլոր անասունները զարմացնում են

իրանց պարարտութեամբ: Մի խօսքով,  
ասում է մեր սքանչացած հեղինակը,  
այս դաւառը նոյնքան հարուստ է, ինչ-  
պէս Եգիպտոսը և նոյնքան գեղեցիկ,  
ինչպէս դրախտը: Նրա համբաւը տա-  
րածուած է ամեն տեղ և գիտեն աս-  
մեն տեղ որ դա մի չնաշխարհիկ եր-  
կիր է:

Այսպիսի մի միջավայր, շնորհիւ  
մանաւանդ իր աշխարհագրական դիր-  
քի, պիտի դառնար քաղաքակրթու-  
թեան հնագոյն որբաններէց մէկը: Եւ  
իրաւ, դեռ Քրիստոսից 8 դար առաջ  
այստեղ կազմակերպուած է Ուրար-  
տուի հզօր թագաւորութիւնը, որ քա-  
ղաքներ, ջրանցքներ շինեց դաշտում,  
կուլտուրական գեղեցիկ ձեռնարկու-  
թիւնների հեղինակ հանդիսացաւ: Այս-  
տեղ էլ, իբրև Ուրարտուի յաջորդ, ըս-  
կսեց կազմակերպուել և զարգանալ  
Հայաստանը իբրև կուլտուրական ան-  
կախ պետութիւն: Այստեղ է դարբնուել  
հայոց պատմութեան մեծագոյն մասը:

Հռչակաւոր դաշտը քաղաքական  
կենտրոն չէր միայն, այլ և կրօնա-

կան: Քաղաքական անկախութիւնը կոր-  
ցնելուց յետոյ հայ ազգը կարողացաւ  
այս երկրի հետ կապել իր ազգային  
միութեան գաղափարը, հաստատելով  
այստեղ ընդհանուր կաթողիկոսութեան  
աթոռը, որ այժմ էլ գոյութիւն է  
պահպանում:

Պաւտոսները.

1) ԲԱՍԵՆ (այժմ էլ այս անունն  
ունի). Պատմական վայրերն են. Վա-  
ղարշապատ, Աւիւմի կամ Օ-  
կումի, որ յայտնի էր իր բազմա-  
մարդութեամբ: Բերդեր. Բողբերդ,  
Աւնիկ անառիկ ամրոց: Պոմա-  
ձոր գիւղաքաղաք: Որդոտու, Գու,  
Վաղապատ, Ալվար գիւղեր:

2) ԳԱԲԵՂԵԱՆՔ (այժմ կաղ-  
զուն): Այստեղ է Վիշապաձոր  
անունով ձորը, որ յետոյ կոչուեց  
Պաղանաձակք: Սինձեղնոյ  
գիւղ: Կաղզուա, այժմ դաւառա-  
յին կենտրոնավայր:

3) ԱԲԵՂԵԱՆՔ (Բասենի մի մասը):

4) ՀԱՒՈՒՆԻՔ կամ ՎԱՀՆՈՒՆԻՔ  
(Բասենի մի մասը):

5) ԱՐՇԱՐՈՒՆԻՔ (գրուում է և ԱՇԱՐՈՒՆԻՔ) կամ ԵՐԱՍԽԱԶՈՐ: Ընդգրկում էր այն շրջանը, որի միջով անցնում է Արաքսի ձորը, սկսած Կաղզուանից, ինչպէս և Ախուրեանի բերանը: Պատկանում էր Կամսարականների նախարարական տոհմին, յետոյ մեծ մասամբ անցաւ Բագրատունիներին: Երուան դաշատ, Երուան դաղերտ կամ Մարմէտ քաղաքներ, Արտագերս, Կապոյտ կամ Կապուտայ բերդեր: Բագարան քաղաք (այժմ գիւղ), Ախուրեանի վրայ, «քաղաք կոոց» անուանուած, որ ցոյց է տալիս նրանշանակութիւնը հեթանոսութեան ժամանակ: Բագրատունեաց թագաւորութեան առաջին մայրաքաղաքն էր: Մրէն, Բագարանի մօտ, հնում հռչակուած իր այգիներով:

6) ԲԱԳՐԵԻԱՆԴ (այժմ Ալաշկերտ), Արածանիի հովիտում: Վաղարշաղերտ (այժմ Ալաշկերտ) քաղաք և բերդ, Բագաւան կամ Բագնացաւան, այսպէս կոչուած իր

բազմինների (հեթանոսական մեհեաների) պատճառով, Չարեհաւան քաղաք, Աշտարակաց գիւղ, Արամանայ գիւղ, Արծակ, Բլուր, Եղեգեակ, Չրաւ, Տիրառինձ գիւղեր: Այս գաւառում են անուանի նպատակներ և Ս. Յովհաննէսի վանքը (այժմ Իւշքիլիսէ):

7) ԾԱՂԿՈՏՆ (այժմ Դիաղին): Լեռնային հովասուն գիրքի պատճառով հայ թագաւորութեան ժամանակ ամարանոց էր արքունի բանակի և հայ իշխանների համար: Ստացել է իր անունը Ծաղկանց լեռներից, ուր, ինչպէս գիտենք, գտնուում է Արածանիի ակունքը: Այս գաւառում է Շահապի վան լեռ և աւան, յայտնի նրանով, որ այստեղ, հեթանոսութեան ժամանակ, հաւաքւում էին արքունի բանակը և մեծ բազմութիւն երկրի զանազան կողմերից՝ նաւասարդի համագլային մեծ տօնը (տարեմուտ) կատարելու համար: Անգղաւան և բերդ: Այստեղի հոշակաւոր ջերմուկները կոչւում էին Վարշակի:

8) ՇԻՐԱԿ (այժմ Շորագեալ): Հրու-  
 շակուած իր հացաշատութեամբ: Քա-  
 ղաքական և կուլտուրական առաջնա-  
 կարգ նշանակութիւն է ստացել Բագ-  
 րատունիների ժամանակ և յետոյ, Զա-  
 քարիա Սպասալարի օրով:— Գլխաւո-  
 պէս դաշտային երկիր՝ Արջոյ—Ա-  
 ուիճ (այժմ Ալաջայ) լեռներով: Ախու-  
 րեան գետի հովիտն է: Անի, նախ  
 բերդ, ապա և հռչակաւոր մայրաքա-  
 ղաք, որ այժմ աւերակների քաղաք է  
 և հիացմունք է ազգում բոլոր այցե-  
 լուներին: Երազգաւորք (այժմ  
 Բաշ-Շորագեալ), Բագրատունիների եր-  
 կրորդ մայրաքաղաք նախ քան Անին:  
 Արգինայ գիւղաքաղաք, Ախուրեա-  
 նի վրայ, կաթողիկոսական աթոռ Բագ-  
 րատունիների ժամանակ: Մաւրի-  
 կապօլիս քաղաք, Տիկոր, Ալա-  
 ման, Բագնայր, Կումայրի  
 (Գումրի, այժմ Ալէքսանդրա-  
 պօլ քաղաք) գիւղեր, Հոսոմոսի,  
 Մարմաշէնի, Հաուիճի վան-  
 քեր:

9) ՎԱՆԱՆԴ (այժմ Կարս): Շիրա-

կի դաշտի շարունակութիւնը, դէպի  
 արեւմտակողմ: Այստեղ էր սեպածե  
 արձանագրութիւնների մէջ յիշատա-  
 կուած Ա.խուրեանի քաղաքը (այժ-  
 մեան Սարիղամիշի շրջանում), մի  
 անուն, որ յետոյ պահել է Ախուրեան  
 գետը: Կարս քաղաք և հռչակաւոր  
 բերդ, Վանանդի Բագրատունի թագա-  
 ւորների մայրաքաղաք: Զարիշատ,  
 Դրաշպետ, Ողմու, Կաճկա-  
 քար, Իջաւանից գիւղեր:

10) ԱՐԱԳԱԾՈՏՆ: Անունն արդէն  
 ցոյց է տալիս, որ այս գաւառը սա-  
 րածուած էր Արագած լեռան շուրջը,  
 թէ լեռնակողմերում, թէ ստորոտի  
 դաշտերում (այժմեան Էջմիածնի գա-  
 ւառ): Լեռնակողմերի նշանաւոր պատ-  
 մական վայրերն են. Թալին, Աշ-  
 նակ, Կուաշաւան, Վժան, Ան-  
 բերդ, Բիւրական, Փարպի,  
 Կարբի, Սողմոսավանք, Սեր-  
 կելի, Յովհաննավանք, Մող-  
 նի, Աշտարակ, Օշական, Եղի-  
 վարդ: Դաշտային մասում — Արմա-  
 ւիբ, հին մայրաքաղաք, որ գոյութիւն

ունէր Ուրարտուի թագաւորների ժամանակից, Վաղարշապատ կամ Նոր Քաղաք, Արշակունի թագաւորների մայրաքաղաք (այժմ գիւղ), Էջմիածին, հայ ընդհանրական կաթողիկոսութեան աթոռանիստ:

11) ՃԱԿԱՏՔ (այժմ Սուրմալու), Բարգող լեռների շրջանում: Կողբաւան, հռչակուած իր հարուստ աղահանքով: Սուրմառի բերդ: Այստեղ է Իգգիբմեծ գիւղը:

12) ՄԱՍԵԱՅՈՏՆ: Երկու Մասիսների ստորոտները, Արաքսի հովտի վրայ: Յուլակերտ, Փառախոտ, Վարազկերտ քաղաքներ, Ակոռի գիւղ:

13) ԿՈԳՈՎԻՏ (այժմ Հին Բայազիտ): Բաղարան գիւղ, Արշակաւան քաղաք, Գարօնք բերդ, Արծափ բերդ, Բայազիտ:

14) ԱՇՈՅՔ, անձանօթ գաւառ, Շիրակից հիւսիս, սահմանակից Գուգարքին:

15) ՆԻԳ (այժմ Աբարան և Բըջնի): Պատմական վայրեր. Քասաղ

քաղաք կամ աւան (այժմ Բաշ-Աբա-  
րան), Փ ա ո ա ժ ն ա կ ե ր տ, Վ ա ր-  
դ ե ն ի ս, Ա ս տ ու ա ծ ք ն կ ա լ գ իւ-  
ղ ե ր, Բ ջ ն ի բ ե ր դ — Պ ա հ յ աւ ու ն ի ի շ-  
խանների ոստանը, Կ ե շ ա ո ու ք գ իւ ղ  
համանուն վանքով: Մ ա յ ր ո յ վ ա ն ք:

16) ԿՈՏԱՅՔ (այժմ Ղըխ Բուլաղ,  
Երևան): Պատմական վայրեր. Ս կ լ ա-  
բ ե ր ք (այժմ Ալափարս), Ա. ր ծ ն ի,  
Ա. ր ա մ օ ն ս, Ո ղ ջ ա բ ե ր դ, Չ ա գ, Է-  
լ ա ո, Ա. ւ ա ն, Ք ա ն ա ք ե ո: Ե ր կ ա ն,  
նշանաւոր պատմական քաղաք և բերդ,  
որ, ինչպէս կարելի է ենթադրել. գո-  
յութիւն ունէր Ուրարտուի ժամա-  
նակներից:

17) ՄԱՉԱՉ (այժմ Գառնի): Ազատ  
գետի վերին աւազանում: Գ ա ո ն ի,  
բերդ և նշանաւոր քաղաք Ազատ գե-  
տի վրայ (այժմ Բաշ-Գեառնի). հրո-  
շակուած հին ժամանակներում իր ա-  
մուր գիրքով. հայոց Արշակունի թա-  
գաւորների դաստակերտ և գանձերի  
պահպանութեան տեղ: Այստեղ է  
«Տրդատի Թախտ» անունը կրող հին  
հռովմէական շինութիւնը, որի փառա-

ւոր աւերակներն են այժմ մնում: Այ-  
րի վանք կամ Գեղարդ, Հաւուց  
Թառ կամ Հայոց Թառ վանք:

18) ՎԱՐԱԺՆՈՒՆԻՔ, վերջին դա-  
րերում Ծաղկունիք կամ Ծաղկու-  
նեաց Զոր, այժմ Դարաշիշագ:  
Ծաղկուն գիւղ:

19) ՈՍՏԱՆՆ ԴՈՒԻՆ (այժմ Գառ-  
նի-Բասար): Քաղաքական կենտրոն  
հայոց թագաւորութեան սկսուելուց ի  
վեր: Արտաշատ, ըստ յոյն մատե-  
նագիրների Արտաքսիատա, հռչա-  
կաւոր մայրաքաղաք, որին Ստրաբոնը  
տալիս է «մեծ և գեղեցիկ» անուննե-  
